



Յ Ե Գ Կ Ը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Մ. ԻՇԵԱՆ Բահաստեղծարիւններ
- 9.- Յ. ԿԱՌԱՊԵՆՑ Աշնանային արձակուրդ
- 20.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ հորշակէն ետք
- 22.- Ս. ՓԱՆՈՍԵԱՆ Պազտոյեմց հարսը
- 32.- Ա. ՃԻԻՂԵԱՆ Դամբանական
աչքերուդ վրայ կը գրեմ
- 35.- Ն. ԲԻՐԶԱՆԴԱՅԻ Առաջին ժամանակ
- 41.- Փ. ՎԱԼԷՐԻ Ամիինն — *Քնարախաղ*
(Թարգմ. Շ. Պերպլեբեան)
- 49.- » » Պատմութիւն ամփոռնի
- 55.- Ա. ՊԱՆՈՋԵԱՆ Պիլ եւ վասիլ
— պատմութիւնը երկու հայերու
- 65.- Լ. ՄԿՐՏՉԵԱՆ Գրաբնութեան խորհրդային համակարգը
- 75.- * * * Մեր կոլխոզական կամաչ արտերում...
- 78.- * * * Մշակութային լուրեր

Բազմ

ԱՐՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՍ. ԵՍՐԻ. ԻՒՒՑ. ՄԱՐՑ. 1996. ԳԼՅՐԱԻՐ

Մ. ԻՇԽԱՆ

Հետագայ գերթումները անուամ են Մ. Իշխանի նոր գործին, որ է ծառայ Հրապարակ կ'ըլի՝ «Արևածաղիկ» խորհրդով:

Մ. Իշխան բանաստեղծություններ սկսում էր գրական առարկայի, բայց Հետագային ընդարձակից էր շարունակում ծիրը ու պատկանելի վաստակ էր կուտակել նաև վիպական, թատերական, յուզադրական ու Հրապարակագրական մարզերում մէջ:


Այսուհանդերձ, անուամի բանաստեղծը բաց մղել էր ինքն և ասանիմ գերթումներով թէ նորանոր հասարակելով կզու մնայուն ներկայություններ մը չի թողնական կայուններ մէջ:

«Արևածաղիկ» ժամանակի հոգեբան ու տարածության կլափն նետուած հայ մարդուն կենսագրության զանազան երևաններուն զարնուց կրգ է և մասով մասուն անմահան ապրումներու, որոնք թափանան են Մ. Իշխանին կրքի շարունակում անկեղծութեամբ:



ՕՏԱՐ ԱՇԽԱՐՀԻ ԿՈՌԻՆԿԻՆ

Ծովերով անդին, սարերով անդին,
Այս նոր աշխարհին
Երկինքէն չուող կողունի սիրական,
Ինչպէ՞ս իմ հոգիս



100 24 970

digitised by A.R.A.R.®

Քեզ կանչէ այսօր եւ հայրենական
 Ողջոյնով բարի հարց տայ անձկալի՜
 «Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս»:
 Հայոց աշխարհի կռունկը չես դուն,
 Ան մնաց հեռուն,
 Եօթը ծով անդին, եօթը սար անդին,
 Իբրեւ առասպել, իբրեւ յուշ անգին...
 Կռունկ, չես հասնիր հայոց լեռներուն:
 Օ՛ր, ես լաւ գիտեմ թէ ուստի՛ կու գաս
 Եւ ո՛ր կ'երթաս դուն...
 Կը բերես ժպիտ, կը տանիս գարուն
 Այս խորթ աշխարհի դաշտերուն անհուն...
 Քու խոնջ թեւերուն դուն չունիս բնաւ
 Ո՛չ կարօտ, ո՛չ ցաւ:
 Կտուցդ ծարաւ
 Չէ ճանչցած երբեք հայոց աշխարհի
 Աղբերակներուն
 Ջուրը սառնորակ.
 Դո՛ւն, օտար կռունկ,
 Անդորրութեան մէջ իրիկնապահի
 Արեւոտ կեանքի ծարաւով անյագ,
 Երբ կ'անցնիս կախարդ տեսիլքի մը պէս,

Ինչպէ՞ս իմ հոգիս ձայն տայ հիմա քեզ՝
 «Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս»:
 Դուն ո՛չ մէկ խապրիկ ունիս ինձ տալիք,
 Ո՛չ մէկ աւետիս ունիս տանելիք.
 Այս նոր աշխարհի ցուրտ երկինքին տակ
 Կռունկ ի՞նչ լեզուով խօսիմ քեզի հետ,
 Կեցած միս - մի՛նակ,
 Որո՞ւն ես դրկեմ սրտակէզ բարեւ.
 Չայնիկդ ի հոգիս
 Կը բերէ կարծես քիչ մը տաք արեւ,
 Սակայն դուն կ'անցնիս,
 Կ'երթաս անտարբեր.
 Կռունկ, ես գիտեմ, դուն պիս չես յիշեր,
 Դուն պիս չես ճանչնար,
 Օտար ենք իրար, անխօս, անբարբառ...

Բայց ինչո՞ւ այսպէս կը քաղուի հոգիս,
 Երբ քեզ թեւաբաց տեսնեմ իմ վերեւ...
 Կռունկ, քու առջեւ
 Բաց են երկինքի ճամբաներն անձիր,
 Կռունկ, մի՛ մնար, զնա՛, հեռացիր...

28 Մարտ 1982

Կ Ա Ր Ո Ւ Չ Կ Ա Ր

Կար ու չկար,
 Բյուրի փեշին, ծառերուն տակ
 Հայրենական հին գիւղ մը կար,
 Հին վանք մը կար եւ սուրբ խաչքար.
 Հիմա ժխոր եւ էյֆելի աշտարակ,
 Ամբոխի վազք հեւասպառ
 Եւ կուրցնող լուսարձակ...

Կար ու չկար,
 Տնակ մը կար հանդարտիկ,
 Թոնրի կրակ եւ երդի ծուխ կապուտակ,
 Հիմա շէնքեր ամբարձիկ,
 Քառասուն պալատ տակէ տակ
 Եւ քառասուն սուտ տաճար...

Կար ու չկար,
 Արօր մը կար, ոսկի դաշտ,
 Աշխատանքի անուշ տաղ,
 Եզ ու մշակ իրարու հետ յաւէտ հաշտ,
 Կար սրտի կանչ, սրտի խաղ.
 Հիմա ճոխնչ, հիմա կոխնչ երկաթի,
 Հրաբորբոք մեքենայ,
 Որ ռումբի պէս գլխուդ վերեւ կը պայթի,
 Կամ կը ճզմէ անխնայ...

Կար ու չկար,
 Մանչուկ մը կար հայրորդի,
 Կար վարժատուն մը խոնարհ,
 Ուր կը հնչէր լեզուն Սահակ-Մեսրոպի-
 Հիմա օտար այբուբեն
 Եւ մանուկներ վաղ կտրուած մօր կաթէն-
 Հիմա ԼԻՍԱՆՍ, ՓԻԷՅՉՏԻ...

10 Ապրիլ 1982

Ծ Ա Ռ Ծ Ի Ր Ա Ն Ի

Ես ծառ մըն եմ ծիրանի,
 Հին արմատ եմ անուանի...

ԱՇՈՒՂ ԶԻՐԱՆԻ

Դուն տարատունկ հայրենի ծառ ծիրանի,
 Քեզ կը գտնեմ ամէնուր,
 Քեզ կը ճանչնամ պարտէզին մէջ օտարի,
 Իբրեւ իմ անձս տխուր...

Քու բունիդ քով եւ ճիւղերուդ տակ բեզուն
 Աչքս բացի ու մեծցայ-
 Նոյնն ես կարծես, կանգնած հողին մէջ հայուն,
 Նոյնն է բունդ ալ հնամեայ...

Հով մը սակայն կը սարսէ քեզ անդադար,
 Ճիւղերդ իրար կը բախին
 Եւ ճիւղերէդ ջարդուկոտոր կ'իյնան վար
 Քու նոր ոստերդ նրբին...

Ծաղիկներուդ եւ միրգերուդ քաղցրահամ
 Կ'երկարեմ ձեռքս դողով-
 Անոնք, աւա՛ղ, ոչ ծաղիկ են, ոչ ծիրան
 Նախկին հոտով ու համով...

Ո՞ր անողոք ձեռքն էր որ քեզ արիւնեց,
 Տուաւ պատուաստն ուրիշին,
 Քու հարապատ պտուղդ ըրաւ վայրի դեղձ
 Եւ անծանօթ՝ արմատին...

9 Ապրիլ 1982

digitised by A.R.A.R.@

Ի Մ Ե Ր Գ Ս

Իմ երգս երգ չէ, այլ ճիչ մը ցաւի,
 Որ միշտ կ'արիւնի
 Կուրծքիս տակ թաքուն,
 Երբ դէմքիս վրայ ժպիտ կայ ծաղկուն...

Իմ երթս երթ չէ, այլ նահանջ բիւրոց
 Եւ սուգ մեռելոց.
 Իմ ճամբուս վրայ
 Մեռած երապի արցունք կը տեղայ...

Իմ դարձս դարձ չէ, այլ անվերջ մեկնում,
 Անվերջ որոնում.
 Ո՞ր գտնէ հոգիս
 Հարապատ երդի խանդակաթ հանգիստ...

Իմ սէրս սէր չէ, այլ այրող կարօտ,
 Վշտալի աղօթք
 Վասն մոլորուն
 Եւ խորշակահար իմ գաւակներուն...

25 Յունուար 1984

Ա Յ Ս Տ Ղ Ա Ն Ա Ն Շ Ո Ւ Ք

Այս տղան անշուք, այս տղան խոնարհ,
 Որ պիտի հերկէր
 Իր պապենական հողը բարեբեր,
 Չունեցաւ ո՛չ հող, ո՛չ այգի, ո՛չ ծառ
 Ու մնաց անտէր
 Խղճին դէմ մեռած աշխարհին օտար:

Այս տղան բարի, այս տղան արի,
 Որ պիտի շինէր
 Տուն ու տաճարներ,
 Իր պապերուն պէս՝ սիրահար քարի,
 Մնաց միշտ կարօտ քաղցր բարբառի.
 Խլեցին ձեռքէն բնիկն իր աներ,
 Որ միշտ թափառի...

Այս տղան շէնշող, այս տղան պայծառ,
 Որ պիտի սիրէր
 Մարդն իբրեւ եղբայր,
 Մարդերէն խոցուած, մինակ, անընկեր,
 Ի գուր որոնեց իր անձը մուլար...
 Եւ յանկարծ դարձաւ հրեղէն կայրոյթ,
 Ռումբ կործանարար
 Եւ բռունցք անզուր,
 Այս տղան անշուք
 Դարձաւ ողջակէպ, ճարձատող խարոյկ,
 Սրբազան խենթի գրոհ խելագար
 Խղճին դէմ մեռած աշխարհին օտար...

28 Յունուար 1984

Ի Ն 2 Ո՞ Ի

Տառերը թերթին ինչո՞ւ մանրացան,
 Ինչո՞ւ բարձրացաւ վերելքը ճամբուն.
 Չայները շուրջիս այնքան խուլ դարձան,
 Որ վախճամ տիրէ միայն լռութիւն:

Արեգակն ինչո՞ւ այսպէս հիւծեցաւ,
 Ինչո՞ւ թօշնեցաւ ժպիտը զարնան.
 Ջուարթ տաղերէն կը կաթի սուր ցաւ,
 Ջեմփիւններն անգամ ցուրտ քամի դարձան:

Ինչո՞ւ կարծրացան բարձերս փափուկ,
 Ինչո՞ւ մահիձս կը կանչէ գիս տուն.
 Կուպեմ աչքս խուփ ննջել կամացուկ,
 Բայց գիշերն ի բուն կը մնամ արթուն:

Դեռատի կանայք ինչո՞ւ չեն շիկնիր,
 Երբ որ կը նային աչքերուս տենդոտ.
 Դեռատի տղաք ինչո՞ւ յարգալիր
 Եւ սակաւախօս կը մնան իմ մօտ...

25 ՄԱՅԻՍ 1982

digitised by A.R.A.R.@

Գ Ա Ր Ո Ւ Ն Ե Կ Ա Ի

Կեանքը զարնան հետ այնքա՛ն յորդեցաւ,
Ծաղկեցաւ նորէն,
Որ ոչ մէկ տկար ծիլ լուսածարաւ
Կը վախնայ մահէն:

Այնքան լոյս բերաւ այքերուս աղօտ
Գարունը նորէն,
Որ մայրամուտի տեղ նոր առաւօտ
Կը ծագի սարէն...

Եւ սիրոյ այնքա՛ն կրակներ վառեց
Կուրծքիս տակ նորէն,
Որ կրնամ գրկել ես փոքրիկ ու մեծ
Մարդ էակ ամէն:

Գարունը եկաւ եւ իմ ականջին
Փսիսաց նորէն
Թէ ունայնութեան փոսեր կը ծաղկին
Իր մէկ հպումէն...

Հոգիս զարնան հետ այնքա՛ն թարմացաւ
Ու ծնաւ նորէն,
Որ կարծես միշտ կամ ու կ'ապրիմ անցաւ
Ես յաւերժօրէն...

18 Ապրիլ 1982

Ի՞Ն ՉՊԷՍ ՏԱՆԻՄ

Երբեմն ինձի կը թուի թէ ըսած եմ ամէն բան,
Այ ըսելիք չմնաց.
Եւ թէ կրնամ ես մեկնիլ դէպի գալիքը մահուան՝
Պարտքս լրիւ կատարած:

Բայց երբ տեսնեմ նշենիւն եւ ծաղիկները գարնան,
Տեսնեմ մարգերը կանանչ,
Կը զգամ որ դեռ սրտիս մէջ շատ երգեր կան դիւթական,
Հապար նուագ, հապար կանչ...

Ես քանի՛ հեղ, քանի՛ տեղ պատմած եմ սէր ու հեքիաթ
Մարդոց համար անարեգ,
Բայց ամէն նոր ժպիտի եւ նայուածքի դէմ կախարդ
Կ'ըլլայ հոգիս նոր սիրերգ...

Ես դեռ գանձ եմ անսպառ, ես դեռ հանք եմ անծանօթ
Արեգակի լոյսին տակ,
Ի՞նչպէս տանիմ ինձի հետ այսքան պայծառ առաւօտ՝
Անդունդներուն անյատակ...

11 Ապրիլ 1982

Ս. ԻՇԽԱՆ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Յ

ԱԾՆԱՆԱՑԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ

Հերան կոյր չէր, տեսնում էր, թէ ինչպէս օրերը գնալով դժգունում էին: Եղ, սուրճ ուզում էս, դրեթէ բղաւեց Հերան խոհանոցից՝ իր համար մի գաւաթ լցնելով: Էլը առանց դիրքը փոխելու, նոյնպէս բղաւեց: Նախընտրում էմ դարեջուր: Հետուստացոյցը թնդում էր սենեակի անկիւնից: Լուսապատտառի վրայ ինչ-որ հասարակածային մի ծովախորշ էր, կիսամերկ մի հուժկու երիտասարդ երկար համրուրում էր նոյնպէս կիսամերկ մի գեղեցկուհու, սպիտակ աւազի վրայ: Եղը երկարել էր իր բազկաթոսի վրայ՝ ոտքերը սրճասեղանին դրած, ձեռքերը՝ փորին: Գերասանները շատ չէին խօսում: Երաժշտութիւնը փորձում էր ներկայացնել նրանց սէրը: Հերան ներս մտաւ սենեակ, մի ձեռքում սուրճի գաւաթը, միւսում՝ զարեջրի շիշը: Հերան դարեջուրը իդին սուրճ, էլը շիշը բերանը տարաւ, մի կում խմեց, շիշը փորին դրեց: Հերան նստեց իր բազկաթոսին, սրունքը սրունքի վրայ դրեց, փորձեց սուրճը, շատ տաք էր, սրճասեղանին դրաւ: Հերան ջանաց ամուսնու հայեացքը գանել, չկարողացաւ: Այդպէս էր դարձել իդը: Գործարանից գալիս, լուսնում էր ձեռքերը, մի շիշ զարեջուր վերցնում սանարանից, փուրում բազկաթոսին ու հայեացքը յարում հետուստացոյցին: Ամառը զօճէ կար պարտէզը: Միասին բաներ էին տնկում պարտէզում, երբեմն նոյն թուփը տեղից տեղ փոխադրում: Հիմա, որ աշուն է, դրոսում անելիք չկար:

Հերան աջ ձեռքի մէջ առաւ դէմքին թափուած շէկ մազերի խուրճը, յետ շարժեց ուսին, գլուխը թեթեւ թափահարեց, սկսեց խմել իր սուրճը: Նա ծուածէւ դէմք ունէր, մանկական բերան, սակաւին թարմ, շնայած որ մօտենում էր քառասունին: Նա ինքն էլ չիմացաւ ինչու փոխեց դիրքը, ծաւեց ծունկը, ցուցադրելով իր հիւթեղ բումբը: Եղը գոցել էր աչքերը մինչև որ հետուստացոյցի վրայ հրացանաձողութիւն սկսուեց: Մի խումբ ծովաճէջներ արշաւում էին ծովախորշի վրայ: Եղը ուղեց կողմնորոշուել, սակայն առաջին խօսողը եղաւ Հերան: Հերան ասաց: Եղ, արի մի շարաթով արձակուրդի գնանք, Գործարանը քեզ մէկ շարաթուայ արձակուրդ ունի պարտական: Փոփոխութիւնը լաւ կը լինի: Բայց զո՞րճը, ասաց իդը, չեմ ուզում զործից բացակայել: Գործը միտ կայ, ասաց Հերան: Այս աարի մենք բան չհասկացանք: Եղը զարեջրի շիշը բերանին տարաւ, մի քանի ուժայ խմեց, գլուխը յետ հրեց, բերանը բացեց, աղմուկով զրոտաց: Հերանի ուշադրութիւնը սակայն իդի երկայն իրանի վրայ էր: Կապոյտ տարատի մէջ նրա սրունքները

աւելի էին երկարել: Ճիշդ է, որ նրա գօտկատեղը մի քիչ լայնացել էր, սակայն նոյն էրն է, մարդիկի պէս ճկուն: Եթէ այդքան դարեջուր չիմի, կարող է նոյնիսկ Օլիմպիկին մասնակցել: Սակայն ո՛ւր, ասաց էղը: Ո՞վ է լսել արձակուրդ աշնանը: Հարուստներն են, որ աշնանը արձակուրդի են գնում հարաւային կղզիներ: Մենք միջոցներ չունենք: Գնանք Քէյփ Քաղ, Ծալմութ: Ասաց Հերան: Զելսիից միայն երկու ժամուայ ճանապարհ է: Եթ մի տեղ կարողացել եմ, որ Սեպտեմբերին Ծալմութում եղանակը տակաւին նպաստուոր է: Արեւ ու ամայի ծովափ: Ամէն մարդ վերադարձել է քաղաք:

Էղն ասաց, թէ այդ մասին պիտի մտածի: Կայ նաև գործի հարցը: Անհրաժեշտ է խօսել վերակացորի հետ: Հերան քաշուեց խոհանոց, սկսեց ընթրիքի պատրաստութիւն տեսնել: Երբեմն նրա հայեացքը պատուհանից ընկնում էր դուրս, ուր ծառերի վրայ տերեւները դեղնել էին: Զաւակները հեռացել էին: Զուլին համայարան՝ Բոստոնում, իսկ Մարթան, փոքրը, աշխատում էր Նիւ Եորքում: Ազում էր դերասանուհի դառնալ, Ծարաթը մի անգամ նամակ էր դրում ազլիկներին, վերջացնելով՝ «Համբոյր, համբոյր, համբոյր»: Ժամանակին Զելսիի իրենց տան մէջ երջանկութիւն կար: Ազլիկների խինդը լեցնում էր տունը: Հիմա, որ նրանք գնացել են, կարծես դատարկուել է տունը: Սակայն այդ չէ, ամբողջութիւնը այդ չէ: Իրենք են՝ ինքն ու էղը: Քսան տարուայ ամուսնական կեանքից յետոյ, ամէն ինչ փոխուել է: Ամէն ինչ դարձել է սովորութիւն: Հիմա մտնում են անկողին եւ մուտքի մէջ առաստաղին նայում: Երբեմն Հերան իրեն շատ մենակ է զգում: Վազում է լուացարան եւ մեկուտ արտասուում:

Հերան միս ասպակեց, դեռնախնձոր խաշեց, սոխ ջարդեց, խոռնեց դեռնախնձորին, աղցան պատրաստեց, մի բաժակ կաթ լցրեց իր համար, մի շիշ գարեջուր էղի համար, բերեց, դրեց ճաշասեղանին: Էղը դժկամութեամբ հրաժարուեց իր բազկաթոռից: Ընթրիքի ընթացքում հեռուստացոյցը շարունակում էր աշմուկը: Սկսուել էր լրատուական ժամը: Արկած այսօտե՛ղ, արկած այնտե՛ղ: Սպանութիւն Նիւ Եորքում: Բոստոնում մի ամբողջ շէնք հրոյ ճարակ է դարձել: Հեղեղ Ալարամայում: Օհայոյում մի քարածխահանք է փլել, 42 հանքափորներ թաղուել են փլատակների տակ: Հեռուստացոյցի տուփը աշխարհը կապել էր Զելսիին: Աշխարհի ողբը թափուել էր Զելսիի գլխին: Ազմուկը լցրել էր միջոցը, Եթէ դադարէր, ի՞նչ պիտի լինէր: Էղի մազերը անժամանակ թափուել էին: Ճաղատ չէր, սակայն ճակատը բացուել էր, երբ փաստօրէն 42 տարեկան էր: Այդուհանդերձ բաց սրճագոյն շապիկի տակ ուրուսպծուել էին նրա յաղթ թիկունքի գծերը: Աւելի քան քսան տարի էր, որ գործարանում պողպատ էր ծռում: Միսը կաշու պէս կարծր է, ասաց էղը, պնակը ղէն հրելով: Հերան կուսեց, որ էղը տեսարան է սարքում: Զպատասխանեց: Փոխարէն խոհանոց գնաց, կեռասի կարկանդակ բերեց: Էղը շնկատեց, որ Հերան իր նախընտրած դեղին չրջագոլեստն էր հարկել: Ժամանակին երբ Հերան իր մօտից անցնէր, կ'առնէր նրա երկայն, մեասաքսեայ ծամերը, ղլուխը կը թաղէր ծամերի մէջ: Այդ օրերին նա կ'ասէր: Դու աշխարհի ամենացանկալի կիներն ես: Այդպիսի բաներ կ'ասէր:

Էղ, ասաց Հերան, ի՞նչ նոր բան ես տեսնում:
 Էլի գնացել նոր բա՛ն ես առել, ասաց էղը, քեզ հազար անգամ ասել եմ, որ խնայողարար վարուէր դրամի հետ: Ահագին ծախսեր ունենեք:

Ո՛չ, այդ չէ: Նորութիւն էլ չէ: Ասաց Հերան:

Հապա ի՞նչ է, ասաց էղը՝ հայեացքը մէկ Հերային, մէկ սննակի շուրջը նետելով:

Ձե՛ս տեսնում: Քո սիրած չրջագոլեստն եմ հագել: Ասաց Հերան:

Ա՛հ, ի հարկէ տեսնում եմ, ասաց էղը, փորձեց ժպտալ, ապա աչքերը վար էլեցրեց յանցաւորի պէս :

Ես ուզում եմ, որ դու ինձ սիրես առաջուայ պէս, ասաց Հերան, Այդ էլ խօսք եղաւ, ասաց էղը, ի հարկէ սիրում եմ : Պայման է, որ ամէն օր հրապարակային յայտարարութիւն անեմ :

Դու ինձ չես հասկանում, ասաց Հերան, յուզուած լուացարան դնաց : Ինքը չէ, տո՛ւնն է, մտածեց էղը, այս տունը, որ կապարի պէս նըստել է շնչիս : Նա ակամայից իր շուրջը նայեց : Նո՛յն կահաւորանքը, որ զննել էին քսան տարի առաջ, նո՛յն յոգեած դիւանը իր կեղծ Փրանսիական ոճով, նոյն գունաթափուած վարագոյրները, նոյն մաշուած սենեակները, ամէն ինչ երկրորդական, յանցաւորը ի՛նքն է, որ նստել է Ձեւի ու տեղից չի շարժուում : Զիշդ է Հերան, ես այնչառ ոչինչ չեմ տեսնում :

Յաջորդ օրերին Հերան այնքան թախանձեց, որ էղը տեղի տուեց : Երկուշաբթի վաղ առաւօտեան ճամբայ ընկան : Օրը դորշ էր : Բոստոնի շրջակայքից հասնել էին դուրս եկել, երբ տեղատարափ անձրեւի բռնուեցին : Երկինքը կարծես պատուել է աշխարհի բոլոր դէտերը ինքնաշարժի վրայ էին թափուում : Էղը մեքենան կառուցու զղանցքին մտնեցրեց : Բացարձակ խնթութիւն է, ասաց էղը, ձմրան կէսին ո՞վ է արձակուրդի դնում : Երէկ զիշեր ես հեռաձայնեցի Պարմութ, ասացին, որ պայծառ եղանակ են սկսնկալում ամբողջ շաբաթը, ասաց Հերան իր լայնեզր խոփէ զլիարկի տակից : Պարմութը թող դժուրի՛ր բաժին լինի, ասաց էղը՝ ծամելով իր վերէ շաբթը : Ո՛ր մնաց ըս արկածախնդիր ոգին : Ասաց Հերան : Նա իր ձախ ձեռքը էղի ծունկին դրեց : Եւ յիշուի, անձրեւը յանկարծ վերջ դառաւ այնպէս՝ ինչպէս սկսել էր : Ետունակեցին ճամբան : Հետզհետէ դորշ ամպերը հեռացան, սպիտակ ամպեր դոյացան : Նրանք էլ շուտով ի սպառ չափացան : Արեւը դուրս եկաւ, երբ նրանք հասան Պարմութ՝ Բէյի Բազ թերակղզու հարաւային ափին :

Հերան ուղեցոյցի դեր կատարեց : Նախորդ դիշեր նա հեռախօսով կապուել էր պանդոկի տնօրէնութեան հետ եւ իր գրքոյկի մէջ մանրամասն նշել ուղղութիւնը : Ձախ, աջ, աջ, ձախ, հինգ մղոն հարաւ, երեք մղոն արեւելք, քաղաքամիջին, ճկարմիր ցուլ՝ ճաշարանը անցնելուն պէս ըսնել Նեպտուն ծառուղին, որը եօթը մղոնից կը միանայ ծովեզերեայ ճեմուղուն : Հետուից արդէն երեւում էր պանդոկը, սպիտակ ու հիւրընկալ : Ասացի, չէ՞, որ արեւ պիտի լինի : Ասաց Հերան, կրկին ձեռքը դրեց ամուսնու սրունքին : Մօպը կապոյտ էր, աւազը՝ դեղին :

Լաւ է, որ այցելուներ շատ չկային : Հերան ընտրեց ծովահայեաց մի սենեակ, որը ուղղակի ծովափի վրայ էր, արդի կահաւորում, առխտակեայ պատշգամբ, շուրջը վայրի վարդի թփեր : Եւ այդ բոլորը երեսուն տոկոսի գեղչով : Որ քեզ ասում եմ ես ուղղակի հանճար եմ, չես հաւատում : Ասաց Հերան : Էղը ճամպուրակները ներս տարաւ : Հերան տասը բոպէում ամէն ինչ դասաւորեց, տէր կանգնեց կացութեանը՝ իր ներկայութեամբ լցնելով սենեակը : Արդէն մի քիչ մտել կին էր : Երբ լողի հագուստը հագաւ, աւելի շեշտակի դարձան իր մարմնի գծերը : Էղն ու Հերան վազեցին դէպի աւազը : Առաջին անգամը լինելով Հերան ժպիտ սետաւ էղի դէմքին : Հերան վարդապետ էր : Էղի մարմինը այնքան գունատ էր, որ կարծես նոր էր դուրս եկել հիւանդանոցից : Քայլեցին ծովափում : Մոպսիլը գրեթէ ամայի էր : Մի քանի տասնեակ այցելուներ կային այս ու այն կողմ թառած : Միայն մանուկներն էին լողանում : Արեւապաշտների մեծ մասը տարեց զոյգեր էին՝ միմեանցից անբաժան :

Երեկոյեան, նրանք փոխեցին իրենց հագուստները, դուրս ելան: Քաղաքում, նախ մտան մի ըմպելարան: Հերան Բլադի Մէրի պատուիրոց, էղը՝ չոր սքալ: Ապա գնացին ճաշարան, խեցգետին կերան, խեցգետինից յետոյ մի հին շարժանկար տեսան մի արդի սրահում: Ամէն օր այդպէս արեցին: Հետզհետէ գտան թաքուն անկիւններ, թաքուն ճաշարաններ, նոր ծովախորշեր յայտնարեցին, Փրանսիական մի հացթխարան գտան, պէս-պէս խմորեղէն: Պորտուգալացի ձկնորսների հանդիպեցին:

էղը շրջուցեց: Մտել էր իր պատեանը՝ դուրս չգալու որոշումով: Էդ, ասաց Հերան, վաղը զբօսանաւով Մարթագ Վիննըրդ կղզին գընանք:

Տրամադրութիւն չունեմ: Ասաց էղը: Յաջորդ օրը շերտաստիճանը բարձրացաւ: Փարէնհայթով 77 աստիճան է Հերան որոշեց ծովը մտնել:

էղը արեւի ակնոցները դրեց աչքերին, տարածուեց փայտէ բազկաթոռին վրայ, դարեմը շիջեց կողքին: Նա չիմացաւ ինչպէս դիմացում, իրենից մօտ քան որք հեռաւորութեան վրայ տեսիլքի պէս մի բան գոյացաւ: Մի բարձրահասակ կէն՝ սեւ լողաղբեստով եւ մինչեւ կոնքերը հասնող սեւ վարսերով, մի պահ յետ դարձաւ, նայեց իրեն, տրտում ժպտաց ու հեռացաւ: Էղը հայեացքով հետեւեց կնոջը, որք քայլեց ծովեզրեայ ջրի միջով, ա՛յնքան՝ որ դարձաւ մի պուտ: Ալիքը եկել, շառաչել, վերադարձել էր, երբ էղը վար դրեց դարեմը շիջել, քայլեց կնոջ ուղղութեամբ: Քայլեց մի քանի մղոն, կնոջ հետքը չգտաւ: Վերադարձաւ:

էդ, ո՛ւր էիր, ասաց Հերան, քեզ փնտոցի, փնտոցի, չգտայ: Գնացել էի պտույտի: Ասաց էղը ու տեսաւ Հերայի ծծերի ծիփանքը: Մովի կաթիլները տակաւին նստել էին նրա յուզողտ լանջին: Զուրը գաղջ է, ասաց Հերան, արի միտսին լողանք: Վաղը, ասաց էղը, լսելով նրա վարսերի երգը: Այնուհետեւ նրանք նստեցին տաք աւազին: Հերան պատկեց եւրօսի վրայ: Էղը աւազով բուրդ կառուցեց, ապա մի այլ բուրդ, յետոյ դէմքը դարձրեց հեռունը:

Գիտե՞ս, Հերա, ասաց էղը, այստեղ ինձ խորթ եմ զգում: Ինչո՞ւ, ասաց Հերան:

Ինձ թուում է, թէ ես այստեղին չեմ պատկանում, որ այս բուրդը ուրիշների համար է: Ես բանուոր մարդ: Մովոր չեմ անգործութեան: Յանցաւոր եմ զգում, որ գործարանում չեմ: Ասաց էղը:

Բայց քո իրաւունքն է, ասաց Հերան, դու վաստակել ես քո արձակուրդը: Երբեմն ինձ թուում է, թէ դու ինձ հետ չես ամուսնացել, այլ՝ գործարանի հետ: Մոտացի՛ր գործը եւ վայելի՛ր ազատութիւնդ:

Դու գիտես, որ սխալ ես, ասաց էղը, դու գիտես, որ իմ աշխարհը գու ես, աղջիկներն ու տուներ:

Բայց քո այդ աշխարհում ես ինձ բացակայ եմ զգում: Ասաց Հերան: Էղը ձեռքը դրաւ Հերայի թաց մազերին, շոյեց: Հերան նրա ձեռքն առաւ, համբուրեց, տարաւ, սեղմեց իր կրծքերին:

Այդ գիւեր տաք քամիները Մեքսիկեան ծոցից եկել, խուժել էին Ֆարմաթի ծոցը: Էղը պատուհանները լայն բացեց: Բացեց նաեւ թանձր վարսագոյրները: Մովը մօտեցաւ, մտաւ սենեակ: Ընթրիքից յետոյ պանդոկ վերադարձան, նստեցին հեռուստացոյց դիտեցին: Հերան սիրում էր վիպական նիւթեր, սակայն անխոս ընդառաջելով էղի նախասիրութեանը, ինքն էլ ուշադրութեամբ հետեւեց ըմբշամարտի մրցութեանը: Մի յոյն նպարամանու-

ռից տանն, գեղն ու խաղող էին գնել: Հերան լուսաց պտուղը, դրեց մատուցասեղանի վրայ: Էդը կառչել էր իր գարեջրի շինն:

Դեռ մէկ օր չկայ, ասաց Հերան, դու արդէն այրուել ես:

Անկողնում սաւանը մաքուր պաղ էր: Էդը սիրեց սաւանի մաքուր պաղութունը: Իդի սրունքը դիպաւ Հերայի սրունքին: Էդ, ասաց Հերան, ուզում եմ լեցուել քեզանով: Էդը դրկեց Հերայի գլուխը: Հերայի ձայնը արձագանդեց իր մարմնի ամենամթին անձաններում: Մի պահ աչքերը փակեց: Աւաղի մէջ տեսաւ սեւահեր կնոջը: Կինը ժպտաց ու դարձաւ պուտ: Էդը դէն նեակեց վերմակը, ծառայաւ Հերայի առջեւ: Հերայի ձայնը այնքան մօտ էր, այնքան հեռու:

Առաւօտեան, նախաճաշից յետոյ Էդը հապաւ լողի իր կարծիր անդրափարտիքը: Կէսօրին ծով մտան: Հերայի աչքին Էդը Ապողոն էր դարձել: Անկուշտ հետեւում էր նրան: Էդը ձեռքով հարուածում էր ջուրը, ջուր ցանում Հերայի վրայ: Հերան ճշում էր ու խնթորէն ծիծաղում: Հերան յաւերժաւարս չէր, որովհետեւ աղի ջուր էր կուլ տուել եւ հիմա յափազանցուած իրարանցում էր ստեղծել՝ չտեսնուած ծամածռութիւններ անելով: Երբ ամէն ինչ հանդարտուեց, դուրս ելան ծովից, մտան աւաղի մէջ: Էդը բռնեց Հերայի ձեռքը:

Հերան երկարեց աւաղի վրայ, աչքերը փակեց ու քնեց: Էդը արմուկի վրայ կոթնած պսպղուն ծովածոցը դիտեց: Մի զրօսանաւ հետզհետէ հեռանում էր դէպի դիմացի կղզին: Մի քանի ծովածայեր հետեւում էին նաւին: Նաւի վրայ գոյնզգոյն հագուածներով ճամբորդներ կային: Զարկ կողմում, ափից ծովը երկարող քարէ ամբարտակի վրայ միջնահասակ մի մարդ կարթը ջուրը նետեց, արձանացել էր: Նրա ճաղատ գլուխը փայլում էր արեւի տակ: Երէկուայ տարեց զոյգը այսօր փոխել էր իր տեղը: Մարդկային կղզեակներ կային այս ու այն կողմ կէտկիտուած: Մի մանուկ իր մօրը թաղում էր աւաղի մէջ: Մի պատանի, ինքն իր դէմ ժրջութեան ելած՝ վաղում էր ծովափի երկայնքով: Նրա շունը մերթ ընդ մերթ ծովն էր մտնում, մի քանի կանգուն լողում, ապա հասնում տիրոջը: Զելսին այնքան հեռու էր: Զելսին նստել էր զորջ միտպազաղութեան մէջ: Զելսին մենակ էր: Էդը տեսաւ սեւահեր կնոջը: Կինը քայլեց դէպի ծով, կանգնեց ափին, ջրի մէջ: Կնոջ ոտքերի տակ ծովը ծոխրագոյն էր, հեազհեաէ մոխրագոյնը փոխում էր երկնագոյնի, ապա յանկարծ սկսում էր մուգ կապոյտը՝ հասնելով հորիզոնին: Այսօր կինը կարմիր ժպտաւէն էր կապել մազերին, զսպելով նրանց դահալէժ ալիքը: Կինը պրեթէ մերկ էր: Լողի ետանկիւնի սեւ կտաւը աւելի շեշտում էր նրա մարմնի անսպասելի սպիտակութիւնը: Նա այնքան նման էր գործարանի պատին գոմուած օրացոյցի մերկ նկարին: Կինը շարունակ հեռուն էր նայում: Ինչո՞ւ ես մարդիկ շարունակ հեռուն նայում: Կինը շուտ եկաւ: Էդը տեսաւ նրա աչքերի կանայք: Կինը թեթեւ ժպտաց, նոյն տխուր ժպտը: Հերան փոխեց իր դիրքը, ինչ-որ բաներ մրմնջաց: Սեւաթուր կինը հեռացաւ, այս անգամ թեք ուղղութեամբ: Էդը հայեացքով հետեւեց նրան: Կինը կտրեց ճամբան, մօտեցաւ մօտակայ պանդոկին, որի ճակատին գրուած էր «Զորս եղանակներ»: Կինը մէկ անգամ յետ նայեց, կորաւ մուտքի մթութեան մէջ:

Դիմացի կղզին գնանք, պնդեց Հերան, շատ եմ լսել Մարթազ վիճեբրդի մասին, գնանք տեսնենք ինչ կայ: Կղզին կղզի է, էլի՞: Ասաց Էդը: Մէկ ժամից զրօսանաւով հասան կղզին: Նաւահանգիստ չի կարելի տեսլ: Նաւամատոյց էր: Նաւամատոյցը գտնուում էր Օք Բլաֆս աւանի եզրին: Եղանջեղածը մի քանի խանութներ էին, գիւղական աներ եւ ամառային գուարճատեղիներ, որոնք փակուած էին: Մարդապուրի երկու դուրս վճարեցին:

բարձրացան հին, գեղին մի Հանրակառք ու տասը բողոքից հասան իրգարթաուն: Նոյնն էլ այտեղ: Արհեստական աշխուժ ստեղծելու համար դէս ու գէն տնկուած ճաշարաններ, սրճարաններ, յուշանուէրի խանութներ, երկու եկեղեցի եւ ուշացած այցելուներ, որոնք ջանում էին կեանքից յափշտակել այն, ինչ չէին կարողացել ամբանը: Վերադառնանք, ասաց իղը եւ այդ վայրկեանին նրա առջեւ պատկերացաւ սեւաթոյր մազերով կիներ: Գնանք մի բան ուտենք, ասաց Հերան: Փաստօրէն, Մարթազ Վինեղըղը առասպել է, աշխարհից կարուած մի կղզի, որի հմայքը կայանում է նրանում, որ գրողները ալատեղ են մեկուսանում՝ իրենց գրելիքը գրելու համար: Ճաշարանները լիացուն էին հանգստեան կոչուած մարդկանցով: Նոյնիսկ պոչ էին բռնել: Փոխարէն, դիմացի կրպակից պողպատակ գնեցին եւ քայլերով կերան: Վերադառնանք: Ասաց իղը: Կարօտեցի՞ր Փալմութը: Ասաց Հերան: Վերադառնանք: Ասաց իղը: Մէկ ժամից վերադարձան:

Յերեկից դեռ մի բան մնացել էր: Մինչ Հերան ապակեպատ լողարանը մտած լողանք էր ընդունում, իղը դուրսը լուսացարանի դռնից ներս խոթելով ասաց, թէ դնում է մի քիչ քայլերու ծովափում: Այդ ասելիս նա նկատեց Հերայի բացարձակ մերկութիւնը: Նրան թուաց, թէ նոր է տեսնում իր կնոջ մերկութիւնը: Դուռը փակեց, իջաւ ծովափ, կօշիկները հանեց, ոտքերը մըխորճեց տաք աւազի մէջ: Արեւը մտել էր հանդիպակաց թիրակղզու կանաչ բլուրների յետեւ: Մովը շառաղունն էր: Քայլեց այն ուղղութեամբ, որ քայլել էր սեւաթոյր կիներ իր յայտնութեան առաջին օրը: Նա փնտռեց նրա ոտքի հետքերը, չգտաւ: Իդի աշխարհը ընդարձակուել էր: Այդ աշխարհում նա անորոշ խոստումներ էր գրում: Նրան թւում էր, թէ ինքը երէկուայ պատանին է, որի ներկայութիւնը Ձեռքի բառքէթրոյի մարզասրահում բռուն ծափահարութիւնների ալիք էր առթում: Այդ պահին նա կուսացաւ, անբեռնիք դնողը յամբիւղի մէջ զցեց, իջնելիս նա սիրեց իր մկանների պրկուած դաշնը: Մովափը ընդհատուեց: Այստեղ սեւ, թաց ժայռակոյտեր էին ցրուած: Ժայռերի արանքում մի արահետ կար: Իղը բռնեց արահետը, որը նրան տարաւ թուփերով ծածկուած բլուրը: Մովը մնաց բարձունքի ետին: Կէս ժամից նա իրեն գտաւ Ձորա եղանակներ՝ պանդոկի թիկունքում: Մթնշաղի մէջ պանդոկը նորահարսի էր նմանում, կոկիկ սպիտակութիւն, քղանցքը ծաղկեթուփերով շրջապատուած: Իղը հայեացքով մէկ առ մէկ խուզարկեց պատուհանները: Ձգտաւ այն, ինչ որոնում էր, սակայն ուրախ էր, որ այդ պահին ապրում էր:

Մեր վերադարձաւ, Հերան զուգուել-զարդարուել, հասած դեղձ էր դարձել:

Գտա՞ր փնտտածդ: Ասաց Հերան, հենց մի բան ասած լինելու համար: Իղը լսեց, սակայն չընկալեց Հերայի խօսքը: Նա չընկալեց նաեւ Հերայի յաջորդ խօսքերը: Նա խոժոռացել էր, բայց ոչ ցաւի խոժոռութիւն: Կարծես նրա կեանքը խտացել էր այդ վայրկեանի մէջ: Նա մօտեցաւ Հերային, բռնեց արմուկները, վեր բարձրացրեց նրան դիւանից, համբուրեց նրա բերանը: Հերան անմիջապէս արձագանգեց՝ թեւերով օդակելով նրա վիզը: Նա կրկին համբուրեց Հերային, այս անգամ երկար, գրեթէ ցաւազին: Իղը որոնեց, գտաւ Հերայի նարնջադոն շրջադիտի մանրիկ կոճակները, մէկ առ մէկ քակեց, անցաւ կրծքակալին, այստեղ դժուարութեան հանդիպեց, Հերան օղնեց նրան: Հազուատները թափուեցին ցած: Օ՛, է՛դ, է՛դ, ասաց Հերան: Աչքերը խուփ՝ նա շօշափեց Հերայի մարմնի բոլոր կորութիւնները, գրկեց նրան, առաւ իր բազուկների մէջ, տարաւ անկողին:

Էդ, քո վրայից ծովի բուրմունք է դալիս: Ասաց Հերան:
 Կարտեղ եմ քեզ, Ասաց էդը:
 Օ՛ր, է՛դ, է՛դ, քեզ սիրում եմ: Ասաց Հերան:
 Դու նման ես ծովին: Ասաց էդը:
 Այդ ինչ լաւ բան ասացիր: Ասաց Հերան:
 Էդը այլեւս խօսք չգտաւ ասելու:
 Ես երբեք այսքան երջանիկ չեմ եղել: Ասաց Հերան:

Միջօրէին երկու ժամ էր մնացել: Ծովափը հեռզհեռէ աշխուժանում էր: Ջերմաստիճանը հինգ աստիճան իջել էր, սակայն տոկուսին հասնելէ էր աւազը: Օդը ջինջ էր: Դիմացի կողին մօտեցել էր: Մէկ ժամից կը սկսի նաւարկութիւնը: Երկու աստղաստանաւոր տարուբերում էին հեռաւոր բաց ջրերում: Մի քանի նոր այցելուներ էին եկել: Մի գիրուկ կին, մետաղ որսող ձող ձեռքին՝ քերում էր աւազը, ըստ երեւոյթին մատանի կամ նման բաներ դտնելու լայրուած կենտրոնացումով: Էդը փորձում էր մտնել ոստիկանական վէպի էջերի մէջ, չէր լինում: Քանի անգամ կարգացել էր նոյն էջը, ոչինչ չէր հասկացել: Հերան դնացել էր քաղաք գնումներ: Ասել էր, թէ ուզում է իր ձեռքով ճաշ պատրաստել: Քո սիրած թրածուկը: Ասել էր Հերան, երկու բարեկազմ տղամարդիկ անցան իզի առջեւ: Նրանք ինչօրօտար լեզուով էին խօսում՝ ձեռքով ծեծելով միջոցը: Մի մտադաշ աղջիկ, մազերը ծոպ արած, կանգնել էր ծովի պուլնդին, դուռը թեւածք ուղղ էր տանում, ապա ճշարով յետ քաշում: Ծուռտով աղջնակը կորցրեց համարձակութիւնը, յուշիկ քայլերով հեռացաւ:

Էդը սպասեց մինչեւ կէսօր:
 Կէսօրին երեւաց սեւաթոյր կինը՝ զլուխը հերարձակ:
 Ինչին թուաց, թէ նրա մարմնից լոյս է ցում:
 Էդը երբեք մի կնոջ այնքան չէր տնջացել, որքան սեւաթոյր կնոջը:
 Այս անգամ սեւաթոյր կինը երկար կանգնեց ծովեզրին:
 Այս անգամ էդը մտովին մերկացրեց սեւաթոյր կնոջը:
 Գործարանում, բանուորները այնքան էին մատնահարել օրացոյցի թըխադէմ կնոջ պատկերը, որ նրա մարմինը ծածկուել էր մուրտա մատների հետքերով:

Սեւաթոյր կինը կուացաւ մի խիճ վերցրեց, ծովը նետեց: Քամին վեր հանեց նրա հերքը: Էդը տեսաւ նրա ուտերի սպիտակը եւ ծոծրակի փափուկ թաւուտը: Կինը դարձաւ, մի սլակ աչքերը պեղեց իզի աչքերին, մեղմիւ ժպտաց, ապա, նոյն թախիծը այտերին՝ քայլեց, հեռացաւ, այս անգամ հակառակ ուղղութեամբ, ուր ծովեզրը կորանում, հրուանդանի ծայրում միանում էր տնակների հոյին: Էդը գիրքը թողեց աւազի վրայ, բարձրացաւ, լսեց Հերայի ձայնը շատ մօտից: Էդ, մի լաւ ատաղարկ ունեմ: Ի՞նչ ատաղարկ: Ասաց էդը, նայուածքը հեռուն: Երկարաձողի՛ր արձակուրդդ: Ասաց Հերան: Ինչպէ՞ս, չեմ կարող, ասաց էդը: Կարո՞ղ ես, եթէ ուզենաս: Դու երէցութեան իրաւունք ունես: Մեր գրացի Ամըլ այդպէս արեց: Մէկ ամսով կնոջ հետ Իտալիա գնաց, ասաց Հերան: Բայց դործարանը: Ասաց էդը: Գործարանը իր տեղում կը մնայ: Ասաց Հերան: Թող մտածեմ: Ասաց էդը:

Հերան դարձել էր նորածին պարմանուհի: Երբ նա ձեռքի մէջ էր առնում իր չէկ մազերի շերտը եւ ուսին նետում, էդը յիշում էր իր առաջին ժամադրութիւնը Հերայի հետ: Էդը սիրում էր իր գլուխը թաղել նրա վառուղ ծամերի մէջ: Հերան փոխուել էր, այն աստիճան, որ ինչին թւում էր, թէ առաջին անգամ է հանդիպում նրան: Երեկոյան, ինքնաշարժը նստան,

զնայցին Վուզոս Հուլ, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ձորակում թաքնուած մի նաւահամատոյց, որը աւելի շուտ մեքենանաւակներէ ու առաջաստանաւերի մի անտառ էր: Նաւակները միմեանց զարնուելով շարունակ կողիանձում էին: Հենց ջրի վրայ տախտակամածն էր: Տախտակամածի վրայ ճաշարանն էր: Ընկերանին կից՝ պարասորաչը: Պարասորաչը լեցունն էր երիասարդներով, մեծ ժառը ուսանողներ: Սրաչը թնդում էր երաժշտութեամբ: Բոլորը պարում էին, ամէն ոք իր ուղածի պէս: Էդն ու Հերանն եւս պարեցին, կրկին պարեցին, մինչեւ կէս գիշեր պարեցին: Նուագախումբի կշռոյթը հետզհետէ մեղմացաւ, կորցրեց իր վայրագ թափը: Հիմա թանգո էին նուագում: Հերանն գլուխը դրեց կզի աջ ուսին, աչքերը փակեց, շնջաց:

Էդ, ես երբեք այսքան երջանիկ չեմ եղել:

Դու երէկ նոյն բանն ասացիր: Ասաց էդը:

Երէկ, այսօր եւ վաղը: Եարունակ նոյն բանը պիտի ասեմ: Ասաց Հերան:

Ի՞նչ աղջիկները այստեղ լինէին, պիտի դարձանային: Ասաց էդը:

Այո, ասաց Հերան, նրանք կարծում են, թէ իրենք են յայտնադործել աշխարհը:

Նրանք պիտի ասէին, թէ Հարրած ծնողների գաւակ են, ասաց էդը:

Երջանկօրէն Հարրած ծնողների գաւակ, ասաց Հերան:

Գիտե՞ս, էդ, շարունակեց Հերան, ես ինձ տակաւին երիտասարդ եմ զգում:

Այդ նրանից է, որ ինձ հետ ես պարում: Ասաց էդը: Այդ պահին ես զգաց սեւաթուր կնոջ ներկայութիւնը: Կանդ ատաւ պարասորաչի մէջտեղում, չորս բոլորը գիտեց:

Ի՞նչ եղաւ, էդ, ինչո՞ւ ընդհատեցիր պարը: Ասաց Հերան:

Ոչինչ, ինձ թուաց, թէ ծանօթ դէմք անայ: Ասաց էդը:

Ո՞վ: Ասաց Հերան:

Չգիտեմ, դու չես ճանաչում: Ասաց էդը:

Կի՞ն, թէ տղամարդ: Ասաց Հերան:

Կին: Ասաց էդը:

Հերանն գրկեց ամուսնու ուսերը: Եարունակուեց պարը:

Պանդոկ հասնելուն պէս Հերան սենեակի դուռը աղմուկով դոցեց, արագի տալու պէս կօշիկները դէս ու դէն նետեց, քակեց իր ծագերի խուրձը, թափահարեց գլուխը: Հիւսերը ցաքուցրիւ թափուեցին ցած: Ապա պերճաղիճի տեսք ընդունելով ծանրաբայլ ու ծորուն՝ առաջ շարժուեց դէպի էդը, որը ակամայից նահանջեց:

Այս գիշեր ե՛ս պիտի մերկացնեմ քեզ, ասաց Հերան:

Հերա՛, քեզ ի՞նչ պատահեց, ասաց էդը:

Մինչեւ յոյս պիտի տանջեմ...

Էսի՛ր, ասաց էդը:

Որ իմանաս ինչ է սէրը: Ասաց Հերան: Հերանն բացեց իջի մազոտ լանջը, ձեռքերը խոթեց նրա շապիկի տակ, ափերով յոյն նրա կուրծքը, ապա վիզը, ուսերը, ապա անցաւ իրանին: Թատերական շարժումով մէկ անդամից զուրս հանեց նրա դօտին, օդում մի քանի անգամ ճօճեց, հետուն շարժուեց:

Ինձ Հերա՛ կ'ասեն: Ասաց Հերան ու ամուսնոյն հրեց անկողնու վրայ:

Երբ էդը աչքերը բացեց, արեւը ողողել էր սենեակը: Նա մարեց սենեակի լոյսերը, որոնք ամբողջ գիշերը վառ էին մնացել: Սաւանով ծածկեց Հերայի մերկութիւնը, լուացարանն զնայց, պաղ ջուրով լուաց դէմքը, ապա,

խոհանոց մտնելով՝ նախաճաշի պատրաստման երկար ծիսակատարութեանն անցաւ: թարմ հիփուած սուրճի բուրմո՛ւնքն էր, որ արթնացրեց Հերային, վրան նետեց դիւրանոցը, դադաազողի մօտեցաւ հրին, արագ համբուրեց նրա վիզը, անյայտացաւ լուացարանում:

Սոված դալկերի պէս երկուսով յարձակուեցին երշիկով պատրաստուած ձուացեղի վրայ:

Հերան ասաց: Էդ, ինչո՛ւ չո եփած կերակուրները աւելի համով են լինում:

Որովհետեւ ոչի եմ դնում կերակրի մէջ, ասաց էդը: Միտսին ծիծաղեցին:

Հերան ասաց: Եթէ գիտեհաս, էդ, թէ որքան ես փոխուել:

Որովհետեւ դո՛ւ ես փոխուել, ասաց էդը:

Մ՛ս, ինչպէ՞ս:

Ինչպէ՞ս ասեմ: Աւելի կանացիացել ես:

Իսկ դու դարձել ես աւելի զգայուն: ձի՛ւղ է բառը:

Սո նոյն բանուսոն եմ: Մնացեալը չզփտեմ:

Դարձել ես խորհրդաւոր: Ոչ թէ տափակ խորհրդաւոր, այլ՝ խորհրդաւոր խորհրդաւոր: Կանայք անմիջապէս տեսնում են այդ բանը:

Այդ լա՛ւ է, թէ վատ: Ասաց էդը:

Լաւի կամ վատի հարց չէ, այլ ա՛յն, որ թեզ սիրում եմ, շա՛տ, շա՛տ եմ սիրում:

Էդը ձեռքը երկարեց սեղանի վրայ, ափում առաւ Հերայի ձեռքը, սեղմեց:

Մովափի բնակիչները վերադարձել էին: Արեւը խօսքը մէկ արած՝ վառուած էր անամպ երկնքում: Սակայն կիզիչ չէր: Ամէն պարագայի, Սեւտեմբեր էր: Մէկ օրից միւսը եղանակը կարող էր փոխուել: Էդը մտածում էր անսալ Հերայի խորհրդը, երկարածուել արձակուրդը, որը երբեմն նրան թւում էր անհրաճան, սակայն այնքան Հերայի խորհրդը չէր, որքան ծոփախորչի հմայքը: Ձեռքին էլ ունի իր մերձակայ ծոփափնեքը, բայց էդը յոգնել էր Քրէստնի եւ Ռիվիեր ծովափները կզերոյ տաղտուկ գորշութիւնից, այստեղ կարծես նոր աշխարհ էր բնկել, ուր ամէն բայափոխին կարող ես նոր անակնկալի հանդիպել: Այսպէս էր մտածում էդը, երբ կանացի ճիշեր լսեց: Երևաւ եկաւ պառկած դիրքից, նստեց, ափերը ճակատի առջեւ դրեց: Երկու կանայք կիսով ծովը մտած՝ օգնութիւն էին ազաղակում: Կանանցից մօտ երկու հարիւր մետր հեռաւորութեան վրայ, խորքում, ծովը անհանդարտ տարուբերում էր, պատրաստուելով արեք դառնալու: Յանկարծ հետանում էին ուժգին ծիփոնքները եւ ջրի երես էր բարձրանում նիհար մի թեւ, ապա՝ աղջկայ մի դուռ: Էդը վազեց, ծովը մտաւ, լողաց դէպի խորքերը, ապա սուզուեց ջրի տակ: Մէկ անգամ նա խցանի պէս դուրս պրծաւ ջրի մակերես, նորից սուզուեց ջրի տակ: Յաջորդ պահին երեւաց նրա ուսը: Նա մէկ թեւով կառնել էր մի աղջնակի, իսկ միւսով լողում էր դէպի ծովափ: Երկուսու ծոփ մագերով աղջնակն էր: Իրարանցումը շարունակուում էր: Մի կին, ըստ երեւոյթին աղջնակի մայրը, շլմել էր: Նա միայն նւում էր: Էդը աղջնակին երեսն ի վար դրեց ծնկին, միւս ափով սեղմեց լանջը, աղջնակի բերանից մի քանի բուռ ջուր հոսեց, աղջնակը թեթեւ տնքոց արձակեց, աչքերը բացեց, ոտքի կաննեց, շուարած շորս դին նայեց: Մայրը գրկեց դստեր, միասին հեռացան:

Դիմացի կղզուց գրօսանաւը վերադանում էր՝ իր յետին սպիտակ ակօս թողնելով: Նախաճաշից յետոյ Հերան ասել էր, թէ ոսկորներս ջարդուել են,

Հանգստի պէտք ունեմ, Հասանաբար տակաւին ննջում էր: Էդը կրկին իւզով
 օծեց մարմինը, եթէ չէր օծում, մորթը այրում, ճակնդեղի գոյն էր սոսա-
 նում, ջրի պղպղակներ էին դոյանում ուտերի վրայ: Այժմ նրա մարմնի դաւ-
 կութիւնը չփայտել, ցորենագոյնի էր փոխուել: Էդը գլուխը դրեց աթոռակին,
 կրկինը նայեց: Բայց նախքան այդ, նրա Հայտաբեր բռնել էր լոյսի մի ճա-
 ճանչ: Սեւաթոյր կիկն էր, կանգնած էր սովորական վայրում, ոտքերը ջրի
 մէջ: Էդը զարմացաւ, որ շնչահեղձ էր լինում: Սեւաթոյր կիկը մի դեղին
 ծաղիկ էր խրել ծաղերի մէջ, ձախ քունքից վերել: Այս անգամ նա դէմքը
 ուղղել էր արեւելք: Ու նորից այդ կնոջը տիրելու ցանկութիւնը ուռնացաւ
 իր մէջ: Հեքիաթի դիցուհու պէս նա շքնաղ էր, պերճ ու անառիկ: Աւելին:
 Էդին թւում էր, թէ սեւաթոյր կիկը իր մարմնից ինչ-որ թէժ արձանդ է
 արձակում, որոնք դալխ խրում են իր հոսթիան արմատի մէջ: Նա զգաց
 իր մկանները կարծրացումը: Սեւաթոյր կիկը դարձաւ, թեւերը կանթեց
 մէջքին, երկար նայեց Էդի ուղղութեամբ, ժպտաց իր թախծոտ ժպտը, քայլեց,
 հեռացաւ:

Նոյնը կատարուեց յաջորդ օրը: Ամէն հանդիպումից յետոյ նա աւելի
 փարուեց Հերային: Դարձել էին նորասպաններ: Ամէն առիթով գրկախառ-
 նընում էին: Հեռուցեալ տարածեցին իրենց աշխարհազրական շաւիղը: Մե-
 քենան քշեցին, գնացին Քէյփ Բադ թերակղզու ծայրը՝ Փրովինսթաուն, ճա-
 շեցին փորթուզալական մի հինաւորաց ճաշարանում, այցելեցին նոր վայրեր,
 փորձելով գտնել անմատչելի աւաններ: Դէպի Օսթրալիա ճանապարհին Էդն
 ասաց: Կարծում եմ, մէկ շաբաթ եւս կը մնանք այստեղ: Օ՛ր, է՛դ, ասաց
 Հերան, դու աշխարհի լաւագոյն մարդն ես: Եւ նման բաներ: Մինչեւ որ
 եղաւ Ուրբաթ:

Ճիշդ էր օդերեւութարանական վարչութիւնը: Քանի դեռ շարունակ-
 ւում են Մեքսիկեան ծոցից գոյացող տաք հոսանքները, Ճալմութի ամառ-
 նային եղանակը ապահովում է մինչեւ Հոկտեմբերի սկիզբները: Հերան
 սպիտակ նոր շրջազգեստ էր դնել, էդը՝ թննիսի կօշիկ: Պիտի քայլէին, նոր
 ծովախորշեր գտնէին: Մովափում կեանքը նոյնն էր, միայն դերակառու-
 ներն էին փոխուել: Յանկարծ երկատասարդներով լցուեց աւազը: Ըստ երե-
 ւոյթին, եկել էին շաբաթավերջը տօնելու: Հերան ու Էդը գրաւել էին ա-
 ւազաշերտի իրենց բաժինը, բմբռնում էին արեւը: Մէկ ժամ յետոյ Հերան
 քաղաք գնաց, դրամատուն՝ յաւելեալ դրամ ապահովելու երկարաձգուած
 շաբաթուայ համար: Նա ունէր նաև այլ գնումների ցանկ:

Միջօրէին շերեւաց սեւաթոյր կիկը:
 Էդը անհանգստացաւ: Արեւային ակնոցները հանեց, չորս բոլորը
 փնտռեց: Սեւաթոյր կիկը չկար: Սպասեց մէկ ժամ: Սեւաթոյր կիկը չկար:
 Խուճապի մասնուեց: Շտապ բարձրացաւ, ուղղուեց դէպի Ձորոս եղանակները՝
 պանդոկը: Նիհար, ակնոցաւոր գործակատարին նկարագրեց սեւաթոյր կիկը
 արտաքինը ամէն մանրամասնութեամբ: Անո՞ւնը: Ասաց դործակատարը:
 Չգիտեմ: Ասաց Էդը: Մէկ քանի հիւր չունենք: Պատասխանեց գործակա-
 տարը: Ինչպէ՞ս թէ: Բորբոքուեց Էդը: Ասացի, որ մենք նման հիւր չունենք,
 պատասխանեց գործակատարը: Բայց ես կարեւոր ասելիք ունեմ նրան, ա-
 ւելի բորբոքուեց Էդը: Նման մէկը անծանօթ է ինձ, պատասխանեց գործա-
 կատարը: Դուք ինչո՞ւ էք ստում: Ես գիտեմ, որ նա այստեղ է, ասաց Էդը:
 Ո՞վ, ասաց գործակատարը: Սեւաթոյր կիկը: Պատասխանեց Էդը: Այդպիսի
 մէկը չի արձանագրուել մեզ ժող, ասաց գործակատարը, եթէ արձանագրու-
 ւած էլ լինէր, ես արտօնութիւն չունեմ զրտելու իր անունը: Էդը գոր-
 ծարանում կուտակած մի քանի լուսանքներ արձակեց անհասցէ ուղղու-

թեամբ, դուրս ելաւ պանդոկից : Գործակատորը ձախ ցուցամատով վեր հրեց իր ակնոցները :

Էդը վազեց քարածայրերի ուղղութեամբ, բռնեց կածանը, հասաւ պանդոկի հանդիպակաց կողմը, կարեց ճանապարհը, մտաւ ծովափ, վազեց հըր-ւանդանի ուղղութեամբ, բարձրացաւ մի քանի ամբարտակներ, կունդնեց մի բլրակի վրայ, հեռունիքը դիտեց : Մոլափը խճողուած էր : Նոր մարդիկ էին եկել, խանգարել կարգը : Անպատճառ նա ինձ է սպասում, մտածեց Էդը եւ պատանու կայտառութեամբ վազեց բլրակն ի վար դէպի սեւաթոյր կիներ : Մոլափում խրախճանք էր : Երիտասարդ տղաներ ու աղջիկներ զուարճանում էին, ծիծաղում, ճշում, շարունակ վազվզում ծովից տփ, ափից ծով : Մի խումբ պատանիներ հաւաքուել էին մի կիթառահարի շուրջ, որը նրանց բալլադ էր երգում : Այնտեղ, ուր իր ասաղաչերան էր, ակնոցաւոր մի դէք աղջիկ նստել ու իր ոտտիկանական վէպն էր կարդում : Դիմացում, չորս հոգի մէկ շարքի նստած՝ ուխկիկ շէն էին փոխանցում միմեանց : Էդը զարեղրի մեծ պահանջ զգաց : Ձորս օր կը լինէր, որ դարեղրի ձեռք չէր տուել : Նա ընդհանուր իրարանցումից բաժանուեց, հեռացաւ, մեկուսացաւ, նստեց ճե-մուղու հզրին :

Արեւը արդէն թեքուել էր : Մոլափի արշաւախումբը նահանջել էր, մնացել էին մի քանի տասնեակ լողորդներ : Էդը, ուսերը կքած՝ հողին էր նս-րում : Ինչո՞ւ չեկաւ : Ծատ մօտից լտուեց կղզուց Ֆալմութ վերադարձող վեր-ջին գրօտնաւի բութ սուլոցը : Մոլափում հաւաքուած ճայերը մէկ անգամ-միջ վեր բարձրացան՝ ահազանդալին ճուղողին արձակելով : Իր դլինի վե-րեւ Էդը լսեց նրանց թեւերի թափահարումը : Երբ նրա հայեացքը իջաւ ավ, «Ձորս եղանակներ» պանդոկի առջեւ մի կարմիր միաթ էր կանգնած : Մի բարձ-րահասակ կին, մոխրագոյն սեղմ տաբաա հագած, իջաւ պանդոկի մուտքից, կիտով դարձաւ ինքնաշարժի շուրջ, բացեց դուռը : Նրա սպիտակ ուսերին թափուել էին սեւ հիւսիսի ջրվէժներ : Կինը նստեց մեքենան, դուռը դոցեց, ինքնաշարժը հեռացաւ :

Էդը չսպասեց : Վեր ելաւ, քայլեց : Փոխանակ մուտքի դուռը գործա-ծելու, ցատկեց պատշգամբի ցանկապատի վրայից, մտաւ սենեակ : Հերան յան-կարծակիի եկած, ա՛հ, բացահանչեց, նրա ձեռքի նպարեղէնի տուփերը ըն-կան սեղանի վրայ : Էդը արագ մօտեցաւ լուսամուտին, փակեց փեղկերը, վար իջեցրեց լեղակադոյն ծանր վարագոյրները : Կտրուեց ծովի ձայնը : Պատուար իջաւ ծովի առջեւ : Ապա նոյն գործարար շարժումով նա սկսեց ճամպրակ-ները կապել :

- Հերան ասաց, Ի՞նչ ես անում, էդ :
- Վերադառնում ենք, պատասխանեց Էդը, շարունակելով կապկպոցը :
- Սակայն ինչո՞ւ, ասաց Հերան :
- Վերադառնում ենք տուն, ասաց Էդը :
- Ի՞նչ պատահեց, է՛դ, քեզ վշտացրի՞, ասաց Հերան :
- Ո՛չ : Դու ինձ քնաւ շես վշտացրել : Պատասխանեց Էդը :

ՅԱԿՈՒ ԿԱՐԱՊԵՆՃ

Յունուար, 1985
Իրենթիքը

ԽՈՐՇԱԿԷՆ ԵՏՔ

Երբ գիս տեսնես
 Փոթորկահեծ պահերէն ետք մեր անցեալ՝
 Օրերն համակ յեղաշրջած կ'ըլլան արդէն
 Մեր ցնծութեան դաշնաւորումն անաւարտ,
 'Իմաշրջած մինչեւ իսկ՝
 Հմայքն իրենց հեռայնոջ...

Եւ ամէն իդձ,
 Դէպի Անհունը թեփուող
 Ծաւալապաշտ իր հեւքին մէջ,
 Քեզ կը թուի
 Շիրմածաղիկ անբջանֆոյ պսակուած
 Տարաշխարհիկ յուշ մը միայն...

Տե՛ս, կ'ողջունեն գիս արդէն
 Մեր անցեալէն արտապեղուած ճամբաներ,
 Ուր կը քայլեմ առանց քեզ,
 Տարփայարոյց նոր սիրանքի
 Վարժագիծ մը բացած իմ դէմ,
 Ուր ա՛լ չկան գիս կաշկանդող
 Անցարգելներ փշածաղկ...

Եւ հեռախոյս ոլորքներուն գալիքի
 Գուցէ դառնամ անձնատուր
 Ցայգածալիտ սաղրամքներու դիւթանքին.
 Գուցէ իյնամ յարձանուտին մէջ կրկին
 Քմայքներու խաբէական,
 Դառնամ գո՛հը կարեւլեր՝
 Տեսողական գիտակցութեան մը խաբկանքին...

digitised by A.R.A.R.@

Զիս ողջունեն գուցէ ձայներ մտերիմ՝
 Ըզնունդի զեղումներով ըզնակաթ-
 Զայնե՛ր, որ զիս ողոճեն
 Ախորական երազներու տրտունջով
 Եւ թիպարտ ժպիտներու դառնութեամբ-
 Զայնե՛ր, որ լուռ ձայնակցին
 Հանապարհն իմ նոր յոյզերով վարշամակոզ
 Հակատագրիս անդոհարեք ցնորփին...

Սակայն ո՛չ դուն եւ ոչ ես
 Զկարենանք ըմբռնել
 Գոյապատճառն անմեկին
 Խորշակներու խօսակամչ,
 Որ կը քանդեն
 Մոլեցնութեամբ ահաւոր
 Մեր յուսազեղ ճգտումներուն
 Վեհութիւնը սրբազան...

Հո՛ն է միայն,
 Խորշակալար եղերեքով թեւկոխուած
 Այս մոխրաբոյր կենսավայրին,
 Ուր անցեալի մեհենագիր տոմարներէն
 Մաքրացրուած կ'ըլլան արդէն
 Յուզումնաբեկ սրտի ճանճոյթը անամօք,
 Անմեկնելի խօսքի տարերքը անբարբառ
 Եւ հիասքափ երգի հեկեկամբը անձայն...

Հո՛ն է դարձեալ,
 Ուր անցեալի տեսլահայեաց դաշտերուն,
 Վերածաղկած կ'ըլլան արդէն
 Հնչիւնները տառապանքին հովուական,
 Կախարդանքը իտէալացած խոստումներու
 Ու երագի քնիշխութիւնը հոգեհաղորդ...

Եւ դուն կը գգաս,
 Խորշակէն ետք երէկի,
 Թէ ցա՛նն է լոկ
 Մեր խոկումներն իբար գողոզ,
 Կամբքակերպ յոյսը միակ
 Եւ խորայոյզ գգայնութեամբ մեզ պսակոզ
 Այն տագնապը անլուծելի,
 Ուրկէ անդին
 Կարելի չէ ա՛լ անցնիլ...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

Պ Ա Ղ Տ Ո Յ Ե Ն Ց Հ Ա Ր Ա Ը

Ե .

Սանամ, գիշերը, երազին մէջ կը զարժանար, թէ ի՞նչ քաջութիւն էր իբրը, երբ երես առած աղջկայ պէս, ուզածը կ'ըսէր անզլիացի սպային. զուցէ անոր բծիւկի հանգամանքն էր նկատի առած եւ կ'ընէր ոչ Ֆիզիքական, այլ քաղաքական մեղքերու խոստովանութիւն մը: Երազի եւ իրականութեան խառնուրդ խօսակցութեան էր իբր զարմանքը: Աւազաբլրան տակ հնգիկ սպասաւորը երբ տեսած էր մօտենալը իր տէրոջ եւ բարեկամուհիին, ջրով լեցուն ռափոր մը կանգնեցնելով աւազին մէջ, հետացած էր: Սանամ ձեռքը Լրկարեց սպայ բծիւկին, երիտասարդ, աւուջ գինուորականին, որ երկար տարատ եւ վերնաշապիկ մը ունէր հազած, տաք սեղմեց ու կարճ պահ մը պահեց իր ափին մէջ: Սանամ դող մը զգաց մարմինին մէջ: Ի՞նչ անուն տար այդ սողոսկող ջերմին, որ անհանդիստ կ'ընէր ամուսնացած աղջկան մը ներաշխարհը մեղաւոր հանոյթով մը: Սանամի մխտճէն բնաւ չէր անցներ նման ցանկութիւն մը, հետեւաբար կ'ընտանաց ճակատը, երբ քունին մէջ զտոսնցեց.

— Երբե՛ք... — եւ շարունակութիւնը «արք» կոչումն էր, որ ճտպաղտով զսառ աղաւաղուած բռռերուն տակ: Եւ տազնապ յայտնող ճիշ մը, — Անկարելի է...

Կէս գիշերային այն պահն էր, երբ Պաղտո ուզեց կենը քաշել-գրկել: Ակամայ Պաղտո ձեռքը տարաւ Սանամի փէշին եւ մատները դպան մօր օձային պաղտութեամբ ճանկին, որ կաշկանդած էր հարսին զիշերազգեստին փէշը: Տղան քիչ վեր բարձրացած՝ կնոջ վրայէն հակեցաւ մօրը սկանջին ու փափսամայն խնդրեց.

— Բաց տրա՛՛մ ճանկը, մէրիկ. թող տուր, որ աղջիկը հանգիստ շարժուի...

Մայրը արթնցած էր աղուն մատներուն հպումէն. զգաց անոր հեքը սկանջին տակ ու սուտ ջուռն մտաւ, ա՛լ աւելի ուժեղ բռնելով հարսին փէշը: Սանամ կը պայթարէր քունին մէջ եւ բնաւ լուր չունեցաւ մօր եւ տղու միջեւ անցուղարձէն: Պաղտո միջեւ առաւօտ շիրջաւ յաղթել քունին...

Ենկճ փեսան կը գզա՞ր, որ էրիկ-կնիկ սիրային ցանկութիւնը,

խիտ բնականուամբ վրանի մը տակ, կը նմանէր լուծի տակ մտած ե-
ղային շարձարանքին, զոր կարելի չէր յայտնել պոռալով, երբ մաճ-
կալի խարազանը կը ճօճուի կանակին վերեւ:

Լուսարաց էր: Սանամ աչքը բացաւ, կետուր մայրը քովը չէր
եւ տեղը կը պահէր տակաւին մարմինին Չերմութիւնը մինտէրին վը-
րայ: Աչքը շնչեց ու տեսաւ սափորը տեղը չէ: Սիրտ չունէր ներքին
ծիծաղին, ուր հեղձախառն դառնութիւնը կը զգացուի: Կետուր մայրը
ջուրի էր գացած. զարմացաւ ու մտահոգուեցաւ: Մի՞թէ ինչդուող
կնոջ առասպելը կը շարունակուէր պատճառով: Տեսնես, Ի՞նչ զոյն
ու ձեւ առած պիտի ըլլայ: Պաղտոն տնկուած էր վրանին մէջտեղը-
ինքզինք կ'ուտէր, Չէր քնացած, սպասեր էր մօր արթննալուն: Մեր
ջուրը կ'երթար, տղան առջեւը բռնեց.

— Էէ՞՞. Ի՞նչ պիտի ըլլայ, այսպէս որ մնանք, — խօսողացաւ
տղան:

— Ի՞նչը ինչ պիտի ըլլայ, տղայ, — բարկացաւ մայրը:

— Դու գիտես ինչը...

— Քեզի բէ՛, ես Ի՞նչ գիտնամ:

— Կը թողուս որ...

— Տղայ, ես սիրտ չունիմ հեազ խօսելու. Չուրին կարգը կը
փախցնեմ, վերջէն ստախօս կնիկիդ մազերը կը փետտեմ, դիտցած
եղիւր:

— Խեղճ աղջիկը Ի՞նչ մեղք ունի...

— Մեղքը վրան է. զնա՛ հասկցիր, — ու թոյնը թափելով՝
մայրը տուր քաշեր էր: Պաղտոյի սիրտին մէջ սիրային կարօտի,
կասկածի, խանդի խառնուրդ զգացումը եփուած ապուրի էր նման,
զոր բերան առած՝ լեզուդ կ'այրես:

Անտեղեակ մօր եւ տղու միջեւ տեղի ունեցած խօսակցութե-
ան, Սանամ նայեցաւ էրկանը.

— Ի՞նչ թթուեր կեցեր ես, — հարցում մըն էր, ուր հետաքրք-
րութիւնը բացակայ է, թէեւ դիմացիներն լեզուի կապերը քակել
կու տայ:

Սանամ հարցը տուաւ եւ անտարբեր՝ տեղէն բարձրացաւ վը-
րանին զոյգ լամբերը իջեցնելով սիւներէն, տարաւ-զրու անցքին
մէկ կողմը: Իրենց հերթն էր լամբերուն հոգ տանիլը: Ապակիները
մրոտած էին եւ քարիւղ շկուր շիշներուն մէջ: Պաղտօ աչքերով կը հե-
տեւէր կնոջ գանդաղ շարժումներուն: Սանամ լամբերը կարգի բե-
րելով, տարաւ կախեց զոյգ սիւներէն. նոյն անտարբերութեամբ՝
հաւաքեց վերմակ, սաւան, բարձ ու մինտէր ու զանոնք վրայ վրայի
զարնեց յատկացուած անկիւն մը վրանին: Սանամ կը զգար, որ
Պաղտօ կը Փշշար, առիթ կը փնտռէր պոռթկալու: Մո՛յրն էր լե-
ցուցէր տղան, թէ դիւրբային սպարդիւն փորձերէն գոտած էր...:
Թողուց, որ ան Փշշար եւ վրանափէշին տակէն հանեց կաղօճախը,
իրենց սեփականը, զոր կետուր հայրը Պարսպէն ապսպրած էր՝
«Սանամ ին խաբրիմ համար»ը շեշտելով...: Պաղտոն շոյուած էր
հօրը տածած գուրգուրանքէն հարսին հանդէպ: Մայրը կատղեցաւ-
խից կաղօճախը, որ ոսկիի պէս կը փայլէր՝ Սանամին ձեռքէն: Ա-
ւել-պակաս խօսքեր ճշաց էրկանը երեսին... թէ էրիկը կը սերէր
հարսին, զաղտնի պազնիլը տեսած էր եւ այլ զրպարտիչ վիրաւո-
րանքներ. Պաղտոյին մէջ միտքը շարժ եղած էր: Վրանին կիները
դեռ կը յիշեն, այդ առիթով կարապետ ազային տփոցը Տիրուհի

խաթունին, որուն այնուհետեւ կու տային կատգած Տիրուխնի շքանշանը ծաղրանքին:

Սանամ վտակց կազօճախը, թէյնիկը ջուրով լեցուց, գրաւ վրան...

— Աղջի, ի՞նչ կ'ըլլատ չվերջացա՞ր, — Պազու թաթած էր կնոջ թեւը ու կը ցնցէր:

Սանամ, թեւը ազատելով, նայեցաւ շեղանկինով էրկանը: Կայծահնային զգացում մը փայլեցաւ—անցաւ ներաշխարհէն: Մ'ի էր այս մէկը, որ կը կուտէր զինք. ո՞վ էր այն միւսը, որ յարգանքով քալեց հետը եւ հիացում ունէր իրեն հանդէպ: Մեղք կա՞ր բազդատական այդ պատկերացումին մէջ: Սանամ ցնցեց ինքզինք, բայց հրաւիրափութիւնը կէտ մը արձանագրեց ոչ Պազույի հաշուին...

— Ի՞նչ է ուղածդ. կը տեսնես զբազած եմ ձեր գործերով: Հայրդ թէյ կ'ուզէ նախանշին. չեփո՞մ, — Սանամ շէր գրգռուած. բրաւ պաղ հարցումը:

— Ի՞նչ հայրիկա, հայրիկա կ'ըսես, ո՞ր օրուան հայրիկը եղաւ:

— Ամշցիւր, Պազու. չզղջառ...

— Ո՛չ, չեմ զղջար:

— Ի՛նչ, զարկ մեռցուր, որ ազատեմ ձեր ձեռքէն: Անիծուի պահը, որ զէմ ելաք, — հաշտեցուած միտք էր Սանամինը, համոզում:

— Աղջի, այդ ի՞նչ խօսք է...

Սանամ քաշուեցաւ սնկիւնը. նստեցաւ խորին, գլուխը առաւ ավերուան մէջ. ուսերը ցնցուեցան: Պազու յիշե՞ց Արասիւի ափի աղջիկը: Երախտապարտ շեղու իրեն, բայց լացաւ ընկերուհիէն բաժնեւորուն համար եւ կարծես սխալեց իրեն զէմ: Ինք դիւրգրականութեան անթափանց, Սանամ կիրթ ու ուսումնական օրիորդ-վարժուհի: Ինչի՞ս հաւնեցաւ. եթէ համակերպեցաւ, տեսած էր զիս, ձիս տակիս, կուտող-հերոս: Չըսա՞ւ. զնա՛ պարտականութեանդ հետեւէն, փոխանակ աղջկայ հետեւէ ինչալու: Ի՞նչ է մեղքը խեղճին: Մայրս ըսաւ զնա՛ գտիր՝ մեղքը վրան է: «Ուզեց թիս զրգոնել Սանամին զէմ. ցերեկը՝ ես, գիշերը՝ ան. կը լարչրկենք աղջիկը... որ ի՞նչ...»:

Պազու իջաւ գրգռուածութեան բարձունքէն, զնաց զէպի կինը: Անձաբակ՝ ինքը, որ շէր կրնար սիրով գոհացնել կինը... Ճրուեցաւ վրան, գրկեց Սանամին խարտեաչ գլուխը եւ երբ ըսաւ.

— Մի լար, հոգիս. ես՝ մեղաւոր, դու՝ դատաւոր. ելիր պատմէ մեղաւորը: Մայրս է մեղաւորը. դուն չես կրնար պատժել զինք... Հայրս հախէն կու գայ... Ելիր, ոչ ճեղ տեսնեմ. այսօր վարդապատ է. կ'երթանք անտառ...

Սանամ կ'աւ ու կախուեցաւ էրկանը վիզէն: Պազու շուրջը նայեցաւ: Իր բախտէն մէկը չկար ներսը: Գրկեց ու պազաւ կինը, եւ իր շար բախտէն՝ ներս կը մտնէր կուտը ուսին մայրը.

— Մաշալլա՛հ, մաշալլա՛հ. կը պաշպչուին խալիի առաջ... անամօթներ: Ձեն ամշնար ալ...

— Ա՛ր մէր. ո՞ւր է խալիւր. իսկ դու խալի չես, որ տեսար երեսդ դարձնէիր, յիշէիր հին օրերդ, թէ ինչպէ՞ս հայրս պաշպչեք է ճեղ, — օձէ խալթուածի պէս բաժնուեր էին իրարմէ եւ Պազու

չարացած էր ժորը դէժ եւ իրր բողոք, բարձրաձայն ըսաւ Սանձմին,
 — Սանձմ, քալէ երթանք անտառ, այսօր Վարդապետ է, բոլորը հոն
 կ'ըլլան, — քաշեց կնոջ թեւէն, բայց, Սանձմ տեղէն չարժեցաւ:
 Անոր ծայրը նշմարած էր հարսին կարճրած աչքերը, ուր կերբը չէր
 շողար, այլ դեռ չչորցած արցունքը:

Մի' թէ զիղջ ունեցաւ: Առանց կետուր ժօր սիրտը կարգաւու,
 Սանձմ իւր թափեց այդ զիղջին վրայ, երբ թելադրեց Պաղտոյին:

— Մամայէն հրաման առ, որ տուաւ՝ կ'երթանք, թէ ոչ՝ ես
 դացողը շեմ...:

Տիրուհի Խաթունը տեսաւ, որ հարսը կը վազէր կաղօճախին
 վրայ: Թէյը եռացեր կը ժայթքէր: Հասաւ հարսին, ծնկեցաւ կուշ-
 արը, լուեց պահ մը եւ խուլ ըսաւ:

— Ահ, հարս ջան. ես կը նայիմ. դու տղաւ սիրտը մի կտա-
 րէր. ելիր անտառ դնա հետը, քէֆ ըրէք...:

Սանձմ խեց կետուր ժօր ձեռքը եւ պագաւ գայն: Տիրուհի
 Խաթունը ափը եւ փոփոցուց. մաշած աւելի պէս, չէր ուզէր գլացա-
 կան գետինը, պահի մը սիրոյն՝ աւելի մաս-մաքուր. թող մնային
 հոս-հոն փոշեհեղեղ կամ մանրիկ աւազի շերտեր, իբրեւ հիմք չա-
 րամբա պոռպոտցներու, որովհետեւ ի ծնէ խանդոտ եւ կոռուպան
 խորք ունէր իր հոգին...: Բայց, պահի մը համար, տղուն թելադ-
 րութիւնը՝ թէ դէմք դարձնէր եւ յիշէր եիմ օրերը...: զօղան-
 ջեց իր ներսզին յուշ մը հին օրերէն, երբ դեռատի, պարման աղջիկ
 էր ու նշանուած Սագօ անուն տղուն, կալի ժամանակ, դուռ միակ
 աղան՝ կոնակ տուած հասկերու դէզին, գաղտագողի ծօտեցաւ ու
 գլխէն թոցնելով խոշոր սպիտակ թաշկինակը՝ փախ տուաւ: Սագօ
 ինկաւ ետեւէն...: Պահուրտոցի պէս խաղ էր, ի վերջոյ բռնուեցաւ.
 աղան պագաւ բերանը ու զգացած երանութենէն օրեր քուն չունե-
 ցաւ...: Բարտ չեղաւ. Սագօն շտաւ գինք. ծնողքը գինք տուին
 Կարոյին, որ Պաղտոյին հայրը դարձաւ...:

Այս յուշին սպրտմով ալ նախանայը դրաւ էրկանը առջեւ:
 Այդ պագի մասին էրիկը լսած էր շատ ուշ եւ մէկ-մէկ յիշելով գայն,
 կը կոպտէր կինը:

2.

Պաղտոն եւ Սանձմը անտառ կ'երթային: Սանձմ հազած էր
 բաց-կապոյտ ֆիւթքան. շուշանի պէս սպիտակ լաշակը չէր կրցած
 լրիւ պարտկել խարտեալ օւրտի մազերը: Կօշիկները գորշափայլ
 էին, բայց քայլեր մէջ կը թուէին առած ըլլալ շորին գոյնը: Աչպար-
 ւած դէմքը կարճիւրով շպարած էր արեւալոյսը, անդրադարձուած
 վրաններու համատարած սպիտակութեամբ: Սանձմի կապոյտ խոր-
 քով աչքերը արեւի շողերը կ'ընէին սպրտմ, սակայն նայուածքը
 ներս դարձած էր՝ դէպի ներաշխարհին ձայներն ու պատկերները:
 Պաղտոն էր հետը քալողը, թէ անզիտացի սպան: Սանձմին կը թը-
 ւէր, թէ բոլորը ովքեր կային վրաններու առջեւ կանգնած կամ քո-
 վերնէն անցնող-գացողներ, իրեն կը նայէին, ծածուկ հիմք արեւ-
 նալով գաղթակալայանին մէջ ծայր տուած առասպելը գէտ նետուող
 կնոջ...: Կա՞ր նման կին մը, այդ օրերուն ջուր նետուած, թէ իրե-

նինին խեղաթիւրումը չարամիտ մէկու մը կողմէ ինկած էր կիներուն բերանը, ծամունի պէս...

Գաղթականներն հազարէ քիչ պակաս վրանները, թաղամասերով եւ լայն հրապարակներով, որոնց կեդրոնին կը բարձրանային հակայ շրամբարները, կը գրաւէին ընդարձակ աւազուտ մը, Տիգրիսի ձախ ափին: Արմաւենիներու պուրակ մը կողք տուած էր վրանաջաղաքին: Աւազաբլուրէն անդին, կէս ժամ հեռաւորութեան վրայ՝ գաղթականներն, Անդլիական հիւանդանոցի վրանախումբն էր, որ կախման կէտի պէս ինկած էր ու բաժնած Որբանոցը գաղթականներն: Որբանոցի վրանախումբին հիւսիսի կողին կը խորանար ընդարձակ անտառը հնարուն արմաւենիներու, ուրկէ ամբաս դիշեր մը, շնագայիերու կատաղած վոհմակը խածոտելով անցած էր գէպի միւս պուրակը, իր ճամբուն՝ կատաղութեան վարամը ներարկելով վրաններէ դուրս ինկած պտղածններուն բաց ոտք ու ձեռքին... Մարդկային երեք խմբաւորումները՝ գաղթականի, հիւանդանոցի եւ որբութեան կը թուէին ըլլալ առասպելական տղրուկներ, որոնք արեւան տեղ լուր կը ծծէին Տիգրիս գետէն: Անոնց կունակէն եւ մէջերնին ինկած ոչ ոքի ապապինեալ բացերէն կը սկսէր դարերէ ի վեր արեւէն խարկուած-խանձուած աւազի ծով մը, կանգ առած ալիքներու ծփանքովը, որ կ'ափէր Եփրատ գետին թումբերը:

Ատուածաշունչը կը յուշէ, թէ այս տեղ է եղած Եհովային Եղեմը իր եղեմական պարտէզներով ու անմահական խնձորի ծառերով մրգաստանները:

Կը պատմուի, թէ Եղեմը անապատի վերածուեցաւ Աղամ-Եւայի արտաքսումէն ա'յնքան դար ետք, որքան կրնային ապրել Աղամ-Եւան: Եղեմէն արտաքսուած օրը Եւա կը դառնայ, ետ կը նայի մուտքը գոցող պահակ Քերոբէին եւ անէծք կու տայ.

— Անապատ դառնաւ Եղեմ եւ դու, աւաղներու վրայ նստիս քանգի զիս արտաքսեցիր Եղեմէն, որովհետեւ ես ուզեցի սիրել իմ ընկերս, Աղամը, որ մարդու որդի էր, — ապա արցունքը կու տալով՝ կ'անիծէ ու կ'ըսէ մինձմէ ետք օտքը կոտորէ կին արարածին, որ հողիդ վրայ կը կոխէ:

Անշուշտ հայը շունէր միտքին մէջ Եւայի առասպելը: Անդլիացին թքաց էր բոլոր առասպելներուն վրայ, երբ հայ գաղթականները բերաւ հաստատեց Նահր էլ-Օմարի անապատը, առասպելական Եղեմը տուած վայրը: Հաղաբաւոր հայ կիներ ու աղջիկներ, այր մարդիկ, մանրուք ձիւ ու պիտ կը կոխկռտէին այս աւազակողը: Համաեւարակը մնացիւ էր Տիգրիսի ափին. հայրենի գետերը լաւ տրամադրուած էին, սահմանադիմ քաշելով ապահովութեան մը, զոր հայը չէր գըտած իր պատմութեան ընթացքին: Ո՞վ աչք պիտի տնկէր անյոյս այս շոր անապատին: Իսկ հա՞յր. գաղթական, մերժուած իր Ատուածմէ, զշուած իր հայրենիքէն, որբացած, անյոյս՝ մօտիկ ապագայէն Եւային անէծքը ընդունեց իբրեւ մտղթանք: Ծիշող է, թէ հասարակ, գեղջուկ, մշակ մարդիկ, իրենց լայվարին գրպանը կը պտտցնէին հայրենի տան դրան բանային, յուսալով թէ շուտով կը շփոթուէր տուն գարձի հրամանը: Իրենց միտմիտ կարճ խելքով կը ծիծաղէին մեծերու վրայ, թէ խելք չունին. աւաղի վրայ կ'ապրուի՞, Եւայի անէծքը լի՞ բունը — Կը ծիծաղէին ցոյց տալով իրենց բերին մէկ քանի փոսած առամները... Իսկ վրան-դասարանները, վրան-եկեղեցիներ, կազմի եւ գարեջուրի դործարանները մէկ տարեկան կեանք

ունէին: Բոլոր մանրուքը մինչև քսանը՝ տեսրակով դաս կը սորվէին. մէկ-մէկ ծնունդ առած կրպակները օրը օրին զըջոտութենէ կոկիկ խանութի տեսք կ'առնէին. Պատրայի շուկաները սնանկացեր էին իրենց վառ դոշն, ծաղկաւոր, փալկուռ կտոր-կտորներէն, նուշ ու շամիչէն, արմաւի չուալ-խսիր զամբիղներէն: Բոլորը եկերթափուեր էր կրպակներէն ներս: Երկիրէն, քանաքներու մէջ բերւած կարմիր սկիւն ուժ կու տար առեւտուրին: Ու կին-աղջիկ եւ հարսեր երբ կը քալէին, կը թուէր թէ դարնան ծաղկեփունջը ըլլային: Անապատը երանգ կ'առնէր ու կը շնչէր կարծէք: Ի ճեճուկս անգլխահան դաղտնի կամ քացարձակ որոշումին, — ցրուել հայկական խիտ հաւաքականութիւնը, մասնահատել, բոշայացնել թրքատեաց ուսուստէր հայ գանդուածը, հայ մեծ դուխները նահր էլ-Սմարի անապատին մէջ կը հիմնէին մեծկակ փայտաշէն թատրոն, ուր մարդիկ պիտի ցուցադրէին «Եսեղն կին», «Արցունիքի հովիտը», «Մուշան Եսեղնաւանայ» եւ ինչո՞ւ չէ՝ «Մեծն Տիգրան»՝ Հայոց արքայից արքան:



Պաղտօ, բան հասկցողի թոփչք առած՝ զբոսաշրջիկային առաջնորդողի հրճուանքով ցոյց կու տար Սանամին.

— Ան մեր կազողի ֆապրիքան, տես՝ պիտայի զործարանը. այս մեծ հրապարակին վրայ պիտի շինուի Հայ թատրոնը... Ընկիւնի վրայ աչքը կը խոթենք, թէ մենք մեռած ժողովուրդ չենք. չենք լուծւած եւ չենք ցրուիր...

Սանամ, ջովէն քալելով, մէկ կը նայէր էրիկին դէմքին, մէկ ճեռուն. կը լսէր անոր մեծախօսիկութիւնը, որ փետուրի մը թրթրուացում՝ արձագանգ իսկ չէր տար հոգիին: Հեռուն ալ ոչինչ կար գիտելիք. պղտոր երկինք մը, որ վրաններէն վեր կապոյտ հորիզոն մը շունչէր, որովհետեւ իր նայուածքը հրեք էր դէպի ներշնչարհին անկիւնները, ուր ծուարած յուշերն էին. յուշերէն նորագոյնը իր խեղդուելու պարագան էր, որ վիշտ կը պատճառէր... Ինչպէ՞ս էր դրկած իր ուշադնաց մարմինը. շօշափում էր դաղտնի որեւէ ծալք իր վրայ. կիրք զգացած էր անտէր մարմին մը առած թեւերուն մէջ ու եթէ պատահի անոր հանդիպիլ կրկին, ի՞նչ տեսուի փրարներում կ'ունենայ ճեռը... Հարցականներ դեռատի կնոջ մը կողմէն, զգացական անյայտ ապրումի մը: Պաղտօ կնոջ լուսթիւնը գտաւ վերաբրական: Ինչո՞ւ արձագանգ չէր տար իր խանդավառ երեւակայութեան. կեցաւ ու հարցական նայեցաւ Սանամին.

— Ինչո՞ւ չես խօսիր, աղջիկ, միտքդ ո՞ր է:

— Սիրտս կը կծկուի գէշ գուշակութենէ մը. ինչ ըլլալը չեմ դիտեր. բայց հանդիսս չեմ. իրօսածներդ անլուրջ բաներ են...

Դիմացը, վրաններուն արանքէն վազելով, ազապ աղջիկներ, դոյլը ձեռքերին՝ թասով ջուր կը նետէին իրարու վրայ եւ զրնդուն ծիծաղ ու ճիւղ իրար խառնած՝ փախուստ կու տային: Սանամ, որ մաքով ճեռու էր վարդապառէն, զարմացած հարցուց.

— Պաղտօ, առ ի՞նչ կ'ընեն. կռիւ ընողը փայտ կը շարտէ.

ջուրով ծեծկրտուք կ'ըլլա՞յ:

— Վա՛յ խելքի պատուկ. անոնք վարդապառ կը տօնեն, դուն

յուղարկուորութիւն կը տեսնես, — Եւ Պաղտո հա՛հա մը փրցուց. որմէ Սանամ զգաստացաւ:

— Զայնդ կտրէ, ամօթ է:

Այդ շէր բաւեր, երբ երկու աղջիկներ վրայ առին եւ զոյլերնուն ջուրը շարտեցին զոյգին վրայ: Զուրն օրհնութիւն էր ամրան տաքին: Սանամին շրջազգեստը բարորդին թրջեցաւ, բայց ան չբողոքեց ու ժպտուն նայեցաւ աղջիկներուն ետեւէն, որոնք խուսափած՝ հեռուէն կը ցանցնէին ծիծաղի ուրախ ճիչեր: Պաղտո մատ շարժեց աղջիկներէն մէկուն վրայ եւ յարեց.

— Վայ թէ բռնեք եմ:

Ու քայլեցին: Արեւը կը շողիացնէր խոնաւը Սանամի շրջազգեստէն, բայց Սանամին գէշ արամազրութիւնը փոփոխութիւն չըկերեց:

Վրանները հեռացած էին եւ անտառի մօտիկն էր: Պաղտո գարբ տեսնող ձիւն ուրախ խրխիչի պէս եւ եկաւ, երբ իրեն հասաւ ահու՛ղուռնայի եւ պար եկող կիներու երգածայնը.

Եար կիւլէ, եար կիւլէ, էս ի՞նչ կապուտ ամպ էր,
Գերման մեռնէր աշխարհ կը յախառնէր...

Նոր եղանակ էր, յօրինուած վասպուրականցիներու կողմէ: Զարմանալի էր, որ գաղթական հայը գերմանը կը նկատէր իրական թըշնամին իր ցեղին եւ պարեղանակին բառերը յատակ էին: Մէկ ինկիլիզըն էր բերդը գերմանացու կնիկը, մէկ ուսուր՝ գերմանացու հարսը: Հայն այլ բացակայ չէր անեանգումէն. չէ՞ որ կային գերմանացու աղջիկն ու եօթը պարտ հաշուող իգական սեռը՝ աղջիկ, հարս, կնիկ. բոլորը կը բերուէին եւ անեանգողները նոյն ազգերն էին՝ ինկիլիզ, ռուս, իսայ: Մինչ կիւլլէն կը խրուէր թշնամու դօշը, որ վատթար թուրքն էր, իսայի դուշմանը...

է.

Կարելի չէր երեւակայել, որ արմաւենիներու անտառը՝ չոր, սպիտակ աւազածոյին մէջ, իր վերասլաց, ճիւղարմատներու զարդաքանդակով սիւնանման բուններու վրայ զմրէթուած՝ կը նմանէր խորհրդաւոր տանարի: Արեւալուսը կը կաթկթէր ճիւղերու խոտութեան ընդմէջէն: Գետինը կը բուրբէր գարաւոր փտութեամբ անկուսմ ազրած փայտահատի եւ գորգի նման ծածկոցը թաւիչ մրմունջ կը դառնար քալող ոտքերուն ներքեւ: Անգորրութեան պահերուն, պուրակը խորհրդաւոր վախ կ'ազդէր մարդուն, որ առանձինն մուտք կը դործէր այնտեղ: Անտառին խորհրդաւոր պատրանքը կը խափանէր, երբ գապթական ժողովուրդին քառորդը, վրաններու գծոխք տաքէն հալածուած՝ հոն կը դիմէր: Արմաւենիներու անտառը կը վերածուէր տօնավայրի, ուր գհոնն ու գուռնան, յարմարեցուած բացատին վրայ՝ կը հրահրէին կտր պարը.

Եար կիւլէ, եար կիւլէ, մեր արագի քասը,
ըռուեր բերին գերմանացու հարսը...

Պարող կին-աղջիկներու շղթան կը նմանէր գարնան քաղուած ծա-

դիկներու վառ դոյներով հիւսուած պսակի, Գարագուիսը հասուն տարիքի կին մըն էր, Վարդաժառի թացը դիտի լալակին:

Գարատեղ հասած՝ անհամբեր, թամբուած միտ նման՝ Պաղտո ցատկեց պարամէջ եւ իր բախտէն մտաւ աղջիկ-կնիկ օղակին մէջ: Աչքերը փայլեցան: Աչքունք բրու Սանամին, բայց կինը մնաց պարէն դուրս. դիտեց պահ մը հրկանը ցատկըտոցը, դառն ժպիտով նայեցաւ ուսած թերթով գունամանին եւ դժուի ձայնով հեռացաւ. մտաւ ծառուղի մը: Զգաց, որ կը քալէր գորգածածկ հողի մը վրային: Կը դիտէր շուրջըտըրը: Բայց իր միտքը կը քալէր անկախ իրմէ: Անել կացութիւններու առթած դառնութիւնը կ'ապրէր կարծէք...: Կը քալէր՝ ազդուած անտառին խորհրդաւոր վախէն: Ու մէկէն յիշեց դետափին պակաս իր թրջուած լաթերով մերկանման մարմինին ա՛ծօթիւն վիճակը, օտարականի մը աչքին առջեւ:

Մարմինը սառարաց: Ծառուղին բոլորովին ամայի էր...

Առջեւէն՝ ծառուղին կտրելով վաղեց-անցաւ դոյզ մը: Աղջիկը ջուրին թաւը ձեռքը՝ կը հայածէր տղան եւ թրջուած էր: Աղջիկը վրէժ կ'ուզէ լուծել տղային, որ զինք թրջած է՝ անցաւ Սանամի միտքէն եւ զգաց, որ կողմ է աղջկան: Ինչո՞ւ գէշ: Կատակ կ'ընէ մարդ: Տեսաւ, որ աղջիկը ետ կը դառնար, սիրտը այրածի պէս դժգոհ դէմքով՝ կը թուէր, թէ լուրջ թափած էր վրիպելով նպատակէն: Սանամ հետաքրքրուեցաւ.

— Քոյրս, ի՞նչ պատահեցաւ:

— Եան լակուրը վրաս թրջեց-փախաւ, — լաց կար ձայնին մէջ:

— Հող մի ընէր. ելիք արեւին, շորքուր: Ծանօթ չէ՞... —

— Զէ՛. արեւային մէկն է. աղբօրս պիտի ըսեմ. թող թիթ-բե-բանը մէկ ընէ, — եւ Սանամ գտաւ, որ աղջիկը խաղաղեցաւ:

— Եթէ կրկնէ, ըսէ եղբորդ, աղուորս... —

Աղջիկը վաղեց դէպի արեւը, Սանամ տատամեցաւ. շարունակե՞լ: Կրնայ շար մէկն ալ իրեն հանդիպիլ եւ վրան լուր թափել: Ուսերը թօթուեց. անպիտակցաբար քայլերը առաջ դադարեցին...

Գիմացը՝ քիչ հեռու, բունի մը ետեւէն սեւ բաճկոն հագած, մօրուքով մէկը ելաւ ու քալեց իր կողմը: Անհող եւ նպատակ չունեցողի քալուածք ունէր: Սանամ նկատեց, որ ան դուրսը կախած կը քալէր, բայց յօնքի տակէն իրեն սեւեռուած էին աչքերը. Գառնիքը կը ծածկէր ճակատը: Անպիտակեց, ահին դողը բռնեց Սանամին մարմինը. կասկած մը ճշաց կուրծքին տակ: Բան շտեմնողի պէս մէկէն ետ դարձաւ: Ուսերը կ'ուզէին վազել. սակայն, հպարտութիւնը, որ երբեմն գոհ կ'երթայ անմտութեան, անխելք կնոջ մը վերածեց նախկին պարման վարժուհին: Ետեւէն եկողին տանձայնը կը դափէր դետինը ծածկող փտած կեղեւներուն վրայ: Այդ պահուն ստիճակը մերժեցին քալել: Սանամ ետ դարձած էր: Ուսին զալչելով, որպէս թէ սխալմամբ, անցաւ մօրուքաւորը եւ երկու քայլի վրայ կանգ առաւ, ետ դառնալով.

— Ներողութիւն. կարծեմ՝ դուն Գաղտոյինց հարսն ես... —

— Քեզի ի՞նչ, որ Գաղտոյինց ինչն եմ. գնա՛ ճամբար, — Սանամ քալել ուզեց. մօրուքաւորը, որ պնդակազմ երիտասարդ մըն էր, ունէր փողոցայինի լպիւր ժպիտ, երկու խոր ինկած սեւ աչքեր, որոնք կրնան ահօվ լեցնել կնոջ մը սիրտը, բռնեց ճամբան.

— Գաղտնիք մը ունիմ քեզ յայնանկաւ, լսէ՛... —

— Գաղտնիքը քեզ պահէ եւ անդին կորսուէ ճամբէս, — Սանամ զգաց, որ գէժքը այրեցաւ. երկվայրկեան ետք այտերը սըւ պըրդնեցան եւ պաղ ջրտինքը, որ լարուած-պրկուած շիզերու արտաքսած թոյնն էր, ծորեցաւ սրտին խոռոչը, արիւնը թունաւորեալով: Դողը արոճեց կուրծքին տակ, այնքան արագ, ինչպէս հեռուէն լուած թմրկահարութիւն մը: Սանամին հպարտութեան մէջ անզօրութիւնը դիրքը լքող զինուորի անով վարակուեցաւ: Էրիկը քովը չէր. հեռուն էր, բացատին վրայ պարտնեցուն շուրջ մարդոց այնքան սականջը: Ձէր կրնար պոռալ. ուժ չունէր գիմացիներ ճամբէն դուրս նետելու... Անզօր կեցաւ, որ լսէր, թէ ի՞նչ էր ուզածը մօրուքաւոր երիտասարդին, որուն քծնող ուշաշուրջ չէր խաբեր կանխազգացումը կնոջ:

— Ես մօտիկ ազգական եմ քու մարդուդ. ջնուորդի մը. քեզ առաւ, բայց վայել չէր քեզի. կէս մարդ է. իրը աղուոր աղջիկներէ չըջապատուելու հաճոյքն է եւ ոչ իրական սէրը... Գաղտնի քեզ չի սիրեր. տեսա՞ր. գնաց-մտաւ երկու սիրուն կիներուն տրանքը եւ քեզ թողուց լքուած, իսկ ես քու սէրովդ կը վառիմ...

— Լռէ՛, զրպարտիչ. անաճօթին մէկը, — խուլ ճշաց Սանամ, վեղուին տակ լռեցնելով սրիկայ խարանդը քսուք...

— Այն օրը, որ քեզ տեսայ, սափորը ուռիդ՝ լուրի երթալը սիրտս կրակ ինկաւ. կը քալէիր ջէջրանի պէս, գէժքդ՝ լուսին, աչքերդ՝ մէկ-մէկ արեւ. անոր շողին տակ՝ միացող կամիչ-եղէզ... ես: Գաղտնից հարու, նախկին վարժուհի կը դատէր, որ գիմացիին իրեն վերադրուած պատկերը բանաստեղծական էր եւ կախարդող՝ որեւէ ուրիշ մէկ աղջկայ մը համար: Սա լակտը ինչո՞ւ չի գտներ ազապ աղջիկ եւ փոփոխ սականջին նման քառեր. ինչո՞ւ եկեր ինծի կ'ըսէ, մարդատէր ազգականուհի մը, եթէ սուտ չէ աւանդ ազգականական կապը: Իրապէ՞ս մարդու սէրէն բխած են խօսքերը, որ այս պարագային սրիկայի մը վայել են... Թրքածին, անպատկառ, խենչիչ:

— Տղայ, գնա՛ դուրս ազապ մէկ աղջիկ. սիրուններ չեն պակսիր. եւ սականջին փոփոխ ինչ որ կ'ըսես ինծի եւ... ազատէ ճամբաս: Սանամ խորհեցաւ, թէ լաւ թելագրանք մըն էր իրը եւ կարծեց, որ գիմացիներ հիմա թեւեր առած կը թուշի-կ'երթայ սիրուն աղջիկ գտնելու: Մորքին մէջ, չէր համոզուած իր կարծիքին: Ահին դողը դուր կը թմրկահարէր կուրծքին տակ... Պոռա՞ր, Գաղտնի՞ կանչէր...

Գաղտնի մը համար՝ զայի աւետարան էր: Մօրուքաւոր երիտասարդը սեւեռուն միտք կը հետապնդէր: Ժանիք ցուցնելով, զոհը կրնար փախչիլ: Ինք անօթի դազան, առջեւը՝ անօգնական եղնիկը: Ոստում ըրածի պէս մռնչեց.

— Իմ ընտրած աղուոր աղջիկը դուն ես. ի՞նչ գտած ես այդ Գաղտնի ըսուած աւանակին մէջ, որ թողած քեզի պէս աղուոր կնիկ, պար կը դառնայ իշամեղուէ խայթուած աւանակի պէս... Ան կախկ... մէկն է: Եկուր տանիմ քեզ, այդ ճառերուն ետին. մարդ-մարդասան չկայ, հայտէ, աղջի. ուզածդ սիրելի թող ըլլայ... Քալէ, քալէ կ'ըսեմ. չերթաս, զոռովէն կը տանիմ...

Սանամ թէ ազուշ կարած էր եւ թէ զգաստ, ոտքերը ամուրբ բռնած, գիմացիներ եւ պայքարելու ի գին, եթէ գողոցային սրիկան ուժ գործադրէր: Մինչ միւսը կը կրկնէր.

— Քայլէ, չուտ. քու ամիսներու չտարած սէրդ մէկ անգամ մէն կը ստանաս... քեզ իմ կնիկս պիտի դարձնեմ... — այս հանդարտութիւնը մէկէն փոթորկեցաւ: Կիրքը կ'ենար մէջը: Մէկէն բռնեց Սանամին թեւը եւ աքցանի մէջ առածի պէս սեղմեց: ցաւէն պզտիկ ճիչ մը թռաւ Պաղտոյնեց հարսի բերնէն:

Քաշքշուքէն, որ տեղի կ'ունենար զսպուած լուսթեան մը մէջ, Սանամ ունէր ամօթխածութիւնը եւ գայթակղութեան հետագայ խաշտառակութիւնը որպէս զէնք: Չէր կրնար երեւակայել, որ գաղթակայանի մէջ մէկը կրնար հայ աղջկայ մը կամ հայ կնոջ մը առաջարկել նման դուհիկ արարք մը, որ ցերեկով: Չլուած բան էր այս հրէշածինին յանդգնութիւնը: Ճանկիրը սրած էր էգ կատուի պէս: Երբ յանդուգն չարագործը թեւը նետեց, որ գրկելով տանը որսը, որուն բերանը փակեց միւս ձեռքի ափով, Սանամին մէկ ճանկը քերծեց աղուն երեսկաշին եւ ուժգին հարուած մը կօշիկի կրունկին՝ անոր անպաշտպան մէկ ոտքի թոթին, այս վերջինին ահուելի ցաւը անակնկալօրէն քակել տուին թէ՛ մէջքին օղակը եւ թէ՛ բերնին կափարիւղ՝ ափը: Սանամին աչքին ինկաւ հակառակորդի մէջքի դօտին իրուած դաշոյնը, զոր քաշեց-հանեց ու ցցեց իր պատիւը կողոպտողի աչքին առջեւ: Ափսո՛ս, իր անապարանքին մէջ անճրկեցաւ շեղբը պատեանէն հանելուն մէջ: Պատուազողը ոտքի ցաւէն եւ կրքէն գերազրգոտած արջի պէս կրկին նետուեցաւ դո՛ւնի վրայ եւ ձեռքէն ձգել տուաւ դաշոյնը: Սանամի սրտէն փախուտ տուին հպարտ ամօթխածութիւնը եւ գայթակղութեան կաշկանդիչ հետահանքները: Ճիշտ, ճիշտ՝ բունէ բուն գարնանիով, խեղդուած արձազանգի նման, շնչատ՝ ինկաւ երկու չափահաս տղոց ականջը: Ծառուղիին սկիզբէն յորդած հեղեղի բերնէն փախչող վագրի պէս սուրալով, դէպքին վայրը կը մագէտին, մինչ իրենց մունչիւնը ինկած էր մօրուքուտը գաղանին ականջը եւ սրտապնդած որս-աղջիկը:

— Ծօ, սրբկայ. հասանք. բուրդդ զգուելի՛ք... անամօթ...

— Օր մը քեզ կը ձգեմ ճանկս, Պաղտոյի կնիկ, — ըսաւ մօրուքը: Ու ծառարուններուն ետեւ անյայտ եղաւ, վաղողներէն առաջ:

ՍՄԱՍ ՓԱՆՈՍԵԱՆ

(Շար. 2)

Ա. Ճ Ի Ի Ղ Ե Ա Ն

Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ս

ԱԶՔԵՐՈՒԴ ՎՐԱՅ ԿԸ ԳՐԵՄ



Ժամանակը կ'ուրանաւ,
նակատագիրս կը մատնեմ բոլորին,
յուսալիւսը կը բաշխեմ ճրի
և աշխարհէն ոչինչ կ'ազեմ,
քանզի դիրքն է մեռնիլ...

Կեանքս սուրբացայ մտացկոտ ճեղքով,
երբեմն առանց նոյնիսկ ապրելու,
և գարթնելու համար
հոգի մը փնտռեցի, որ ըլլար իմս:
Այժեր միայն կը յիշեմ,
գունաւորուած հոգեվիճակներու
սեռնողով վերապրած այժերս,
ուր ներմակ զանգ
կը համարձակիմ խուժել
խաղաղաշրթ տեսողութեամբ...

Դուք անմեղ մնայ,
երբ այժերուդ ճիւղին մէջ սեւ տեսիլքներս խառնեմ,
և զգացումներուդ ծախմը՝ գամ պահելու անհագութիւնս,
քեզ ունկնդրած ստեղծ
կծկումներդ մերժող
փոխեմ հրաւերներու համաձուլագի:

Հիմա մէկ տեղ կ'ուզեմ հագիս փոխել,
 հոգ չէ թէ հոն մեռնիմ կամ վերածնիմ:
 Առոյն ուժգնութեամբ կը տառապիմ եւ կը հրճուիմ
 ցաւերուն հետ երկունքիդ:

Բանտարկէ զիս սպիտակ
 տիեզերքին մէջ աչքերուդ,
 վայրկեանը մեր հանդիպումին
 թող լիք մեզ —
 եթէ մոյժիակ սպաննէ մեզ,
 թող սպաննէ մանւ ինձեզիմ,
 սպաննէ ողջ գոյութիւնը...

Եթէ գիտնամ ինչպէս կորուսեցամ աչքերս:
 Ե՞րբ էր տեսայ զանձնք,
 պաշտպանութիւն հայտող՝ զանկիս մէջ —
 ցանուած խեղճ գունտեր,
 անմեղ աչքերու մեղքերը խաստովանող...
 Բռնոր աչքերը մտնամ, կորուսի՛մ,
 եթէ կորսուիլը փնտրուողի սկիզբն է...

Ձիւն տիեզերք, հոսիլ մէջս, անդադար,
 որպէսզի սկիզբէն միանամ քեզի,
 ինչպէս արարիչը մտազգիտ
 կը միանայ
 վերադարձած իր ծնունդին անհաւատ...

**

Մարդ իր մարթավ կը ծեփէ երկրագունտը,
 կը կանգնեցնէ իր աստուածները,
 յարմի կը ստեղծեն կամ կ'ամբողջացնեն
 մարդ արարածը,
 գայն տէր կ'անուանեն իր մտք գոյութեան:
 Արարուածը այսպէս կ'ըլլայ արարուող,
 Մարդը՝ աստուծոյ արարիչ:

Զարմանալի մարդ մը կար,
 որ սովորութիւն ունէր
 շատ սպասելու,
 կը սատանէր, երբ վերջինն էր նայցիսկ,
 կը խորհէր միշտ՝ գիտա՞գ մնալ, թէ մասնակից...

Կայ սա պատը,
 ստառուհան մը մէջը՝
 երկարէ ձողերով:
 Ինչ որ ներսն է՝ ներս պիտի մնայ,
 ինչ որ դուրսն է՝ դուրսն է միշտ —
 ե՞րբ խօսիլ եւ ե՞րբ մտածել,
 ե՞րբ արտաբանած բառեր բերնից մէջ հաւաքել,
 ծամել եւ թփնել:

Այս մարդը չէր վախճար:
 Մեռնելու գծով նախընտրութիւններ չունէր,
 չէր կարծեր, թէ լաւ-գէշի տարբերութիւնը
 կայուն կը մնայ.
 միայն գիտէր, թէ
 դրախտի եւ դժոխքի ուղղութիւնները
 պէտք է զանազանել:
 Գիտէր հարկ է որոշել,
 սակայն միշտ կը յետաձգէր,
 յուսալով, որ օր մը մարդիկ
 թերեւս ինքնակամ,
 թերեւս անժամօք
 հրամայականի մը թելադրութեամբ
 պատուհանները կը բանան
 եւ դուրս կ'ելլեն...

ԱՐԱՄ ՃԻԻՂԵԱՆ

Ն. Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ա Յ Ի

Ա Ռ Ա Զ Ի Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

է

Արագ արագ կը թռչէին շարաթներն, ամիսներն, տարիներն, եւ մեր ամենօրեայ հոգեւոր կրթութիւնը հետզհետէ կը ծանրանային, սակայն բաց ի քանի մը ապստամբութիւններէն զորս վերն յիւսցինք, ամէնքնիս ալ չհաւատալի համբերութեամբ կը դիմանայինք եւ անպատճառ խնդումով կը լեցնէինք մեր վերակացուին սիրտը: Ընկերներէն մեծ մասն նորընծայ եղած, ոմանք նաեւ ուխտած էին, բայց ես սակաւին աշխարհի անունովս կը կոչուէի եւ չէի կրնար փիլոն հազնիլ: Վերակացուն մէկալ ուսանողաց փափաքն վառելու համար ամէն անգամ խրատներուն մէջ զրեթէ կ'ամացնէր զաննք եւ նորընծայ ընկերներին արքայութիւն մտցնելէն ետքը՝ անդթութեամբ զուռը երեսնուս կը գոցէր իսկ մենք գուրը մնացած՝ խղճալի կերպով կ'աղաչէինք որ զմեզ ալ ներս ընդունի, մենք ալ մասնակից ըլլանք վարագորին եանն եղած գուարճութեանց: Բայց նա խորհրդաւոր կերպով մը կը պատասխանէր յամպոյն թէ փիլոն չունիք որ զմեզ ներս առնու: Երբ որ իմացանք որ մեր յանգանքն փիլոն չունենալն էր, ծնրագրութեամբ եւ ջերմեռանդութեամբ սկսանք պաղատել որ մեզի ալ փիլոն տայ, մենք ալ նորընծայ ըլլանք, անուննիս փոխենք, խոշոր հատիկներով վարդարան մը կա-

խենք մէջքերնիս, կույակ(7) բանանք, երեսնիս ածիլենք, նամակներնուս մէջ փոխանակ ուսանողի նորընծայ ստորագրենք, վերջապէս շարկուինք այն ամէն առաւելութիւններէն զորոնք տարիէն տարի կը վայելէին մեր երիցագոյն եղբայրքն: Զորս ամիս անընդհատ աղայելով պաղատելով անցուցինք եւ ակաւասիկ 1880ի փետրուարի 1ին երեկոյեան ընթրիքէն ետքը արքայն հրապարակաւ կը ծանուցանէր բովանդակ մտառնութեան որ երկրորդ օրը յիւստակաւ ընծայման մանուկ Յիսուսի է տաճարն, շորս ուսանողք պիտի նորընծայուին, Աստուծոյ եւ երկինք հանելու սանդղոյն առաջին աստիճանը պիտի կոխեն: Եւ իրացնէ երրորդ օրը ես եւ երեք ընկերներս աշխարհիկ տալագ հագած, տաբատ, բաճկոն եւ նոյն նահապետին սապանին մէջ մուգըլարքային եկեղեցւոյն մէջ եւ առաջի բոլոր միարանից, որպէսզի ոչ միայն բանիւ ալլ եւ զործով մերկանանք գ'ին մարդն եւ զգեւունք գնորն: Այսպիսի մեծ շնորհք մը արժանի ըլլալու համար վերակացունիս առանձնացուցած էր զմեզ Եղիս մարգարէին ճգնարանն ի դուրս լեռինն Գորբբայ, եւ հոն վեց օր ամենեւին ուսմունք չընելով, նոյն իսկ մեր ընկերաց Երեւը

(7) Պրամսիւրն՝ tonsure.
 (8) Թուրքերէն՝ ավերակու, քիզնոց:

չտաննով եւ հետերնին շիտելով, առտընէ մինչեւ իրիկուն միայն աղօթեցինք, հառաչեցինք, մտածական ըրինք, իրատ լսեցինք, հողեւոր կարգացինք, հողեւոր խօսեցանք, վերջապէս հոգւոյ մէջ բոլորովին թաթխուեցանք: Հա՛րկ է ամէն բան խոստովանիլ. երբ որ նոր կապայ, նոր մտածակներ հագած եւ փխրնիս լոյն զբողաններն արձակած առաջին անգամ եկեղեցին մտայ, ինձի այնպէս երեւցաւ որ հարսանեկան զգեստներն հագնող մանկամարդ օրերողէ մ'աւելի դեղեցիկ եմ, եւ քիչ մնաց որ ուրախութենէս մարեմբ պիտի դար վրաս:

Ը

Սովորութիւն է որ նոյն օրուան նորընծայ եղածներն չափաւ շնորհաւորութիւններ ընդունին իրենց մեծ ու պզտիկ ընկերակիցներէն, եւ ընթերցէն ետքը շորս տեսակ անուշեղէն, Երկու տեսակ պտուղ եւ մէյմէկ դաւաթիկ Վիպրոսի գինի վայելեն: Ո՞վ կրնայ երեւակայել ամենուն երեսին վրայ նկարուած գոհութիւն, Երջանկութիւնն, ուրախութիւնը. ո՞վ կրնայ պատմել նորընծայներուն ներքին հաճութիւնը երբ կը մտածեն որ բոլոր այս շարժման, բոլոր այս հանդէսներուն, բոլոր այս բարեմաղթութեանց, ուրախութեանց, տանձերուն եւ գինւոյն պատճառն իրենք են: «Եղբայր Հմայեակ, ի՛նչ գեղեցիկ անուն ընտրեր ես». — «Եղբայր Հմայեակ, ի՛նչ աղէկ վայելք էր վերադ փխրո՞ր». — «Եղբայր Հմայեակ, ինչո՞ւ գիտ այ հետդ լատիր», կ'ըսէ անդիէն պզտիկ ուսանող մը: Այս եւ ասոնց նման խօսքերով անպաղար կը հնչէ նոյն օրուան նորընծայարանի օդն. այն աստիճանի խոր գուարթութեան մէջ ընկզմած են բոլոր սողաք, որ եթէ իմանան թէ քովի վենետիկ քաղաքը ջրերուն տակ թաղուեր է մինչեւ Ս. Մարկոսի զանգատան ծայրը, փոյթ չեն ըներ եւ իրենց հանդէսը կը շարունակեն, մինչեւ որ ննջելոյ գտնգաղի դարձուի եւ զիրենք խցերնին ցրուէ:

Երբ որ այնպէսով հասայ նորընծայ

ըլլալու փափաքիս, որ ըստ եկեղեցական կանոնաց խօսելով, աննշան արարողութիւն մ'է եւ ամենեւին չպարտաւորեր զտղայն, սկսայ պատրաստութիւն տեսնել կրօնաւորութիւն ուխտելու. միտքս ալ տակաւին խաւարի մէջ ըլլալով եւ սիրտս անձանթ ի բարախելոյ, այնպէս կը կարծէի որ բոլոր աշխարհ իմ շորս պատերուս մէջ բովանդակուած էր եւ անկէ անդին կամ քստս էր կամ դժօխք:

Ոչ անմեղովութեան այլ ճշմարտութեան սիրոյն համար հարկ է այս ալ խոստովանիմ որ դասատուներս եւ դրսի քահանայիցմէ ոմանք տեսնելով իմ ուսումնասիրութիւնս, յիշողութեանս սրութիւնն եւ լեզուադիտութեան մէջ ունեցած զարմանալի ընդունակութիւնս, մասնաւոր աչքով մը կը նայէին իմ վրաս եւ մեծամեծ ակնկալութիւններ ստացեր էին: Որով մէկ կողմանէ՝ ուսմանց եւ գրոց ընթերցման դրագած, միւս կողմանէ՝ նորընծայարանի ճղճղկէն ջերմեռանդութեանց եւ հողեւոր կրթութեանց մէջ ընկզմած, իրրեւ ստարերկրեայ Առար Թաւալի մը անձայն անշուշտ օրերս կ'անցունէի եւ բնաւ չէի կարծեր որ այս բնածին հրութիւնն, հեղահամբոյր հպատակութիւնն, պարկեշտ միաբն, անյագ ուսումնասիրութիւնն եւ աշխարհային իրաց ծայրագոյն խամութիւնը սարսափելի ապագայ մը կը պատրաստէին ինձի եւ թէ մամէ ի մամ, օրէ օր ինձմէն ինձ կը փորէի իմ ձեռքովս խորխորատ մը յորում անհրաժեշտ եւ անդարձաբար պէտք էր որ թաւաղելու ինչայի, թէպէտ եւ բզիկ բզիկ պատուէին անգամներս...

Թ

Տարի տարուան վրայ աւելնալով հասեր էինք հուսկ ուրեմն այն ցանկալի կէտին յորում պիտի բացուէին մեզի համար իրենց ժանդոտ ծղիսնիներուն վրայ նորընծայարանի ամբարիակ դրուելն եւ պիտի փոխադրուէինք ի վարժարան: Ինչպէս որ որդը կծկեալ կ'ամփսփի իւր բոժոժին մէջ եւ առժամանակ մը կը կենայ հոն մինչեւ որ թիւերն բուսնին, հաս-

տանան եւ երփնանկար թիթեռնիկ եղած՝ ծակէ իւր կեղեւն եւ զուրս յարձակի, այսպէս ալ ես ազիտութեան, թմրածութեան եւ կերպարանութեան, բարեպաշտութեան ետապատիկ պատերի մէջ իրբեւ անխրտամատիկ պարբիսպներէ պարբիսպեալ, կ'անցնէի ուրիշ բնակարան մը ուր պիտի սպասէի Հանգիստ եւ տպանով որ կրօնաւորութեան եւ քահանայութեան կրկին թիւերս բուսնին եւ աճին որպէս զի կարենամ խառնուիլ Միսիթարեան վարդապետաց դասուն մէջ:

Ինչ եւս տղայ՝ զգացմունքներոյս, մտածութիւններոյս եւ յօժարութիւններոյս, կը կարծէի որ ինչպիսի առերևույթ խաղաղութեան եւ Հանգստութեան մէջ անցան առաջին հինգ տարիներն, նոյնպէս պիտի անցնէին ոչ միայն մտացած Հինգը, այլ եւ ամբողջ կեանքս: Ձեռի կրնար ենթադրել որ իմ անհոգ եւ անարի սրտիս մէջ որ մը պիտի փչէր բուռն կրից եւ ցանկութեանց հրեղէն խորշակն, որ հեղիկ վտակի մը պէս խոտաւէտ մարմանդներու մէջէն սահելու ժամանակ, զար պիտի որ մը, որ սարսափելի, յորում խաղաղ երեսս պիտի պղտորէր, պիտի սկսէի աշիքներ յարուցանել խոնարհ տաշտիս մէջ եւ շատ նեղ պիտի գտնէի մենաստանի մը ծովածիր անձուկ շերտանակը, պիտի ջնասիտ ստասերկու տարուան միջոց ամբացած եւ կարծրացած: Թումբերս պատուել եւ արշաւասոյր պլանալ ուրիշ գետոյ մը Հեռ գրկախառնը ընելու: Լոյսոյսի(9) Որստուց ընթերցմամբ Ժրգեալ եւ թաթաւեալ վերակացու մը Ժրգեալ եւ թաթաւեալ վերակացու մը այնպէս սորվեցուցեր էր ինձի որ Աստուած զիս յորովայնէ սահմաներ եւ ընտրել է յիւր պաշտօնէութիւն, որ ինձի Համար կարելի է մէկհատիկ վիճակս կրօնաւորութիւնն էր, որ աշխարհ գտնաւորով ոչ միայն կեղտ անուն մը պիտի թողուի վանքին մէջ ուր ամենուն Համար սարսափանաց նիւթ մը պիտի բլլայի, որ յաշխարհի խեղճութեան եւ թշուառութեան մէջ պիտի տուայտէի եւ Իսրայելաւացուց Հակառակ՝ սոխ եւ խոտոր ու-

տիւռ տոննս յիշէի պիտի Հասարակաց վանքի գէր գէր լորամարդիներն եւ ամենահամ անուշակ մանանայն, այլ եւ Հանդերձեալ կենաց մէջ ալ դատապարտելի(10) պիտի դժոխաց յաւիտեանական տանջանքին: Այսպիսի դաղափարները զորոնք ամէն օր օդուն Հետ կը ծծէի, կը սողորուէին կ'արմատանային միամիտ եւ դիւրահաւան խելագատակիտ մէջ, դեռ չծնած կը խեղճէի կը մեռցնէին ի ներքս յիս ո'ր եւ է ազատական խորհուրդ, ո'ր եւ իցէ օտար եւ անձանթ զգացում, ինչպէս որ վարդի կոկոն մը որ սարդի մը ման ի ման եւ պատուածոյ թելերուն մէջ ինկած՝ շերտեր ծաղիկի եւ կենսաւէտ ծղօտին վրայ զլուրը կախած կը թռտաճի: Աստուած իւր անհուն բարութեամբն ոտուած էր մեզի Հանձարեղ եւ բարձրագոյն առաջնորդ մը, ազատեր էր զմէջ այս արտասուաց Հովտին փշերէն եւ ժայռուտ առապարներէն, մի ի Հազարաց եւ ի բիւրուց ընտրեր էր զմեզ, մեզի Համար պատրաստեր էր երկնից դրախտին անանցական վայելքները, ինչ կը մնար մեզ ընել, բայց եթէ խոնարհիլ, այսպիսի շնաշխարհիկ պարգևի մը Համար շերտ մեծամտել եւ թող տալ որ շնորհքը Անբարձր: Ո՛հ, ինչ զարհուրելի շարժարաններ, ինչ աղեկատու վտերն եւ ինչ դառն արտասուց պահուած էին այս երկու բառերուն ներքեւ: Կրօնաւորական սքեմը զոր ընտանիքս Հրապարակաց սիրցուցած էին ինձի, վերակացուս զլուստ անցուցեր եւ ես ապուրթեամբ Հազար էի, սկսէր պիտի այրել զիս, ինչպէս Նիստի (Ինչ յոնիրայի) պատմութեանն զՀերբակիւս, փախել պիտի ուզէի բայց բարոյսպէս ամէն բանադատութիւն եւ բրոնտութիւն ի զործ պիտի դրուէր իմ վրաս, պիտի յուսահատէի, լքանէի, Հիւանդանայի, ցաւերէս պիտի խնթխնայի, եւ միսիթարի: մը պիտի չգտնուէր, վերջապէս իրբեւ կենդանի մեռեալ ոչ թէ պիտի մտանայի, այլ ընդ ջարջ տարուէի առ սեղանն ահաւոր, եւ մէկ ժամուան մէջ ամէն բան լմնցած պիտի բլլար:

(9) Ignace de Loyola, 1491-1556. Թիւսուսում վիպագրութեան իմաստաբար, 1622ին օգրագրուած: Գրքի է Exercices spirituels գիրքը:

(10) Կարդա՛ զառապարտելի պիտի իմաստալ:

Ե

Այնպիսի ակզ մը ուր տարին տասու-
երկու ամիս ամէն օր իրարու կը նմանի
և և փոփոխութիւն, զանազանութիւն, նո-
րամեկութիւն բնու չկայ, ամենէն շնչին
և աննշան գիպուածն իրուամբք երեւե-
լի բան սեպուած է եւ անով կը միոյնար-
ւին մեծ ու պղտիկ, ուսանող եւ վարդա-
պետ: Նորինծայարանէն վարժարան փո-
խադարձիլը նշանաւոր սահման մըն է
նորընծային քնթացքին մէջ, մասն զի հոն
կ'աւարտէ իւր տասներորդ տարին, հոն
ձեռնադրութիւն կ'առնու եւ հոնկից դուրս
լլելիով կատարեալ Միութեան կ'ըր-
այ: Անոր համար աշխարհ մերն եղաւ
ուրախութիւնն, երբ 1863ի դեկ. 11ին
պաշտօնապէս իմացանք որ վարժարան
գոնելը բացած մեզի կը սպառէր: Այս
մեծ փոփոխութիւնն զատ ուրիշ ոչ նուազ
փոփոխութիւն մ'այ կար, այն է վերա-
կացութիւն, մասն զի Հ. Պետրոս պիտի մը-
նար նորընծայարան մեր յաջորդ դասուն
վրայ, իսկ մենք պիտի գտնէինք հին վե-
րակացունիս որուն ձեռնաց ներքեւ ան-
ցեր էր մեր առաջին տարին, բայց եւ նա
առժամանակեայ, որովհետեւ ուրիշ համ-
բաւաւոր վարդապետ մը սահմանուած
էր՝ զիս փոխանակելու մէկ տարիէն:
Շատ սրտանձնիկ բան եղաւ մեր բաժա-
նուան, և թէ մէկը դատէր արտաքուստ
երեւցածէն: Երբոր արաջն յետ մեզի
իմացնելու որ վերակացունիս նորընծա-
յարան պիտի մնար, զոննէն դուրս կ'ե-
լէր, քանի մը ջերմեռանդն դասընկերք
իրենց սրտին դառնութիւնն համարձա-
կեցան նաեւ սրբազան բարկութեամբ ե-
տեւէն կուսիսին ցուցնել սպառնալեօք,
և ասոյն մ'ելաւ թէ մինչեւ արտօք մը
թըրէր է իրենց աչքերուն եղբորր: Իսկ
ևս հինգ տարի վարժած միօրինակի եւ
միակերպ կեանքի մը, մերենայի պէս մի
և նոյն գոմծերն ընելու, թութակի պէս
այ մի եւ նոյն աղօթքներն եւ սյաքական
հոտաշանքներն միմնջելու, ապրութե-
նէ ապշութիւն ինկեր էի, եւ ոչ մտա-
ծածս զիտէի ոչ ըրածս: Չերկնցնեմ՝ զբը-
ւեցանք մեր նոր բնակարանը, եւ մեր
սրտին ուրախութիւնն ուրիշ կերպով չը-
կրցանք բացատրել, բայց և թէ կէս ժամէն

ուելի իրարու ետեւէ վազելով վերին եւ
ստորին սրահներուն մէջ, սանդուխտնե-
րուն վրայ, պարտիզին շորս կողմն. նոր
վերակացուն ալ սրտերնիս գրաւելու.
Համար, քաղցրածիծաղ դէմքով մը կե-
ցած զմեզ կը դիտէր եւ մեզի համարձա-
կութիւն կուտար:

Ելլաբ սոսմին օրերուն արեկու-
թեան գոյուրչիներն հետզհետէ ցնդեցան
և կրցայ կորստաբեր նայուածքով մը
չափել մեր նոր բնակարանին ընդարձա-
կութիւնն, ամայութիւնն եւ կարծեցեալ
առաւելութեանց տակ ծածկուած դառ-
նութիւններն եւ ցուերն, բաւականապէս
պարզեցայ եւ կշտամբեցի ինքիդնքս որ յի-
մար տղու մը պէս խաղալիքներով կը զը-
ւարձանամ եւ հրապոյրեքով կը խաբուիմ:
Որո՞նք եւ որպիսի՞ էին այս առաւելու-
թիւնքս. վարժարանին երկու կամ երեք
գուները բանալու իշխանութիւնն կը յանձ-
նուէր մեզի փոփոխակի վեց ամսէ վեց
ամիս, որով կրնայինք մէլմէկ բառ փո-
խանակել քահանայից, աշխատաւոր եղ-
բարց կամ ծառայից հետ.— սյարտէզը
կրնայինք համարձակ շրջադաշտիլ.—
երբեմն ի հարկէ ստիպելով կրնայինք
զոնազակատան զոնազակներն զարնել (ո-
րով պիտի կատարուէր տղայութեան ա-
տենի փափաքս) կամ գողաբար զան-
զակատունն երնել.— ճարտարութեամբ
կրնայինք աշխատաւոր եղբոր մը նա-
ւատարի մը կամ կովպանի հետ խօսիլ
և հետաքրքրաբար նորայրեր հարցնել
և իմանալ, — և ամէնէն աւե-
լի՝ ազատ էինք նորընծայարանի վերա-
կացութիւն հոգեւոր կարգադրութիւնները
պահելն, մահացուցմունքներէն, խղճի
բնութիւններէն, մտածականներէն: Ա-
սոր հակառակ ոչ միայն վարժարանը
այլ նաեւ եկեղեցին պարտք ունէինք
ամէն ուրբաթ աչիլու, մաքրելու, աօ-
նի օրեր զարդարելու եւ զարդը վար
ստնելու, և ամէն բանէ աւելի պիտի
պիտնայինք որ ուխտեալ եւ նորըն-
ծայ՝ վերջին բուրբի մը մէջ նա-
ւած էինք, ուր պիտի գտնուէինք, բոլոր
բուրբի թոթափէինք տուկաին վրանիս
գտնուած անհարթ կեցեւանքներէն, անց-
նէինք պիտի ընդ կորզան նկուսեանց եւ
վշտաց, մէկ խօսքով փորձութեան տա-

բիճիս իրօք վարժարանին մէջ պիտի անցնէր եւ Հոն վերջին վճիռը պիտի կտրուէր մեր գլխուն վրայ, որովհետեւ նորընծայարանի հնգամեայ վշտակութիւնքն եւ հրահանգները մանկական խաղ մ'էին եւ դրեթէ գրօտանք:

Այս կր նշանակէր վարժարանի դրան բարաւորին վրայ փորուած ԽՅՆը, յորում փրկելի հաւուն պէս ողջ ողջ պիտի յարէինք որպէսզի մահուամբ կենդանացած նորափեսաւոր զարդարուինք, եւ ի գուր փնտոէ աշխարհ մեր վրայ տասը տարուան առջի մարմնաւոր, զգայասէր եւ ախտալից ուսանողները:

ԺԱ

Ընկերներէս ոմանք որոնք չէին ուզեր զտարուիլ Մինասեան Հ. Պետրոսէն սկսան դաւաճանութիւն մեքենայել նոր վերակացուին դէմ եւ ուխտ դրին որ կրցածնուն չափ տառապեցնեն եւ տանջեն խեղճ մարդը: Սեղճ կըրսեմ, վասն զի արդէն տասնուհինգ տարի նորընծայարանի եւ վարժարանի մէջ երբեմն իրբեւ զաստուու եւ երբեմն իրբեւ վերակացու կենտոյը ամենէն դեղճցիկ ասրիներն մաշեցնելէն ետքը լալով յանձն առած էր մեր դասին ալ վերակացութիւր, մինչեւ որ սահմանեալ բնիկ վերակացուն Բարիգու Մուրատեան զպրոցին մէջ իւր մեծամեծ զործերն կարգի դնէր եւ վանք դաւնար մէկ տարիէն: Երբ որ վարժարան մտանք, արդէն երեսին տփուռնութենէն եւ բոլոր մարմնոյն հիւծումէն յայտնի կը տեսնուէր թէ հալուածալը զարհուրելի կերպով ակարացուցած էր իւր կենսական զօրութիւնը: Վանքին վեց երիտասարդ քահանանիւր պարզեւելու համար տասնամեայ երկանցցաւ կրէր էր զանազան վշտերով ու սրբօհասումունքներով, եւ հիմա իր փոսացած աչքերն, դալկահար շրթունքն, վտիտ երեսներն զթութիւն կը պաղատէին, հանդիստ կը խնդրէին, օղափոխութիւն կ'ուղէին. սակայն մեծերուն աչքերը կուրացան իր հիւանդութեան նշանները սեռնելու եւ ականջները իւրացան իր անարբաւ դանդաղութիւնը լսելու համար: Ինձ

մ'աւելի անձ մը պակաս՝ միաբանութեան համար մեծ կորուստ կամ մեծ շահ մը չէ. լեզուսն է իր անունը. եթէ մէկն իյնայ, ուրիշ մը կը յաջորդէ իրեն, եւ հասարակաց դործը յիշուի զիջ մը կը կուրայ բայց ընդհատութիւն երբէք չկրէր: Տղակուց ձմերուան եղանակին դէմ սաստիկ ատելութիւն ունեցած եմ, եւ մինչեւ հիմա խորին մաղձոտութիւն մը կը տիրէ վրաս երբ որ տարւոյն վերջին ամիսներուն մէջ արեւն օրերով իւր կենդանարար երեսը կը ծածկէ միապաղաղ ասդերու ներքեւ, կաթիլ կաթիլ տնձրեւ մը զիջեր ցորեկ կը շառաչէ եւ թող չտար որ զլուսն պատուհանէն դուրս հանեմ կամ քաղաքին մէջ կէս ժամի չափ շրջադայիմ. իսկ երբ որ հիւսիսային ցրտասարուու քամին կը փչէ կատաղութեամբ եւ դրոներու կամ լուսամուտներու ծակտններէն սպրդելով քաւարանի յուսահատեալ հոգիներու նման կը ճչէ եւ կը սուշէ, երբ շորս դին ձիւնապատ եւ սառ կապած՝ ոչ մի ծաղիկ ոչ մի կանաչ թփիկ կամ տերեւիկ չըտարթացներ տխուր աչքերս, կամայ ակամայ զուրիս զգեստիս օձիքնորուն մէջ կը քայնեմ եւ մողէի կամ առնիտի նման թմրած ընդարմացած կը մընամ: Մարմնոյս պէս միւրս ալ անպատասխան մէջ կ'իջնայ, այնպէս որ ամառան դեղեցիկ օրով մը քաղաքուսան մէջ զրաժս ձմեռը շորս ժամուն մէջ հաղիւ կրնամ լմնցնել:

Պատանեկութեանս ժամանակ ցրտոյն սաստկութենէն ձեռքերս եւ ոտքերս կ'ուռէին, կը ճաթուէին եւ անհնարին ցաւ կը պատճառէին ինձի: Կը յիշեմ տակուին որ երբ նորընծայարանի առաջին տարին ոտքերս ուռած ըլլալով չէի կրնար քալել եւ անտանելի քերտիլ կը զգայի, ինդրեցի վերակացուէս որ զարման մ'ընէ. իսկ անիկայ մարդասիրտարար պատասխան տուաւ թէ «Կոզպանին իմաց տալու է որ դայ լաւ մը քերէ»: այս հովերգական պատասխանատուութեան վրայ բոլոր ընկերներս բարձրաձայն ծիծաղ մը փրցուցին եւ ես մէյ մ'ալ փորձութիւն չունեցայ ցաւերս յայտնելու: Ուրիշ անգամներ ալ ուրիշ վերակացուներուս նոյն բունին համար զիմած եմ, եւ մէկն ըստած է թէ «Մայիսի ջրով լուսալու է ձեռքերդ

և ոտքերդ որպէս զի շցաւինք, միւսը
 տնայինի գարշահոտ եւ նողկալի բռնապա-
 մը տուաւ, զոր մի անգամ հաղիւ կրցայ
 քսէլ եւ հետևեալ օրը դառնութեամբ
 ծով նետեցի: Չեմ կրնար բացատրել թէ
 այն ցուրտ եղանակին մէջ եւ այսպիսի
 ձեռքերով ինչպէս կը զփուարէի ամէն
 շարք թէ՛ վարժարանը եւ թէ՛ եկեղեցին
 աւելի ու սրբել, եւ երբ պաշտօնէս հար-
 կայրուած՝ հիկղեցւոյն ցուրտ քարայրա-
 սակին վրայ գերեզմանաց պղինձերն
 ձիթով եւ արիպոլիան Նոզով շփելու եւ
 փայլեցնելու համար կը ծնորդըքի ու
 ճաթուած ձեռքերուս մէջ կը փչէի որ-
 պէս զի կարևորն զորք տեսնել, շատ ու
 շատ անգամ տղու պէս լացեր եմ եւ չեմ
 կրցած հասկնալ թէ քահանայ ըլլալու
 համար ինչ հարկ էր այս աստիճանի ան-
 ողորմ եւ ծառայական աշխատանքներ ր-
 նելը: Կոնստնտին համեմատ միայն դասա-
 տանը կարկ կը վառուէր, այն ալ ըստ
 կարի ոժողութեամբ, որպէս զի աղքատ-
 տութեան զէմ մեղք չզործուի: Նոյնպէս
 արդևրեալ էր կապային վրայէն հաստ
 զղևատ հաղնիլը, որով երբ որ պարտէց,
 սեղանատուն կամ եկեղացի կ'երթայինք,
 շարաշար ցրտէն բոլոր անգամներս կը
 սկսէին զոփալ եւ ակոսաներս կը կրճտէին:
 Ասկից հետզհետէ ծանր տխրութիւն մը
 պատեց զիս, ախորժակս կորուսի, բնա-
 կարանի փոփոխութեան ուրախութիւն
 եւ վարժարաննայ ըսուելու պարծանքն
 չուտով փարատեցան սրտէս, ամէն բանի
 վրայ անտարբեր աչքով կը նայէի, և
 մտօք մեր վանքի սրմերէն դուրս թեւա-
 ծելով հայրենիք դատնայու ճամբան
 փնտռելու ետեւէ ինկայ: Եթէ վերակա-
 ցունի մեր ուսումնական գարդացման
 տղիկ հող տարած ըլլալը եւ մեր միտքը
 դրողեցնէր քանի մը եւրոպական իզուտաց
 եւ որիչ կարեւոր գիտութեանց եւ գրա-
 րութեանց ուսմանը, որոնցմէ բարոյսին
 խամ էինք, թերեւս սեւ խորհրդածու-

թիւնները չպաշարէին զիս եւ վանական
 կենաց ձանձրութիւնն եւ զփուարութիւնն
 տակաւին աչքիս չզարնէր: Բայց զփրախ-
 տարբեր վարժարանի բոլոր աստղին աս-
 րին մեր ընկերութիւնն առ ի չզոյժ հաս-
 տատուն նիւթոց եւ գրագմանց՝ փուճու-
 մուն հակառակութիւններու, ցուալի կը-
 րիւններու եւ վերակացուն զէմ անարժան
 ըմբոստութեանց եւ անգթութեանց տը-
 ւաւ ինքզինքը: Ես այդ կորուստուն եւ
 բմբոստութեանց մէջ ամենեւին մտած
 չեմ, ու ամէն անգամ որ կը տեսնէի թէ
 ընկերներուս խօսակցութիւնն վիճաբա-
 նութեան կը փոխուի, շուտով կը հեռա-
 նայի քովերէն, որով շատերն սկսան
 ծուռ նայիլ վրաս եւ լրտեսի կասկած ա-
 րին:

Վեց տարիէ ի վեր տասնութէկ պա-
 տանիք մէկտեղ ապրած եւ մէկտեղ մեծ-
 ցած էինք, սակայն մէջերսին մէկ սըր-
 տակից մ'ալ շունչի, մէկուն չէի համար-
 ձակիր իմ խորհուրդներս յայտնելու եւ
 միւս անոր կը ջանայի որ ես ինձի բա-
 ւեմ ու ուրիշի կարօտութիւն չունենամ:
 Կարելի է թէ քիչ մ'ալ անձնասիրութեան
 այտու ընկերացս միայն թերութիւններն
 եւ մեղադրելի յատկութիւններն կը ցուց-
 նէր ինձի: Բայց հաստատ գիտեմ որ եթէ
 իրենցմէ ոմանք քանի մը տարի ետքը
 վրաս ցուցած սիրոյն եւ գթութեանը
 հարիւրորդ մասն այն ատեն ցուցած ըլ-
 լոյնն, ես հիմա այս մշտնջենաւոր գե-
 րութեան դատարարուած չէի ըլլալ,
 թերեւս եւ ոչ իրենք: Նորընծայարանի
 ձախող դատարարակութեան պտուղն էր
 այս, որ միայն գծիտու սիրելի ընելու
 պատրուակաւ ամէն մարդկային սէր, որ-
 դիական սէր, ընկերական սէր խլած կամ
 ցուփեցուցած էր սրտիս մէջ եւ այնպէս
 ստրկեցուցեր էր որ կատարելայ կրօնաւոր
 մը պէտք է մարուր պահէ իւր սիրտը ո՛ր
 եւ իցէ արարածական յարումէ եւ մտեր-
 մութենէ:

(Շար. 2)

ՆՈՐԱՅՐ ԲԻԻՉԱՆԴԱՅԻ

Փ. Վ Ա Լ Է Ր Ի

Ա Մ Փ Ի Ո Ն

(Ք Ն Ա Ր Ա Խ Ա Ղ)

(Երաժշտութիւն՝ ԱՐԹԻԻՐ ՀՈՆԵԿԸՐԻ)

Ա Ն Ձ Ե Ր

ԱՄՓԻՈՆ
ԵՊՈՂՈՆ (ԱՆՏԵՍ)
ՀՈՐՍ ՄՈՒՍԱՆՆԵՐԸ
ԵՐԱՋՆԵՐԸ
ԺՈՂՈՎՈՐՊԸ

ԱՄՓԻՈՆ

Լերամ մը գագաթին տեսցին հերձ մը կամ պատռուած մը կը պատկերուի երկինքին վրայ, որ կ'երեւի տեսարանի խորքին վերէն սկսեալ մինչեւ քառերարեւմին մակարդակը: Սրկու ապառաժու գանգուածներու տարտին աչ ու ձախ կամ վիթխարի ծառեր՝ կաղնիներ, հացիներ, շագանակեցիներ: Վերելը կը տեսնուի ազառածու յերկ մասը: Դէպի աշակղանամ կատարը, քարածայրը կը ստանայ թիւրեղային ձեւեր, խառնիխուսան պրիսմակներու խուրճեր, որոնց երեսակներէն ուսմէ տարտամօրէն լուսաքափանց են: Քիչ մը ձիւն կը փայլի հոս-հոն, այս քարձանց վրայ:

Թատերարեւմին մէջտեղը՝ մթին ջրակայ մը կամ ազրիւր մը: Անոր շուրջը կը ցցուին կրամիթի կամ քաղալթի գանգուածներ: Այդպիսի գանգուածներու ամբողջ կուտակում մը կը նշմարուի խորքին ու կը փակէ հերձը դէպի վար:

Անտառներու մէջ ճամբաներ եւ քացատներ յարդարուած են, ուր կըրնան ներկայացուիլ երկրորդակամ տեսիլներ:
Գիշերային երկինքը պէտք է պատկերացուի հետեւագարար Յարդգոզի

լուսանկարներուն: Լուսաւոր փաշիններով, քանի մը տարբեր մեծութեամբ աստղերով, եւ հոս-հոն, սեւ պարապութիւններով:

Վարագոյրը բացուելուն՝ ցայգային էակներ կը պարեմ, պզտիկ խումբերով, տեսարանին զանազուն կէտերուն: Ասոնք կը չֆանան, տեսանելի մընացած ըլլալով՝ թափանցիկ մթութեանց մէջ մշտաբիլի դասնալու չափ տեսն մը միայն:

Կը մտնեն աջէն ու ձախէն մարդեր ու կիներ, քրոնք գիրար կը փընտռեն, կը խօսին իրարու մշաններով, ծառերու տակ կ'երթան: Կը պատրաստուին հանգիստի, շուտով կը մտնեն թաւուտի ստաներներուն:

Հանդարտութեան մէջ՝ տիւտֆներու ներդաշնակութիւնը:

Նորասոյր եւ անմարդկային ձայն, տեսական զգիտիչ խօլպատոյտով մը թշլաղող:

Այս միօրինակ ձայնին վրայ կը ֆակուի ընդհուպ՝

ԱՆՈՒՆՔՆԵՐՈՒ ԵՐԳԸ

(Տղու ձայներ)

*Մենք, ակունքս, չի՞՞ առ չի՞՞
Ժամանակը մահահանցու յար կու լանք:
Արտասուքէն ձիւնհրուն
Կ'արտահոսէ ամէն կեանք,
Երկիրն մեզմով կ'արտասուէ
Մինչեւ ակունքը ծովին:*

(Մուտք Ամփիռնի:

Կարն ու խալ շեփոյր մը, կամ քանի մը խոպոտ խազեր կը ծափուցանեն Ամփիռնի մուտքը: Դուրս կու գայ, այժմ գետնամած վայրի, անբան էակ մը, երէշային էգ մը, կամ *Հօկիպան* մը: Ամփիռն կը սնշէ անոր վրայ, բռնի կը տապալէ գայն իր ռոտերուն: Կարն դաշոյն մը քաշելով՝ կը պատրաստուի մորթելի:

Ձայն մը

*Ինչո՞ւ, ինչո՞ւ.
Կեանքը ձոյն որ ապրի...
Թողու մահը անմահներու ձեռքերուն:*

(Ամփիռն կը շտկուի, կը նետէ գեմքը, շուրջ խոյս կու տայ փութով: Ամփիռն, վայրկեան մը վարանէլէ ետք, կ'ուղղուի դէպի տեսակ մը քարայր կամ շատ քիչ խոր խռռչ մը: Կը հանէ մորթը, որ կը ծածկէր իր ուսերը, կը նստի, կը հայի աստղագարդ երկնքին:

Յետոյ՝ կ'ընկզգումնի ու կը բնանայ):

ԵՐԱԶՆԵՐԸ

(Աստղագարդ երկինքը կը մթննայ քիչ-քիչ:

Մթութեանց դաշտին վրայ երազները կու գան այցելի մնջողին: Երկու արեւմագոյն զատերագմիկներ կը յարձակին իր վրայ: Ճիւղով մը կը լա-

փէ գիրենք: Տարօրինակ ցնցոտիներով ամճաւորութիւններ: Արծաթահիւս հանդերձանով քաղաւոր մը, եւայլն...

Ամփիռն կը տալլտկի ինքն կազանքներուն մէջ: Կ'երեւի Սիրայիճ Երազը, գոր կը ներկայացնէ պարուհի մը, գրեթէ մերկ՝ վերաբերուի մը տակ: Եւ կը փութայ իր շուրջը. կը փայփայէ գինձը, կը խազայ, կը թռչկոտի ննջող Ամփիռնի իւրաքանչիւր շարժման հետ):

ՄՈՒՍԱՆԵՐԸ

(Մուտք Մուսաներուն):

(Մուսա մը կ'ելլէ ազրիւրէն եւ կը կանչէ...).

Մուսա՛

(Երկրորդ Մուսա մը դուրս կու գայ ժայռէ մը եւ կը կանչէ):

Մուսա՛

(Երրորդ ու Չորրորդ Մուսաներ կը թաւին քաղաքի մտնող հասցիի մը ստանդարտի եւ կը կանչեն ճոյնալէս):

Մուսա՛, Մուսա՛...

(Այս կանչերը կ'ստանան ու գրեթէ համաժամանակ:
Անոնք կը կրեն պզտիկ թիւեր իրենց ճակատին:
Ստանդարտի մէջ են, ուր կը կազմեն լուսաւոր կերպարանքներ:
Կը խմբուին, ձեռք ձեռք կը բռնեն):

Առաջին Մուսան

Ես կը տեսնեմ ինչ որ չկայ բնաւ:

Երկրորդ Մուսան

Ես գիտեմ ինչ որ չկայ ոչինչ:

Երրորդ Մուսան

Ես կ'ընեմ ինչ որ պիտի ըլլայ:

Չորրորդ Մուսան

Իսկ ես, սիրելի միայն կրնամ:

Առաջին Մուսան

*Քոյրեր, չքնաղ մեղուներ,
Հնազանդիք Աստուածին, նախադրած ենք
ու մահկանացուն:*

Երկրորդ Մուսան

Քուներ գոթաբերն մէջ իր հողին կը տալլտկի:

Երրորդ Մուսամ

Կը հտուաչէ :

Զարբարդ Մուսամ

Կը հեծէ :

Երկրարդ Մուսամ

Կ'ըղճայ . . .

Առաջին Մուսամ

Ապրիլ կը կարծէ . . .

Ջգո՛վ, քոյրեր, մի գուցէ չարչարանքը անչափ,

Նախ քան արշալոյս զինքն արթնցնէ :

Փորձի :

Բայց ցրուենք նախ խառնաշփոթը սա երազներուն :

(Մուսամներու կռիւ երազներու հետ :

Կը հալածեն ու կը ցրուեն երազները : Վերջին դրուագը շնորհալի պայ-
ճար մըն է Սիրայիմ երազին հետ) :

ԱՐԱՐՈՂԱԿԱՆ ԳՐՈՒԱԳ

Արարողութիւն

(Տեսարանը կը մթնոյ բոլորովին : Խաւարին վրայ լուսաւորուած կը
մնան միայն Ամփիոնը՝ արծաթ շաղիւնի մը մէջ, Մուսամները կապտերանց) :

Ա. Գիւթանճ

(Մուսամները կը հմայեն ննջող Ամփիոնը, կը հեզում անոր վրայ դիւ-
թանճի շարժումներ, կը դառնան անոր շուրջը մրմնջելով երգասացութիւ-
նը կամ)՝

Մոգական օրերգը

Ո՛վ մարդ, որ կը ննջես,

Կը լուսաւորէ քեզ գիշերը,

Եւ լուսթիւնը Մուսամներով է հիւսուած :

(Ամփիոն կը փոխէ դիրքը : Մինչ կը բարձրացնէ բազուկը՝ Մուսամնե-
րէն մէկը կը համբուրէ ձեռքը եւ կը հանգչեցնէ) :

Բ. Հանդիսական արարողութիւն

(Մուսամները կը խոնուին այն ատեն Ամփիոնի շուրջը՝ համդիսական
կարգի մը մէջ : Մէկը՝ ստեղծում, միւրը՝ սմարթիմ, մնացեալ երկուքը՝ մարմ-
նին միւս կողմը, հանդիսատեսներուն հանդիպակաց) :

Կը դարձնեն իրենց դէմքը դէպի Երկինքը, կը պարզեն իրենց ձեռ-
քերը) :

Խմբերգ Մուսանձրու

Աստուածային Իմացականութեան
Բողոքանուէր դուտարերս սիրելի,
Թող մեր ձեռքերովը խաղաղած սա չիմըը
Յանձնէ այս մարդը Աստուածին :

Մուսա մը

Օ՛, ինչ սուրբ անդորր սա ջինջ ղէմքին :

Մուսա մը

Կը կազմուի հոն
Փպխտ մը լքուած աստղերուն :

Մուսա մը

Այս մարմինը այնքան յատուկ, այնքան խաղաղ,
Նման է բազմին,
Նման մէմին նուիրակուն...-

Մուսա մը

Ու իր Հոգին կորսուած է ուղիները կեանքին :

Մուսա մը

Յաւերժատիպ է կարծես, ինքը իրեն անձանթի :

Մուսա մը

Ա՛լ հիմա ինքն այն է միայն, որ պիտի ըլլայ :
Թող ունկնդրէ Վիհին :

(Հետաւոր որոտ :
Մուսաները կ'երկրպագեն) :

Ապողոմի ճայնը
(Ձայնը պիտի ցայ իբր քաւերաքեմին մէջտեղէն)

Ամփոռն

Մուսաները

Ապողոմն

Արձագանգները

digitised by A.R.A.R. @

Ապոդոն

Մուսանբու խմբերգը

Կատարեալ գիշերին ծոցէն ըղջեզ կ'ողջունեմ,
Ո՛վ դուն Տէ՛րը Լոյսին,
Ինչպէս քաղցր է ստուերներուն խորերէն
Լսել խօսքը գերազօր:

Մուսա մը

Դուն արարիչ արեգակին, խաւարքը քեզ կը պաշտեն
Ու մարդերը սա ահար,
Խորունկէն իրենց քունին, կ'երազեն այդ մը շքեղ,
Որ կ'իյնայ քու ձեռքերէդ:

Մուսա մը

Մահկանացու սա մարդուն արեւ այցել,
Հմայէ սիրտը իրեն,
Դեռ իր հըլու ըլլայ հնազանդ պատգամին
Սուրբ իմաստութեան:

«Ապոդոն»

Արձագանգներ

Ա-պո-դոն

Մուսանբու խմբերգը

Չարկ, ո՛վ Աստուած, հարուածէ, պայծառացուր,
լուսափայլէ
Յաւերժական ձայնովը քու
Հարուածէ զինքը, Ամփիոնը:
Ինչպէս արեւը ջինջ կը զարնէ լերան դազաթին
Ու կը շողափայլէ կատարը գերազոյն:
Հարուածէ, ո՛վ Աստուած, եկուր, ո՛վ Աստուած:

Արձագանգները

Ո՛վ Աստուած:

(Հեռաւար քրտ:

Մուսանբը երկրպագու, Յուրարեբում:

Ամփիոնին վրայ լոյսը կ'ոսկեգօծուի):

Ապոդոնին ձայնը

Ամփիոն... Ես ընտրեցի քեզ,
Հազարներու մէջէն, մէջէն ամէնուն,
Ինչպէս որ Մէրը կ'ընտրէ,
Ինչպէս կատար մը կ'ընտրուի շանթէն ահեղ՝
Ես ընտրեցի քեզ,
Լսէ՛.
Ամենախոր ոգի, լսէ եւ ընդունէ Ապոդոնը:

digitised by A.R.A.R.®

Մուսաները

Ապողոն

Արձագանգները

Ապողոն

Ապողոնի ձայնը

Հօէ՛,

Կ'ուզեմ քեզմով ըլլալ ներկայ. նոպաստաւոր

Մահկանացու սա ցեղին:

Քու մէջըդ ես կը դնեմ առջին սկիզբը — ԿԱՐԳԻՆ,

Ամենալինջ քու պահը ես պիտի բնակիմ,

Պիտ' կատարուն ախուհետեւ.

Նրեան երկրին

Գործեր յաւէտ մեծարելի,

Պիտ' յայտնուի անոնց մէջ իմաստութիւնը

երկնային,

Կը վստահիմ քեզի Հնարքը Հերմէսին,

Քեզ կը յանձնեմ Չէնքը, այն Հրաշագոր

Քնարք:

Արձագանգները

Ամփիոն, Ամփիոն,

Արթնցուր ձայնը կոյս ու յաղթանակէ դուն

իրմով.

Պիտ' որոնես, պիտ' գտնես վրան, լարերուն

Հրգորսպիրկ

Այն ուղիները, որոնց կը հետեւին աստուածներն,

Այդ սրբազան ուղիներուն հողիները քեզի

պիտ' հետեւին

Ու նիւթն անգործ եւ անբաններն հմայուած

Գերիները պիտի դառնան Քնարին:

Չինուէ՛ Քնարովն: Ի՞թանէ՛ բնութիւնն:

Թող իմ Քնարը երկնէ՛ ինծի իմ սահարն,

Ու գղժրդայ թող ապառափն յանուն անունին

աստուածային:

Քաշէ՛ ինձ համար քառսէն սա աւերները լեռներուն

Այգէն իսկ ինձ ընծայէ, սրբաաեղի մը պայծառ,

Քաղաք մ'անհուն թող շուրջպատէ գայն աղօթքով:

Եւ թող քու ձեռքերը դէպի ինծի բարձրանան՝

Ընծայելու ինձ ինչ որ ստեղծած պիտի ըլլամ ես,

Ամփիոն:

Մուսաները

Ապողոն

digitised by A.R.A.R.®

Արձագանգները

Ա-պո-չոն

(Արձագանգները կը ցրուին, կը բազմակերպեն Անուը Աստուածին) :

Ապոզոնի ձայնը

Ու դուք, չքնադադեց
 Մուսաներ բոլորանուէր,
 Ո՛վ սիրելիք, ո՛վ երկելագածք,
 Ո՛վ իմաստունք, ո՛վ այլազանք.
 Ախրեցեք զինք, պահեցեք զինքը. բայց դիտեցեք
 այլեւս իրեն՝
 Այլեւս չկայ երջանկութիւն... Ինծի համար
 լոկ կ'ապրի ինք,
 Ես զինքն ընտրեցի :
 Ինչպէս ահեղ շանթէն կուտար ժը կ'ընտրուի...

(Խալ սրտ) :

Մուսաները ոտքի կ'ելլեն : Կը համբուրեն ոտքերը, ձեռքերը,
 ճակատը Անիխանին) :

Հեռուար խմբերգ

Ամփիտն, եղբր հրաւք
 Ու սքանչելի դոհն հրաւքին :
 Գրեթէ ամբողջական գիշեր, կը լսուին Մուսաները, որ կը
 կանչեն խաւարին ձէջ :


Մուսաները

Մուսա, Մուսա', Մուսա' :

Թարգմ. ՇԱՀԱՆ ՊԻՐՊԷՐԵԱՆ

ՓՕԼ ՎԱԼԷՐԻ

(Մնացեալը յաջորդում)



Փ. Վ Ա Լ Է Ր Ի

ՊՈՆՏՄՈՒԹԻՒՆ ԱՄՓԻՈՆԻ

Վերջին ստանձակին, իր հրախաղիտ սաներուն նախածնունթեամբ ու խմբազրու թեամբ լոյս տեսն Շահան Պէրպէրեանի ստորագրութիւնը կրող շորք մը հասարկներ, որոնք կ'ընդդիմեն ժենովուն ուսուցիչին ուսումնասիրութիւններէն ու գաղափարութիւններէն պատկանելի թիւ մը: Ասոնց վրայ հաւանարար պիտի աւելնան եւ սարկներ, որոնք նոյնքան կշիռ ունին եւ անհրաժեշտ են մասուրական Եարժու՛մ բով աշխարհը բարձր հասակներուն:

Իմաստասիրական ու արուեստարտեսական կաշուածներուն վերաբերող իր տեսութիւններուն կողքին՝ Շահան Պէրպէրեան ունի նաև թարգմանական էջեր, որոնցմէ նմոյշ մըն է Փոյ Վալէրիի Ամփիոնը, որուն մեքենագիր մէկ օրինակը խմբազրութեանս տնամարդից քառասնական թուականներու իր սաներին մէկը, հաւաստիացնելով, որ տեղիս ցարդ տեսող կը մնայ:

Ինչպէս կ'երեւի, ընտրախաղին թուղմանական լեզուն կը կրէ կարգ մը անհարթութիւններ, զորս պակեցինք՝ հաւաստի թմայու համար հարազատութեան:

Նախքան ներկայացումը Ամփիոնի առասպելին, այնպէս՝ ինչպէս կազմաւորած եմ դայն եւ ինչպէս Արթուր Հոնեկըր դայն թափանցած եւ ոգեւորած է իր մեծ շունչովը, քանի մը քառուով սխտի ընեմ ձեզի իր պատմութիւնը — որովհետեւ այս առասպելը իր պատմութիւնը ունի — իմ մտածումիս մէջ:

Ճարտարապետութիւնը մեծ տեղ մը բռնած է մտքիս առաջին սերիւրուն մէջ: Պատանութեանս մեծ խանդով կ'երեւակայէի կառուցման գործը, այդ կիրքս կը սնանէր բաւական ճշգրիտ ընթերցումներով, ուրուսպծերով եւ տեսութիւններով, զորս կը կաղմէի: Ասոնցմէ աւելի կը գտնանայի եւ բան կը սորվէի, քան ուսումնասիրութիւններէս: Եւ գաղափարն իսկ կ'առուցման,

որ անցքն է անկարգութենէն կարգին եւ, կամայականի գործածումը՝ անհրա-
 ժեշտին հասնելու, կը սեւեռուէր մէջս իբր տիպարը ամենազեղեցիկ գոր-
 ծունէութեան եւ ամէնէն ամբողջականին, զորս երբեւիցէ մարդը կըցած է
 ինքն իրեն առաջնորդել, աւարտած շէնք մը միակ նայուածքի մը կը պար-
 զուէ՝ իբր համազումար մը այն դիտումներուն, հնարքներուն, ծանօթու-
 թիւններուն եւ ուժերուն, զորս իր գոյութիւնը կ'ենթադրէ: Անիկա ի լոյս
 կը յայտնարիւրէ մարդուն կամեցման, գիտութեան եւ զօրութեան բաղա-
 դրեալ երկը: Տեսողութեան անբաժանելի վայրկեանի մը մէջ, ճարտարա-
 պետութիւնը, միակը բոլոր արուեստներէն, կը բեռնաւորէ մեր հոգին մարդ-
 կային կարողութիւններու ամբողջական զգացումովը:

Բայց պատանութիւնը փոփոխամիտ է, իմ շուտով հմայուեցաւ քեր-
 թողութենէն. սկսայ գրել ոտանաւորներ՝ ինչպէս կը գրէին քառասուն տա-
 րի առաջ: Խորհրդանշականութեան շրջանն էր, մեզմէ իւրաքանչիւրը, ըստ
 իր բնութեան եւ դարոցին, դրաղած էր խօսքի մէջ կըցածին չափ աւելցնելու
 քանակութիւնը երաժշտութեան ա՛յնքան՝ որքան այդ թոյլ կու տայ Ֆրան-
 սերէն լեզուն: Երաժշտութեան այս հոգը ու քանի մը ուրիշներ, որ միացան
 անոր, զիս նետեցին արուեստներու վրայ անծայր խորհրդածութիւններու
 մէջ, եւ ջիշ-ջիշ խորհրդածութիւններ հազար նիւթի մասին, զորս ինձմէ
 շատ հեռու կրնայի կարծել:

Բայց ոչինչ հետո է միտքէն:

Պատահեցաւ, որ իմ շատ այլազան հետաքրքրութիւններու մէջ այն-
 քան մոլորիմ, որ կորսնցնեմ գրելու ճաշակը: Իմ քմայքին տուի ամէն ազա-
 տութիւն, կազմելու եւ քակելու, ստեղծելու՝ առանց դժուարութեան, եւ
 քննադատելու՝ առանց չափի, ինչ որ մտանդաւոր խաղ մըն է, մին բախտի
 այն խաղերէն, ուր մարդ ունեցածը ամբողջ վրայ կու տայ, — որովհետեւ
 մտածում մը, որ արտաքին ամէն ճնշումէ գերծ է, եւ ամէն վաւերացումէ
 ազատ, ու չի հետապնդեր որոշ արարք մը կամ գործ մը, անգէտ կը մնայ
 իր ճշմարիտ բնութեանը, որ է՝ ներգաշնակուիլ ամբողջական մարդուն հետ,
 եւ դիւրաւ կը կարծէ ինքզինք ամենակարող ու ընդհանրական. մէկ խօսքով՝
 սովորականը կ'առնէ ցնորական շահարածիները եւ երեւակայական գործո-
 ղութիւններ:

* *

Ճարտարապետութիւնը, բարեբախտաբար, որ հմայած էր երիտասար-
 ղութիւնս, իմ խորս ձգած էր որոշ ճաշակ մը հաստատունին, որոշ տիպար
 մը իրական կառուցման, որով եւ՝ որոշ գգուչութիւն մը այն վնասի եւ ա-
 ւերման պայմաններուն նկատմամբ, զորս ի գործ կը դնէ իրականութիւնը
 ամէն բանի ու մասնաւորաբար մաքին գործերուն վրայ: Կառուցման Արուես-
 տը կը յիշեցնէ մեզի, թէ ոչինչ ինքն իրմէ կանգուն կը մնայ, եւ թէ՛ ուրիշ
 բան է զեղիցիկը սերելը եւ զայն յղանայր, եւ բոլորովին ուրիշ բան՝ զայն
 ուրիշներուն ըմբռնելի ընելը: Ինչպէս որ ծանրութեան օրէնքը կը դործէ եւ
 իր կերպովը կը դասէ ճարտարապետին հրկը, զոր կ'ենթարկէ տեւական եւ
 անխնայ քննադատութեան մը, այսպէս ալ ամէն նիւթի մէջ: Ամէն արտա-
 դրուած բան, որ, հազիւ ծնած՝ վտանգի մէջ կ'ապրի, պարտի տանիլ դի-
 մացկունութեան փորձեր ու հաստատուած գիմարքել օրինաւոր առարկու-
 թեան, անտարբերութեան եւ մոռացման: Այս շատ հիմնաւոր նկատողութե-
 նէն կարելի է գործս բերել մեծ հետեւողութիւններ, նոյնիսկ գրականութեան
 մէջ, եւ մինչեւ իսկ բանաստեղծութեան: Նոյնիսկ ամենաթեթեւ կործներու

մէջ, պէտք է խորհիլ տեւականութեան մասին, այսինքն՝ մարդոց յիշողութեամբ, այսինքն՝ Պելլիմ, ինչպէս մայր եկեղեցիներու սլացքներու եւ աշտարակներու կառուցանողները կը խորհին անոնց կերտուածքին:

Քանի որ այնքան ազատօրէն կը խորհէի այնքան բաներու, բաւական յաճախ երաժշտութեան եւ նոյն այդ ճարտարապետութեան, ճակատագրականօրէն պիտի պատահէր, որ մէկուն ու միւսին կարող մը յարաբերութիւնները դային զուարճացնել միտքս: Շատ դիւրին է նոխարայ այդ յարաբերութիւնները, փափուկ դործ՝ զանոնք ճշգրտելը եւ ուսմանելը, եւ անկախի չէ՛ զանոնք կասկածի տակ դնելը, որովհետեւ ամէն ինչ որ գեղագիտական է՝ ենթակայ է տարակոյտին: Բայց ինձի համար, անոնք կը թուին ամենապայծառ, ինչ որ կը նշանակէ, թէ մեծապէս կը բաղձայի, որ դոյութիւն ունենային, եւ այս կը բաւէր իրենց դոյութեան: Շատ հետու էի առաջինը ըլլալէ, որ փափաքած ըլլար զանոնք, որով եւ՝ նմարած:

Եստակ է, որ երաժշտութիւնը եւ ճարտարապետութիւնը արուեստներ են, որ հաւասարապէս պէտք չունին նմանագործելու իրերը. արուեստներ են անոնք, որոնց մէջ նիւթեղէնը եւ ձեւը շատ աւելի մտերմ առընչութիւններ ունին իրարու հետ, քան միւս արուեստներուն մէջ: Մին եւ միւսը կը խօսին ամենարեզանուր զգայնութեան: Երկուքն այ կ'ընդունին, իբրեւ ամենագործիչոց՝ կրկնութիւնը. երկուքն այ դիմում կ'ընեն մեծութեան եւ զօրութեան Փիղիբական ազդեցութիւններուն, որով կրնան դարձացնել զգայարանները եւ միտքը՝ մինչեւ ջանքախումբ: Վերջապէս, իրենցմէ իւրաքանչիւրին բնութիւնը, իր կարգին, թոյլ կու տայ կամ կը թելադրէ ամբողջ պերճանք մը բազմաբնութիւններու եւ կանոնաւոր ընդլայնումներու, որով կը կապուին կամ կը համեմատուին երկրաչափական կամ մաթեմատիք վերլուծման: Էականը կը մոռնայի — շարակարգումը (այսինքն՝ ամբողջին կապակցումը մանրամասնութեան հետ) շատ աւելի զգայի եւ պարտադիր երաժշտութեան եւ ճարտարապետութեան դործերուն մէջ, քան այն արուեստներուն, որոնց առարկան է վերարտադրել տեսանելի էականներ, որովհետեւ ասոնք, իրենց տարրերը եւ օրինակները փոխ առնելով արտաքին աշխարհէն, արդէն չինուած եւ իրենց լինելիքին մէջ արդէն իսկ հաստատուած իրերու աշխարհէն, ասոր իբր արդիւնք իրենց մէջ կը կրնն որոշ ազդեցութիւն մը, որոշ ակնարկութիւն մը այդ օտար աշխարհին, աստիճանով մը երկդիմի եւ պատահական սպառութիւն մը:

Այս ամէնը չէր խուսափած անշուշտ այն յայտերէն, որոնք ամէն ինչ տեսած են: Հիները խորհրդածած ըլլալու էին յոյներու արուեստին եւ զանգուածներու ու հեռապատկերներու արուեստին այս նշանակելի համապատասխանութեանց վրայ, բայց զգօս ու չքնաղ իրենց սովորութիւնն էր պատկերացնել իրենց գաղափարները: Անոնք կը սիրէին ձեւացնել, ծպտելու համար իրենց բնագիտական կամ բնազանցական թեկերը, անձերու տրամաներ, որոնց ստորոգիցիները եւ դործունէութիւնը կրնային հաւասարապէս առնուիլ թէ՛ իրենց երեւցածին նման, եւ հաճոյացնել իբրեւ հեքիաթ մը կամ պատմութիւն մը, թէ՛ ալ ձեկնուիլ եւ թարգմանուիլ իբրեւ հեքիաթ մը կամ պատմութիւն մը, եւ գիտութեան արժէք՝ իբր մտածումներ: Մինչդեռ, մեր առասպելները բոլորովին վերացական են: Ասով չեն զարթիր առասպելներ ըլլալէ: Մեր գաղափարները մարմին չունին: Մեր կմախքներով կը խորհնք: Մենք կորուսած ենք զեղեցիութեան միջոցով նշանակելու մեծ Արուեստը:

Ինչ որ քիչ առաջ ըսի՝ օրինակ մըն է ասոր: Զոր կերպով ամփոփեցի ճարտարապետութեան եւ երաժշտութեան միջեւ կարելի մերձեցման մը փաստարկութիւնը: Ու բաւական ցուրտ նկատողութիւններ եզան անոնք: Բայց

երևակայինք Հիմա այդ բոլորին մէկ մարմնաւորումը: Տեսէք թատերարեմ մը, կազմեցէք ձեր փափաքածին չափ գեղեցիկ անձնաւորութիւն մը, որքան կ'ուզէք պնդականօրէն հանգերմուած ու դրուած ամենարանաստեղծական բնավայրի մը մէջտեղը: Շոայլեցէք իր շուրջը ժայռերն ու ջուրերը, լեռներու ուղեքին բարձրացուցէք խիտ ու ժանտատեսիլ (ինչպէս կ'ըսէին ատանօք) անտառ մը, հաստատեցէք սրբազան երկիւղը ու մի մոռնաք, վերապահալ ստուերներու մէջ, փայլեցնելու խորհրդաւոր աղբիւր մը, ուր կը կրկնուի թշնիկ մը երկինքին երեսը:

**

Ամէն ինչ այսպէս յարգարուած. մեր գազաթերն ու ապառաժները, մեր ծառերը եւ աղբիւրները, եւ անոնց միջեւ մեր հերոսը լաւ մը հանազերմուած ու կանգնած, ահա, Հիմա, կը սցոսի, կ'ոգեւորուի ու կը գործէ: Իր ձեռքերուն կը փայլի քնար մը: Գրոհ կու տայ լուսեօրէն դէմ ու զօրութիւններովը իր երգին ու աստուածային լարերուն, զորս իր մտանքը կը յուզէ, ցրիւ քարերն ու ապառաժները կը դպրդին, կը թաւալին կամ կը քաշին՝ գայթեմ ու կրկին օստնելով դէպի վայր մը, ուր կը ժողովուրուի իրենց կոյտը, որ քիչ-քիչ ձեւ կ'առնէ եւ կը կարգաւորուի, ու կը կազմաւորէ կատայ մը, — Տանար մը:

Ահա ամփոփի սաղմը:

**

Քանի մը տարի այս սաղմը ընացած մնաց մտքիս չեմ գիտեր որ ծալքին մէջ... Ընդմիջտ մնացած պիտի ըլլար հոն, երիտասարդութեան դադափարներու այնքան ուրիշ հետքերու հետ, եթէ Քոտ Տեպիւսի հետ խօսակցութեան մը պատահարը, իրիկուն մը, վերականգնանացուցած, գոյութեան վերհոյած ըլլար այս կարեկիտութեան հատիկը:

Ըսի՞, թիչ առաջ, թէ այդ հետաւոր շրջանին, յօժարակամ կը ձգէի ինքզինքս տեսական երեւակայութիւններու մէջ: Մասնաւորաբար ես ինծի կը հարցնէի երբեմն, սքանչելի ազատութեամբ մարդու մը, որ գործ պիտի չունենայ իրականութեան հետ եւ որ երբեք գործադրութեան եւ գործի պիտի չանցնէ, ես ինծի կը հարցնէի եւ կը պատասխանէի՝ մեծալայելուլ ոճով գործերու կազմաւորման եւ յօրինումին մասին, եւ այն գործերուն մասին, որոնք միաժամանակ կը ձեռնեն զոնպառն տեսակի միջոցներ, ինչպէս օփերան է: Օփերան ինծի կը թուէր քառս մը, անկանոն գործածութիւն մը քնարական, նուազախմբային, թատերական, նմանախաղային, ձեւակերպման, պարագրային մասերու, մէկ խօսքով՝ կուպիտ հանդիսարում մը, քանի որ ոչինչ կը հրամանակարգէր տարբեր գորութիւններու ի խաղ գալ եւ հասկարուիլը, քանի որ ոչինչ կը սահմանափակէր անոնց գործողութիւնը, ու քանի որ գործին ամբողջը մատնուած էր խօսքերը գրողին, երաժիշտին, պարագրողին, տեքստներու, նկարիչին, բեմադրիչին եւ դերակատարներուն հակամէտ ներշնչումներուն:

Ըսի Տեպիւսիին, թէ կ'ընդունարէի արտաուոց դրութիւն մը, Հիմաբուած՝ միջոցներու վերլուծման եւ խիստ (թէ եւ կամայական) պայմանադրականութեան մը վրայ, որով այդ միջոցներէն իւրաքանչիւրին կու տայի կատարելի շատ որոշ եւ շատ ճշգրիտ պաշտօն մը:

Այսպէս, նուազախումբը եւ երգը կը ստանային խորապէս տարբորջ

պաշտօններ, թատերական գործողութիւնը, նմանախաղութիւնը եւ պարը խստորէն բաժնուած էին եւ առաջ անցուած իւրաքանչիւրը իր ասեմին ճշգրտէն որոշուած աեւողութիւններով: Առաջ զայցի, կարծեմ, մինչեւ բեմին տարածութիւնը բաժնելու տեղերու, մակարդակներու եւ յարկերու ու այս զանազան մասերը պէտք էր իւրաքանչիւր գործի մէջ ռահմանուէին, այսինչ ու այնինչ երգով, կամ պարով, կամ նմանախաղոց խումբին, կամ նոյնիսկ անձնաւորութեան՝ այլամերթօրէն: Տարածութեան իւրաքանչիւր մասին առէր տսիկա գեր մը, ինչպէս՝ իւրաքանչիւր դերակատարի: Նոյնը նաեւ տեւողութեան համար, որ բաժնուած պիտի ըլլար եւ նոյնիսկ ճշգրտօրէն... Ժամանակափոխած: Բացի այդ, լոյսը, տեսարանը պարու էին ենթարկուած ըլլալ ոչ-նուազ բանաւոր պայմաններու, եւ ամբողջութիւնը պիտի ներկայացնէր Երեւակայելի ամենակատարեալ գրութիւնը պարտադրութիւններու եւ աշխատութիւններու բաժանման, կարգապահութեան եւ Ձեռնկամ կառուցման խրախճանք մըն էր ասիկա: Թոտովանիմ հոս, թէ Ձեւի պայմաններէն մեկնող, ե՛ւ ընելու, ե՛ւ չիներու այսպիսի պարտադրութեանց զումարմամբ միայն կազմուած գործերու ստեղծումը իմ ամենաբերելի երազներէս մէկը եղած է: Հաճեցէք դիտել, թէ ասիկա Աերշնալ կոչուած բանը փոխադրել է մեծ մասով գործին պատրաստութեան շրջանին: Այդ ժամանակ (ատեն մը, երբ դեռ կը գնահատէին հնչեակը), ես սովոր էի ըսելու, թէ հնչեակը հնարողը աւելի վեր կը դասէի, քան այդ ճշգրիտ Ձեւով պզտիկ քերթուածներէն դեղեցկազոյնին հեղինակը:

* *

Բառ մը միայն կ'աւելցնեմ տեսական ոգիի այս արտառոց յղացումին մասին, որմէ, մնաց որ, բոլոր մակածութիւնները չեմ յիշեր այլեւս: Ինծի այնպէս երեւցաւ, որ իմ գրութիւնս ծայրասահմանին տարուած էր, գրութիւն մը, որ իր պայմաններու զումարովը մեթոտիք կերպով կը մերժէր բեմին վրայ կեանքին ուղղակի նմանեցումը, անմիջապէս որ այդ նմանեցումը պիտի կարենար սոցցնել տալ գործին խոր իմաստը, — ինծի այնպէս երեւցաւ, որ այս գրութիւնը շատ կը մտնենար թատերական ներկայացման մէկ ծիսակամ ըմբռնումին...

Թատերական սովորական գործողութեան մէջ, շարժումները, շարժումները, ժամանակները ենթարկուած են միայն «կեանքին» զամենաճշմարիտ» եւ ամենազղու ներկայացման:

Պայմանագրականութիւնը հոն մասնաւորաբար կ'երեւի միայն ոտանաւոր գրուած գործերու եւ օփերաներու մէջ, անմիջապէս որ դերակատարները բերաններն բանան: Դիտելի է այն ատեն, որ ուրիշ գրութեան մը կը պատկանին իրենց խօսքերը, եւ իրենց արարքները՝ ուրիշ, մինչդեռ այդ անձները կը գործեն այնպէս՝ ինչպէս կարելի է գործել, անոնք կ'արտայայտուին այնպիսի եղանակով մը, ինչպիսով կարելի չէ արտայայտուիլ (կեանքին մէջ): Հոյ տարօրինակութիւն մը ու տեսակ մը ազատութիւն կայ, որուն վարժուած ենք՝ անոր դիտակցութիւնը չունենալու ստախճան:

Բայց ենթադրելով, թէ ուզենք, որ ներկայացումը ըլլայ աւելի զուտ, այսինքն՝ համասեւ, կամ իրապարժման բոլոր միջոցներուն մէջ հաւասարապէս հետու կեանքէն, կը բերուինք այն ատեն պայմանագրական պայմանները պարտադրելու անձնաւորութիւններու արարքներուն եւ, հետեւաբար՝ այն միջավայրին, ուր անոնք կը շարժին, ու իրենց ներկայութեանց տեւողութիւններուն եւ յաղորդական յորինուածքներուն: Ասով կրնան յառաջ գալ

նշանակութեան արժէքով քարոզ գործեր. ու ահա թէ ինչու գործածեցի ծի-
ապկան քառը:

Տեսիլւոյի շատ փոքր կարեւորութիւն մը տուաւ այս ըստ երեւոյթի
այնքան բարդ ըմբռնումին, որ թէեւ իր սկզբունքին մէջ շատ պարզ էր:
Ու ես ինքս անոր մէջ քմայք մը միայն տեսած ըլլալով, խնդրեցի անհետե-
ւանք մնաց:

Մեծ թիւով պարագաներու հանդիպում մը հարկ եղաւ վերակենդա-
նացնելու համար հերոսս եւ իրեն հետ մի քանին այն յանդուգն դադափար-
ներէն, որ իրեն տուած էին քնարերգական ու բեմական գոյութիւն մը իմ
մտքիս մէջ: Հարկ եղաւ, որ ծնի շնորհով: Հարկ եղաւ, որ Տիկին Ռիւբի-
նըլտայնը փորձուի այս շատ բանաստեղծական արտայայտչէն եւ նոյնիսկ բո-
լոր այն դժուարութիւններէն, որոնք իմ մասնաւոր դադափարներս անոր ի-
րազործման դէմ կը հանէին:

Ուրեմն՝ գրեցի «Ամփիլոն»ը ու զայն կոչեցի քնարախաղ: Ուրիշ բան
չգտալ որակելու համար այս գործը, որ յայտնապէս ո՛չ օփերա մըն է, ո՛չ
թատերապար մը, ոչ ալ օրաթորիւմ մը: Իմ մտածումիս մէջ, կրնայ եւ պար-
տի մօտենալ կրօնական նկարագրով արարողութեան մը: Գործողութիւնը, որ-
բան ալ սեղմ, պէտք է ինքն ալ ենթարկուի իր պահերէն իւրաքանչիւրին ի-
մաստային ու բանաստեղծական էութեան:

Աւարտելով՝ կ'ուզեմ քանի մը բառ ըսել ձեզի իմ երաժիշտիս մասին:
Ձինք զրի թերեւս ամենագոյնի հարցին առջեւ, զոր երբեք երաժիշտ մը
կոչուած ըլլաք լուծել: Եւ թե՛ Ամփիլոն, բոլորովին նախնական ու բար-
բարոս մարդ, Ապոզոնէն կ'ընդունի քնարը: Երաժշտութիւնը կը ծնի իր մատ-
ներուն տակ: Մնուկ երաժշտութեան ձայներով քարերը կը շարժին, կը միա-
նան. ճարտարապետութիւնը ստեղծուած է:

Ուրեմն, այսպէս, երաժշտութիւնը պէտք է երեւի իր բովանդակ ու-
ժին եւ ճոխութեան մէջ՝ հերոսին կողմէ աստուածէն եղած պարզեւին ըն-
դունուելէն եւ իւրացուելէն ետք միայն: Երաժշտապէտը, ուրեմն, ենթարկ-
ւած է հետեւեալ ամենախիստ պահանջներին: Այն է՝ ամբողջ առաջին մասին
մէջ պէտք է գործածէ նուազագոյն միջոցները, զրեթէ միայն մարդկային
ձայներ, ու քանի մը նուազարանային հարուածներ, քանի մը ձայնի գիծեր
եւ զրեթէ աննշմարելի դժպտութիւններ, որոնք վեր բունն նմանախաղա-
թիւնը ու պարը: Մէկ խօսքով՝ զրեթէ բնաւ երաժշտութիւն՝ առաջին փուլին
մէջ եւ, բովանդակ երաժշտութիւնը՝ երկրորդին:

Նուազագոյն երաժշտութիւնը՝ նախ: Առաւելագոյնը՝ յետոյ:
Որովհետեւ Հոնեկըրէն պահանջեցի սա միւս սիրազորութիւնը. քա-
նի մը վայրկեանի մէջ, այն պահէն սկսեալ, ուր Ամփիլոն կը դանձ կամ կը
հնարէ ձայներու Արուեստը, ընկէ շանթահարիչ մէկ ցուցահանումը այդ-
արուեստի բոլոր միջոցներուն, ձայնաշարէն սկսեալ մինչեւ այն մեծ խու-
սանուազը, զոր պիտի լսէք քիչ ետք...

Ինծի պէտք էր մեծ երաժիշտ մը. ունեցա՛յ զայն:

ՓՕԼ ՎԱԼԷՐԻ

Ա. Պ Ա Լ Ե Ո Ջ Ե Ա Ն

Պ Ի Լ Ե Ի Վ Ա Ս Ի Լ

- Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Ե Ր Կ Ո Ւ Հ Ա Յ Ե Ր Ո Ւ

Մակարդակի մը վրայ, այս մէկը պատմութիւնն է երկու մարդոց, որոնք երբեք չեն հանդիպած իրարու: Այլ մակարդակի մը վրայ, առանձին ինքնութեան մը, այսինքն՝ հայ ազգի պատմութիւնն է: Ինչ որ կը նշանակէ, քու եւ իմ եւ ողջ կամ մեռած իւրաքանչիւր հայու մասին է: Եւ ասիկա մտացածին պատմութիւն չէ, այլ՝ իրողութիւն: Պատահած է: Սկիզբէն մինչեւ վերջ: Ոչինչ աւելցուցած եմ:

Պիլը (20րդ դարու ամերիկացի հեղինակ մը) եւ Վասիլը (Յրդ դարու յոյն կայսր մը) բնորեւութեամբ պատճառներէն մէկը այն է, որ անոնք լաւապէս կը դրսեւորեն եւ կը համարուեն կատաղօրէն հպարտ սազմիկ ցեղի մը աստիճանական շրջափոխութիւնը հօրեղբայր թոմերու:

Տիպարներու օտար անունները թող չխտրեն ձեռք: Երկուքն ալ հայեր էին եւ այս ազգակը միակ հասարակաց յայտարարը չէր իրենց անհատականութիւններուն: Երկուքն ալ փառասէր եւ մեծապէս շնորհալի մարդիկ էին, որոնք միջազգային համբաւի տիրացան: Երկուքն ալ, որոշ չափով, լուծուած էին, հակառակ անոր, որ կը պահէին գիտակցութիւնը իրենց ազգային արմատներուն: Երկուքն ալ ծնած ու մեծցած էին օտար հողի վրայ — Պիլ՝ Գալիֆօրնիոյ մէջ, Վասիլ՝ Մակեդոնիոյ: Ըլլալով դաւակները թըշուառ դաղթականներու, երկուքն ալ զուրկ էին կանոնաւոր ուսումէ: Երկուքն ալ ունեցան զաւակներ, որոնք հետեւեցան իրենց քայլերուն — Պիլի որդին՝ Արամ՝ գրադանութեան մէջ, Վասիլի որդին՝ Լէօ՝ քաղաքականութեան: Անոնք իրենց հայրերուն առնչուած յուշեր դրեցին — Արամի յուշերը բիրտ ու դառն բացայայտումներ էին, Լէօյինը՝ փառահեղ յաղթերութիւն մը: Մակայն սկսինք սկիզբէն եւ ժամանակագրական կարգով:

Երբ Վասիլ ծնաւ Յրդ դարու սկզբնաւորութեան՝ Հայաստան, ինչպէս այսօր, փոքր եւ մասնատուած երկրամաս մըն էր, շրջապատուած արիւնար-

բու զեր-ուժերով: Կացութիւնը շատ չէր փոխուած ասորեստանցիներու օրէն, որոնց Գ. Ա. Լըբորզ հազարամեակէն եկող աղբիւրները կը խօսին Արարատ լեռան շուրջ գտնուող տարածութիւններու վրայ կատարուած պարբերական ներխուժումներու եւ ջարդերու մասին: Հայաստան, ատեն մը, կրնայ դբախտի աշխարհագրական տեղամասը եղած ըլլալ, սակայն Հին Կտակարանի օճը աստիճանաբար ծանրամարտին վիշապի վերածուած է — կրակ արտաշնչող ռազմի վիշապը — եւ երկիրը դարձուցած յարստեւ ռազմադաշտ: Կեանքի այդ բիրտ սլոյմանները, բարոյալքելու եւ տկարացնելու փոխարէն՝ տեղացիները զօրացուցած են եւ դարձուցած ինքնավստահ, հպատակելու կամ գաղութատիրելու համար: Գործակցութիւնը անոնց արեան մէջ չէր: Ատեն մը ետք՝ նոյնիսկ հոռոճացիները անոնցմէ հրաժարած էին: Քասիթիւս իր «Տաւրիստրիսմներու» մէջ, տեղ մը, հայերը կ'անտեսէ իբրեւ «անորմ ցեղ», այսինքն՝ անհաւատարիմ ժողովուրդ, որովհետեւ անոնք մերժած էին դործակցիլ Հոռոճի հետ: Այլ խօսքով, անոնք անհաւատարիմ էին հոռոճական դատին, հաւատարիմ՝ իրենց դատին — ուշագրաւ տարբերութիւն մը, որ կը թուի խոստովանած ըլլալ Քասիթիւսի պէս կայսերապաշտի մը կողմէ, որուն համար կայսրութենէն դուրս գտնուող աշխարհամասը խայտառկէտ հաւաքածոյ մը կը կազմէր՝ քաղաքակրթուելու կարօտ բարբարոսներու:

Վասիլի ժամանակ, տյինքն՝ մօտաւորապէս 3000 տարուան դրեթէ շնորհաւորուած պատերազմի, ներխուժումի, ջարդերու եւ տեղահանութիւններու շրջանէ մը ետք, հայերը Միջին Արեւելքի մէջ ծանօթ էին իբրեւ հրաշալի պատերազմիկներ. մեծապէս յարգուած արհեստավարժներ այս մարզին մէջ: Մէկ մասը անոնց, որոնք ձոն Գուրգուասի (Օհան Գուրգէն) եւ Մեւրասի (Մեհ) պէս սնուններ ունէին, հերոսական տարողութիւն ունեցան: Ամբողջ դիւցազնիւրդութիւններ նուիրուած են իրենց քաղաքործութիւններուն: Այս բանաստեղծութիւններուն մէկ մասը գրուած է յունարէնով, որ, այն ատեն, ամենատարածուն լեզուներէն մէկն էր քաղաքակրթ Արեւմտաքի: Այս բանաստեղծութիւնները, իրենց կարգին, ներշնչման աղբիւր դարձած են այլ բանաստեղծութիւններու, ուրիշ երկիրներու մէջ:

Իր մանկութեան՝ Վասիլ յատուկ կերպ կը տածէր ձիերու հանդէպ, սակայն իր բնտանիքը շատ աղքատ էր ձի մը ապահովելու՝ տղուն անձնական գործածութեան համար: Այնպէս որ, երբ Վասիլ ժամանակը եկաւ՝ բախտը փորձելու մայրաքաղաքին մէջ, ան ստիպուեցաւ այդ երկար ուղեւորութիւնը հետխօսն կատարել:

Կոստանդնուպոլիսը (կամ պարզապէս Is-tin-poli, «քաղաքը» յունարէնով, որ աստիճանաբար «Իսթանպուլ»ի վերածուեցաւ) քաղաքական, առեւտրական եւ մշակութային անտարկելի կեդրոնն էր ծանօթ աշխարհին: Մօտաւոր զաղախար մը կազմելու համար անոր նկարագրին եւ կարեւորութեան մասին, ժամանակակից ընթերցողը պէտք է պատկերացնէ Ռաֆիկ-Քըն, Մոսկուա, Լոնտոն, Փարիզ եւ Նիւ Եորք քաղաքներու միաձուլումը: Մրցակցութիւնը բիրտ կոչուելու շափ սուր էր հոն, սակայն, նոյն ատեն, նորը, ինամուած, յղկուած, կատարելագործուած, ծիսակատարային եւ բարդ: Ամէնէն աւելի՝ բարդ: Մինչեւ այսօր, բիզանդական բառը հոմանիշ է կենսոտին, մասնակիցին եւ առեղծուածայինին: Ջօրեղ, մափնայի ոճով խմբաւորումներ եւ ընտանիքներ կային՝ խաչածեւոյ լահերով, ազդեցութեան դօտիններով եւ լրջախոխուող հաւատարմութիւններով ու դաշնակցութիւններով: Իսկապէս գիշատիչներու բոյնը յիշեցնող այս համակարգին մէջ մըտաւ երիտասարդ Վասիլ եւ բարձրացաւ մինչեւ կայսերական դահլ՝

Բախտը ոչ մէկ դէր ունէր այս զգայացուց յաջողութեան մէջ, Կա-

բնի է ըսել, որ այս բոլորը նոյնիսկ սկնկալելի էր իրմէ, որովհետեւ, այն ատեն, իւրաքանչիւր հայ ազայ հասակ կ'առնէր այն հաւատքով, որ կրնայ կայսր դառնալ, ճիշդ այն նոյն ձեւով, որ այսօր իւրաքանչիւր ամբրիկացի աղայ համոզուած է, որ նախազահեթեան դուռները լայնօրէն բաց են իր դիմաց: Եւ շատ մը հայեր, Վասիլէն առաջ եւ ետք, իսկապէս բազմեցան Բիւզանդիոնի կայսերական զահին վրայ, որ զրեթէ ամբողջ հազարամեակ մը, ամէնէն ութեղ կայսրութիւնն էր Արեւմտաքի մէջ: Սակայն Վասիլ ուրիշներու պէս օգտակար կապեր եւ ազդեցիկ յարաբերութիւններ չունէր: Գաւառներէն եկած արմատախիլ եւ անուօ երիտասարդ մը՝ ընկերային աստիճանաշարի ծայրամասէն սկսելէ զատ այլընտրանք չունէր, եւ մօտաւորապէս 30 տարի տեւեց իր նպատակին իրազորումը — 30 տարուան անդու աշխատանք, անխիղճ նուիրում, շղեղեւող հետեւողականութիւն եւ յանգուզն բազմալարութիւն: Ան բախտուոր էր միայն այն իմաստով, որ բնութիւնը օժտած էր զինք յատկութեամբ մը, որ այս օրերուն ծանօթ է իբրեւ ներկայութիւն եւ հմայք, եւ ան զիտցաւ գործածել այս առաւելութիւնը: Ժամանակակից պատմաբանները կը խօսին իր բարձր հասակին, անսահման ուժին եւ ամենալայրի ձիերը ընտելացնելու կարողութեան մասին: Ան նաեւ օղիմակական չափանիւթով ըմբշամարտիկ էր: Կարճ՝ ան լաւապէս պատրաստուած էր եւ զիտէր յարմարիլ: Արայցները կ'ըսեն, որ իրենց հանդիպումէն շատ առաջ, իշխող կայսրը՝ Միքայէլ Գ. արդէն ամէն ինչ զիտէր իր մասին: Իսկ ինչ կը վերաբերի ե'րբ եւ ինչպէ՞ս հանդիպեցան հարցումին՝ մէկէ աւելի վարկածներ կան այս առնչութեամբ եւ չ'արժեք հոս այս հարցին մէջ մխրճուիլ: Այս ժամանակաշրջանին առնչուող գրականութիւնը ընդարձակ է եւ յաճախ հակասական: Թէ՛ Միքայէլ Գ. հանդիպեցաւ Վասիլին եւ համակրեցաւ՝ ծանօթ է, եւ թէ՛ Միքայէլ Գ. իր պալատին մէջ պաշտօն մը առաջարկեց Վասիլին՝ նոյնպէս ծանօթ է:

Ասկէ անդին՝ կարծր, տղէտ, ու ներկայանալի սկսեակը, եւ ութեղ, վայելչօրէն հաղած ու նրբամիտ կայսրը յաճախ հանդիպեցան՝ խօսելով ձիերու եւ յարակից հարցերու մասին (պալատին մէջ, Վասիլի սկզբնական տխրողօր Արտուհական ախոռապան էր): Անոնք տակաւ դասն, որ հասարակաց հետաքրքրութիւններու ալլ զետիներ ալ կը բաժնէին եւ սկսան քննարկել ներքին թէ արտաքին հարցերու զարգացման առնչուած խնդիրներ: Վասիլ դարձաւ կայսեր վստահելի խորհրդատուն եւ անփոխարինելի ընկերակիցը: Ան նոյնիսկ կարճ ատեն մը ամուսնացաւ Միքայէլի համանուհիին հետ՝ կայսրը փրկելու համար անախորժ կացութենէ մը: Ան կրկին ու կրկին աստիճանի բարձրացում ստացաւ, հասնելով տեղ մը, ուրկէ անդին ոչ մէկ աստիճան կը մնար — Վասիլ կայսերակից դարձաւ:

Սակայն կայսր դառնալու համար Վասիլ պէտք է անհետացնէր մըրցակցութիւնը, ինչ որ յաջողեցաւ իրազորմէլ բացառիկ տաղանդով, անսխալական կարողականութեամբ եւ ժամանակահատուկ նշանակալի զոստիութեամբ: Ան սպաննեց զահին թէ՛ օրինական յաւանորդը եւ թէ պաշտօնավարը: Առաջինը ի'ր իսկ ձեռքերով, երկրորդը՝ հաստատարիմ հայերու խրմբակի մը միջոցաւ: Այս, ծուղակի մէջ ձգելով սպաննեց իր բարեկամն ու հովանաւորը՝ Միքայէլ Գ.ը:

Մաքիավէլիան արիւնարբու ապերա՞խտ մը:

Փուցէ:

Կ'ըսեմ զուցէ, որովհետեւ ինչպէս բիւզանդական բոլոր հարցերուն մէջ, փաստերը հոս եւս յստակ չեն: Արդի գատարանի մը մէջ, Վասիլի փաստարանը միզմացրուցիլ զէսք յանցանաց պիտի նշէր, նոյնիսկ ինքնապաշտ-

պանութեան պարագայ կրնար նկատել հարցը: Վասիլ երդումի տակ պիտի վկայէր (եւ կարգ մը համբաւար պատմադէտներ, որոնք քաղաքական հաստատութիւններ չունին, պիտի պաշտպանէին իր վկայութիւնը), թէ քողազերծած է իր դէմ նիւթուած դաւ մը: Կը թուի, թէ պալատին մէջ հակա-Վասիլ մէկ հատուածը ձեռով մը յաջողած է համոզել կայսրը, որ Վասիլ պիտի սպաննէ զինք, եւ թէ՛ Միքայէլ ձերբակալման հրամանագիր հանած է Վասիլին դէմ: Վատահարար, հակա-Վասիլ խմբակի անդամները պիտի մերժէին այս ամբաստանութիւնը, սակայն Վասիլի անձնական լրտեսները պիտի հաստատէին զայն՝ որոշ տուեալներով: Այնպէս որ, այս ձեռով, ամբողջ հարցը կախեալ պիտի ըլլար ժամանակահատուկ բանալի խնդրէն: Եթէ Վասիլ սպասած ըլլար յաւելեալ օր մը, նոյնիսկ ժամ մը՝ Միքայէլի հետեւորդները առած պիտի ըլլային առաջին քայլը, — Վասիլ ձերբակալուած պիտի ըլլար, պիտութեան թշնամի յայտարարուած եւ կուրացուած, կոտուած կամ աջորուած, — հաւանարար երեքը միաժամանակ: Եթէ ան այնքան մը յախուռն ըլլար՝ զիմադրելու ձերբակալման, հաւանարար տեղն ու տեղը սպաննուէր:

Դժուար է գուշակել, թէ ժամանակակից երդուեալներու ատենի մը վճիռը ինչ պիտի ըլլար:

Սակայն պատմութեան վճիռը անտարկելի է:

Միքայէլ Գ., որ կնամոլ էր եւ կը յատկանշուէր գինեմուլական ձրգատմաներով (իր օրերու քրոնիկագիրները զինք յաճախ կը նշեն իրքեւ «գինեմուլը»), այսօր ծանօթ է իբրեւ միջակ, նոյնիսկ լաւ կայսր, սակայն Վասիլ ծանօթ է իբրեւ մեծ կայսր — մեծագոյններէն մէկը՝ Բիւզանդական կայսրութեան երկար պատմութեան մէջ: Արձանագրութիւնը շատ յոտակ է այս կէտին մէջ: Վասիլ եղած է քաջատիկ զինուորական, քաղաքական զեկալար եւ կազմակերպող միտք ու անչափելի ժողովրդականութիւն վայելած է այդ մեծածաւալ կայսրութեան լայնքին եւ երկայնքին: Ան վերակազմակերպեց զանձատուներ, քաջալերեց արուեստներն ու արհեստները, մարդկայինացոյց գոտական համակարգը եւ, զլիաւարարար հայ զօրավարներու ավելցուութեամբ, նուաճեց եւ կայսրութեան կցեց նոր աշխարհամասեր՝ ներտեալ Վենետիկն ու Իտալիոյ մեծ մասը: Վասիլի օրով Բիւզանդիոնը հասաւ իր փառքի, ուժի եւ կայսերական շքեղանքի գագաթնակէտին: Այդ անհետացած ժամջէն շող մը կարելի է մինչեւ այսօր տեսնել Վենետիկի Մ. Մարկոս տաճարին մէջ, որ բիւզանդական է իր յղացմամբ եւ իրազօրծմամբ:

Վասիլ փառաբանուած է բոլոր ժամանակներու ամենախիտ պատմաբաններէն մէկ ջանիին կողմէ: Սփենկլըր զինք կը կոչէ՝ «նափոլէոնական զէմք մը»: Կիպոն կը զրէ՛. «մնաւորութիւնը հանդարտ էր, կիրարկումը՝ անխոնջ, հասկցողութիւնը՝ զօրաւոր եւ վճռական»: «Անզուգական եւ անըսուպանելի զէմք մը» պիտի եզրակացնէ Ուիլ Տիւրան:

Վասիլ հիմնեց նոր հարստութիւն մը — ամենաերկարը Բիւզանդական հարստութեանց — որ կայսրութեան վրայ տիրապետեց աւելի քան երկու դար (ճշգրիտ ըլլալու համար՝ 867էն 1081, Պատմական ժամանակաշրջան մը, որ Միացեալ Նահանգներու պատմութեան տարիքը ունի, կամ՝ Ուաշինգթընի ծնունդէն մինչեւ Քենետիկ սպանութիւնը):

Վասիլի յաջորդներուն մէջ կային հրաշալի պատերազմիկներ՝ ինչպէս Վասիլ Բ. Պուլկարոսթոնիւս, եւ նրամիտ ու զարգացած բանասէրներ, ինչպէս՝ Կոստանդին Փորֆիրոկենիթիւս, որ արտադրեց կայսրութեան տարբեր երեսներուն վերաբերեալ համայնագիտարանային տարողութեամբ դործեր, որոնք յաճախ կը մէջբերուին պատմաբաններու կողմէ. (հաւանարար կ'ար-

ժէ Հոս յիշատակել, որ Կոստանդին Փորֆիրոկենիթիւս եւս նիւթ պիտի դառնար կենսագրական վիթխարի աշխատանքի մը, Չորդ դարու պատմագէտի մը կողմէ, որուն համարուը կը մրցի Կիպոսի, Սփինկլլըրի եւ Տիւրանի հետ, այսինքն՝ Առնուս Ժ. Թոյնպիի, որ իր ակադեմական ասպարէզը սկսաւ հայկական ջարդերու մասին զանազան կարեւոր ուսումնասիրութիւններ գրելով) :

Արդ, յստակ պէտք է ըլլայ, որ Վասիլ, իր ժամանակակիցներն ու շարժանքը տարբեր էին մեզմէ : Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, որ Վեմբ տարբեր եղանք իրենցմէ, որովհետեւ այս տարբերութիւնը համեմատաբար աւելի ուշ ժամանակաշրջանի մը ընթացքին երևան եկած զարգացում մըն է — դարերու վրայ եւ ոչ հազարամեակի մը վրայ երկարող պարագայ մը : Անպէս որ, անոնք ամէն իրաւունք ունին արժեչափը նկատուելու, մենք՝ զարատաւորութիւնը կամ շեղումը :

Ինչ որ պատահեցաւ՝ Հետեւեալն էր. այս հայ կայսրերու տիրապետութենէն կարճ շրջան մը ետք, Միջին Արեւելքը աստիճանաբար նուաճուեցաւ Մայրազոյն Արեւելքէն եկող Թախաաշրջիկ բարբարոսներու կողմէ, որոնք հետագային ճանչցուեցան իրրեւ օսմանցիք կամ օսմանեան Թուրքեր : Այս Թախաաշրջիկներուն հետ չորս դար տեւեց հայկական դիմադրակառնութեան խորտակումը (պէտք է նշել, որ Հայաստան Թուրքերու կողմէ տիրապետուած է Չալքաններու նուաճումէն եւ զաղութատիրութիւնէն շատ ետք), ապա ուրիշ չորս դար պէտք եղաւ՝ հայերը հպատակեցնելու, ընտելացնելու եւ իրենց նախկին էութեան սոզոյն եւ հիւանդոտ շուքերուն վերածելու համար : Այդ կարծր, անհակաչուելի եւ ճանհաւատարիմ ժողովուրդը՝ Օսմանեան կայսրութեան «ամենահաւատարիմ» ազգազրական փոքրամասնութիւնը դարձաւ (այս հաստատումը համաձայն իրենց տէրերուն եւ իշխողներուն, այսինքն՝ Թուրքերուն) : Այս ալլասերումը այնքան աստիճանական էր, որ աննկատ մնաց մեծամասնութեան կողմէ, հակառակ անոր, որ յաճախ կը քննարկուէր, կը վերլուծուէր եւ կ'այպանուէր յանդուպն եւ խորատես հայերու փոքրամասնութեան մը կողմէ — որոնց մէջ էին վիպասաններ՝ Պաշտուր Արոփեան եւ Ռաֆֆի, ժողովրդային երգիչներ՝ ինչպէս Ջիվանի (Սերոբ Լեւոնեան), երգիծարաններ՝ ինչպէս Յակոբ Պարոնեան, եւ պետական մարդիկ՝ ինչպէս Գրիգոր Զօհրապ — որ ատանց թացառութեան կամ լուրթեան դատապարտուած էր մեր թշնամիներուն կողմէ եւ կամ ալ անտեսուած մեր աղաներուն եւ եպիսկոպոսներուն կողմէ, որոնք զործակցութիւնը նկատեցին ոչնչացման միակ ալլընարանքը : Կը Թուի, թէ հաստատութեան այդ անդամները մոռցած էին ինչ որ մեր նախահայրերը գիտէին ընազդարար, թէ՛ դորձակցութիւնը պարզապէս առաջին քայլն է սաբդկամտութեան եւ այս ստրկամտութիւնը, երկար շուշի վրայ, ժողովուրդը մը այնքան կը պարզէ իր մարդկութենէն, որ անհետացնելու համար նոյնիսկ պէտք չկայ սպաննելու զայն, որովհետեւ արդէն մեռած կրնայ նկատուիլ : Այնպէս որ, վերջին աղէտին պէտք չկար — Համիտեան ջարդերն ու 1915ի ցեղասպանութիւնը — որպէսզի այդ բոլորը տեղի ունենային. պատահելիքը պատահած էր արդէն բոլոր հայերու սրտերուն եւ մաքերուն մէջ : Որովհետեւ երբ մարդ իր թշնամիին կը յանձնէ նախ իր պէնքը, ապա մարմինն ու հոգին, դատարկ պատեանէ մը զատ իրմէ բան չի մնար :

Սակայն ինչ որ պիտի պատահէր՝ պատահեցաւ : Ողբերգութեան վերջին արարը խաղցուեցաւ եւ ամբողջ աշխարհը սարսփով դիտեց զայն՝ ան-

կարող կամ չուզելով միջամտել Այդ ջիհերը, որոնք յաջողեցան Չարդերէն ճողպարիլ, ասարզնուեցան աշխարհի շորս ծագերուն: Երբեմնի այդ մեծ ազդի խղճալի, քաջըլուած եւ թշուառ կոտորակներէն խմբակ մը կեդրոնացաւ եւ Հաստատուեցաւ Տրեպիս, Գալիֆորնիա, լծուելով ապրուստ մը ապահովելու ախուր աշխատանքին:

Ամէն պարագայի, դիւրին չէր օտար շրջապատի մէջ ապրուստ շահելը: Կեանքը դժուար էր Օսմանեան կայսրութեան մէջ, սակայն ամենախեղճ հասնիակ մը, աչդականներ, գրացիներ, մարդկային Հաղորդակցութիւն, շերտ մութիւն, պատկանելութեան պագում եւ շարունակականութիւն: Այս բոլորը իրենցմէ խուսեցան, երբ նոր Աշխարհ հասան, ուր բնիկները, որոնք օտար եւ անհասկնալի լեզու մը կը խօսէին, իրենց վրայ խնդացին, վերաւարեցին զիրենք եւ անպտօրէն շահագործեցին: Փաստօրէն, կեանքը այնքան անտանելի դարձաւ, որ Պիլ անունով փառասէր Երիտասարդ գրող մը, մուկիւն մղումով մը տարուեցաւ ստեղծելու ինքնուրոյն աշխարհ մը եւ հոն փոխուստ տալու — գեղեցկութեան, ազնուութեան, գորովանքի, կարեկցութեան, ծիծաղի եւ ուրախութեան աշխարհ մը, ուր մարդիկ եղբայրներ են: Այսինքն՝ իր վաղ մանկութեան աշխարհը: Աշխարհ մը, զոր տեսած էր մտնուելի մը անմեղ աչքերով: Աշխարհ մը, ուր երանութիւն ապրած էր, որովհետեւ հոն բան չէր հասկցած:

Իր կեանքի մնացեալ տարիներուն՝ Պիլ ինքզինք պիտի նուիրէր այդ առանց օժի դրախար վերագտնելու աշխատանքին: Ան սկսաւ՝ գրելով պատմութիւններ եւ մանրամասն (որոնք աւելի ուշ վերածուեցան վէպերու, թատերախաղերու եւ յուշագրութեան), ի մասին իր ընտանիքի անդամներուն, Հարազատներուն, բարեկամներուն եւ գրացիներուն... որոնք ընդհանրապէս իրեն պէտք հայեր էին՝ իրենց տարօրինակ կենցաղով, պատկերասր շարժումներով, սրամիտ խօսելակերպով եւ ժողովրդային իմաստութեամբ...: Այդ բոլորը նոր էին, թարմ ու խայթող:

Մինչեւ Պիլի վերայայտնաբերումը՝ Հայերը ծանօթ էին անգլիախօս աշխարհին մէջ իբրեւ սովորական գոհերը թրքական գաղանթիւններուն: Մըղ-ձաւանջի ծնունդ էակներ: Երկար տարիներ՝ անոնք օրաթերթերու խորագիրները կազմած էին, սփռելով անհանգստութեան, դուշէ նոյնիսկ զգուանքի եւ յանցապարտութեան զգացում մը: Պիլի յայտնաբերող Հատորներէն ետք, անոնք սկսան ճանչցուել իբրեւ սրամիտ եւ անվնաս Հօրեղբայր Թոմեր — լիեղաթիւրուած, յետաշրջական, դրական, հաճելի, նոյնիսկ զիչ մը տարօրինակ: Պէտք է ըսել, որ վտանգաւոր Հայեր չկան Պիլի պատմութեանը մէջ: Նոյնիսկ գորավար Անդրանիկ, որ կրնայ Վասիլի արժանաւոր յաջորդներէն մէկը նկատուի, Պիլի պատմութեանը մէկուն մէջ կը նկարագրուի իբրեւ պարզամիտ խնդրուկ մը, որ այնքան խորատես չէ տեսնելու Համար, որ Քթուրըր անգոր մէկն է, որ կ'ընէ ինչ որ ստիպուած է կատարել: Անշուշտական մտածումներ, որոնք վայել են ճանապարհ մէկուն մը, — կայուն, պարկեշտ, լաւ, տրամաբանող, Հաւատարմալ, Հաւատարիմ եւ քառակուսի: Հարիէթ Պիլըր Սթօ այս ձեւով կը նկարագրէ Հօրեղբայր Թոմը, որ այսօր տիեզերականօրէն ճանչցուած է իբր արհամարհելի ծնունդ մը եւ վերածուած միջցեղային ամենատուր վերաւորանքներէն մէկուն:

Հօրեղբայր Թոմի հեղինակին պէս՝ Պիլ եւս շատ սպասող գրող դարձաւ, համբաւի եւ Հարստութեան տիրացաւ: Սակայն Երկրորդ Աշխարհա-

մարտը վրայ հասաւ եւ բոցաշունչ վիշապը մտաւ իր անձնական դրախտը, զայն մոխիրի վերածելով:

Պիլ՝ Վասիլի պէս չէր, խաղաղութեան մարդ էր: Ան բրտութեան եւ արիւնահեղութեան սիրտ չունէր: Եթէ Պիլ իր հրահներուն մէջ նոյնիսկ կաթիլ մը ունենար Վասիլի արիւնէն, պատերազմական վէպ մը պիտի դրէր, որ «Մերկերն ու մեռելները» ու «Հսկի մինչև յաւերժութիւն» գործերը պիտի հաւասարեցնէր Տիգրի մանրանկարներու պատմութիւններուն աստիճանին: Սակայն իրրեւ սիրոյ, խաղաղութեան եւ մարդոց եղբայրութեան պատգամները, Պիլ դիտեց իր աշխարհը չբնականաբար բոցաբլուր մանուկի մը քաղցր միամտութեամբ ու չհասկցող շփոթով: Ասոնք խառնուածքի խնդիր էին, սակայն հարցը հոն չէր վերջանար, որովհետեւ ինք այլևս մանուկ չէր եւ իր հանդիսատեսները այլևս չէին դուրսնանար: Բայց ան շարունակեց նրզել իր սիրէնի սիրոյ քաղցր երգերը, թէ՛ որքան հրաշայի էր ամէն մարդ, եւ թէ՛ որքան հրաշայի էր ինք, այդ բաները ըտեռն համար: Սակայն կը թուէր, թէ համայն մարդկութիւնը բունուած էր հակառակը փաստելու կատաղութենէ մը եւ կը վարուէր Մայրաքոյն Արեւելքէն եկած արիւնաբոյ Քափառաչըջիկ ցեղախումբերու պէս՝ առանց իտարութեան սպաննելով ծեր, փոքր ու կիս, եւ մոխիրի վերածելով ողջ քաղաքներ: Պիլի աշխարհին մուկերակաճութիւնը լուրջ հարուած ստացաւ: Կարծէք նեղ բացուածք մը անյատակ ձորի վերածուեցաւ: Իր պրական համբուր նահանջ արձանադրեց, ինք՝ նոյն պէս, սկսաւ խմել եւ բախտախաղով տարուիլ: Ընտանեկան դժուարութիւններ ունէր, հարցեր ունէր ներքին տուրքերու ծառայութեան գրասենեակին հետ: Որքան իր ժողովրդակահանութիւնը անկուճ արձանադրեց, ա՛յնքան աւելի դրեց այդ անդոյ, լաւ, հին օրերուն մասին:

Ան մեռաւ իրրեւ տխուր, դառնացած ծերունի մը՝ անկարող ընդունելու իր մահականացումները:

Պիլ մեռած եւ թողուած է հիմա, սակայն իր Երեմը կ'ապրէ: Կ'ապրէ յատկապէս իր հայ եղբայրներու սրտերուն մէջ: Պիլը կարդացած իւրաքանչիւր հայ համոզուած է, որ կը բաժնէ հմայքը անոր տիպարներուն եւ պտակը Պիլի համբաւին: Եթէ ուեկ մէկը համարձակի ակնարկել, որ Պիլի հայերը գրական երեւակայութեան ծնունդներ են — հմայիչ, համուրիչ եւ երբեմն նոյնիսկ անդիմադրելի — սակայն մտացածին ծնունդներ, այսպէս կամ այնպէս, այսինքն՝ մեր մասնակցութիւնը ամերիկեան ֆոլիոլարին, մեր հօրեղբայր թոճերը եւ Ժեմայմա մօրաքոյրները, մեր տանիքի լաբախաղացները (որոնք ծնունդներն են ամէնէն աւելի սարսյանական հեղինակ Հրեայ Շոլոմ Ալէյխմեմի), անոնք նման հաստատում մը իրրեւ անձնական վիրաւորոնք պիտի ընդունին:

Համբերատարօրէն լսելէ ետք, ամերիկահայ դասախօս մը փորձեց զիս կարդի բերել՝ հաստատելով, որ Պիլի ստեղծագործական տիպարները իրական էին, որովհետեւ ինք անձնապէս հանդիպած է անոնց մէկ կարեւոր մասին:

- Ե՛րբ, ո՞ւր, — ուզեցի հասկնալ:
- Երբ հասակ կ'առնէի Լոս Անճելըսի մէջ:
- Ըսել կ'ուզեա՞ երբ փոքր էի:
- Այո:
- Երբ Փոքր սոլայ էր:

Ուրիշ հայ մը — ազա՛ն, կոկորդ կորոզ արեւելքի մը — ամէնէն ան-
digitised by A.R.A.R.®

սարոյանական տիպարը, որ կրնաք երբեւիցէ երեւակայել (չափազանցութիւն չէ ըսել, որ Հայ մը իր խառնուածքով որքան նուազ սարոյանական ըլլայ, այնքան աւելի համոզուած կ'ըլլայ, որ Սարոյեանի երեւակայածին տիպարները իր արտացոլացումներն են) ինծի վստահեցուց, որ ինք եւս հանդիպած է շատ մը սարոյանական հայերու:

- Մանրամասնէ, — ըսի:
- Ճիշդ ի՞նչ կ'ուզես:
- Ո՛րք եւ ե՞րբ հանդիպած ես իրենց:
- Ամէն տեղ:
- Երբ փոքր տղա՞յ էիր:
- Նաեւ երբ մեծ էի:
- Պէտքով մէջ հանդիպեցար:
- Վայրկեան մը խորհի՞նէ ետք ըսաւ.
- Գուցէ ոչ Պէտքով մէջ, ո՛չ:
- Աւստրալիո՞յ մէջ:
- Աւստրալիոյ հայերուն մասին չ'արժեք խօսիլ:
- Ի՞նչ կ'ըսես Պրագիլիոյ հայերուն մասին:
- Երբեք հոն չեմ եղած:
- Իսթանպոլ՞ւ:
- Հոն եւս չեմ եղած:
- Սակայն հանդիպած ես իսթանպոլահայերու:
- Այո, հանդիպած եմ, սակայն դիւրեք հայ չեմ կրնար նկատել:
- Աւրիսի դիրենք ի՞նչ պէտք է կոչել:
- Մպտուած թուրքեր:
- Ի՞նչ է կարծիքդ գանասահայերու մասին:
- Անոնք անունով հայեր են միայն:

Այս խօսակցութիւնը այսպէս ասին մը երկարեցաւ: Հետզհետէ յստակ դարձաւ, որ հայերը՝ ընդհանրապէս, ներառեալ ամերիկահայերը՝ յատկապէս (կ'ըսեմ յատկապէս, որովհետեւ նախորդող խօսակցութեան մը ընթացքին բացայայտ դարձած էր, որ թրքալայել դժգոհութիւն մը կը տածէր ամերիկահայերու հանդէպ) ո՛չ միայն ան-սարոյանական էին, այլեւ շատ աւելի ան-հայկական էին՝ միտամանակ:

Անձնական նկատողութիւն մը կ'ուզեմ արձանագրել հոս: Մնած ու մեծցած եմ հայկական թաղամասի մը մէջ, դաստիարակուած եմ հայկական վարժարաններու մէջ, կեանքիս մեծ մասը հայկական շրջանակներու մէջ անցուցած եմ՝ Յունաստանի, Իտալիոյ, Գանատայի, եւ Միացեալ Նահանգներու մէջ, դորձ ունեցած եմ եւ հանդիպած աշխարհի բոլոր ծայրերէն եկած քաղաքական տարբեր համոզումներու եւ սարբեր աստիճանաչափերով յարմարած կամ ձուլուած հայերու հետ, եւ կրնամ խոստովանիլ, որ երբեք, երբեք չեմ հանդիպած սարոյանական հայու մը: Արամ, Պիլի որդին, մեզի կ'ըսէ, որ Պիլ անձնապէս սարոյանական տիպար մը չէր: Ան աւելի սոսթոնեակիական էր, նոյնիսկ բիզանդական, քան սարոյանական: Սակայն ինչ-որ բիզանդական, շքեղու համար օսմանեան բան մը կայ ամէն հայու մէջ (բարդ, անախատեսելի, անհասկնալի, հակասական, մութ):

Ընթերցողներէս անոնց՝ որոնք կը խորհին, թէ կը փորձեմ նսեմացնել Պիլի իրագործումները, անմիջապէս յայտնեմ, որ նոր բան չկայ ըսածնե-րուս մէջ: Ակնասու ամերիկացի ջննազատներու եւ ժամանակակիցներու

խումբ մը նոյնքան բան ըսած են այս մասին, եթէ ոչ աւելին: Նոյնպէս աւելցնեմ, որ միշտ այլ մեծ հիացող մը եղած եմ Պիլի գրականութեան: Ես եւս տարուած էի իր կախարչանքով: Իրրեւ մարդ եւ արուեստագէտ՝ Պիլ տուաւ իր լուսագոյնը: Ան մէր լուսագոյնը տուաւ: Կարելի է ըսել, որ Վասիլի պէս, ան ինքնայատուկ եւ անսպասելի կերպար էր: Աւելի քան հազար գրող հասցուցած ենք մեր ժամանակներուն մէջ եւ անոնցմէ ո՛չ մէկը այնքան մօտ եղած է միջազգային գրականութեան մէջ իր տեղը պահանջելու մարտահրաւերին, որքան ինք:

Վերլուծելով Պիլի եւ Վասիլի սուպարէզներն ու տիպարները, նպատակն չէ եղած հաստատել իրենց յարաբերական արժէքն ու կարեւորութիւնը, այլ կողք կողքի դնել այդ երկու տարբեր հակադրեցութիւնները կեանքի մարտահրաւերին:

Պիլի կենցաղին գերագոյն նպատակը գուարճացնելն էր եւ այդ ճամբով Պատայլը իշխող դասակարգին: Վասիլի նպատակն էր միանալ իշխող դասակարգին, հակակռեւ զայն եւ ձեւաւորել կայսրութեան ապագան:

Աւելի եւս շնչտելու համար Պիլի եւ Վասիլի կենսաձեւերուն տարբերութիւնները, կատարենք պատմական տեղաշարժի եւ հետաքննարկման պլանտիկ խաղ մը:

Ի՞նչ պիտի պատահէր Պիլին՝ Բիւզանդիոնի մէջ:

Եթէ Պիլ ծնած ըլլար յունական աշխարհին մէջ, Գրգ դարուն, ան ժողովրդային բանաստեղծ կամ ջրոնիկագիր պիտի դառնար եւ պիտի ըստնէր բախարհ հարիւրաւոր նման բանաստեղծներու: Ներկայիս ան պիտի իշխուէր միայն քանի մը մասնագէտներու կողմէ, ճիշդ նոյն ձեւով, որ մեզմէ հազար տարի ետք, Սարսիանի անունն ու տեղը ՉՊրդ դարու ամերիկեան գրականութեան մէջ ծանօթ պիտի ըլլայ միայն քանի մը մասնագէտներու, — ենթադրելով անշուշտ, որ անոնք գոյութիւն պիտի ունենան:

Ի՞նչ պիտի պատահէր Վասիլին՝ Գալիֆորնիոյ մէջ:

Մայրուղիներու վրայ ինքնաշարժներ կեցնելով պիտի հասնէր Ուաշինկթըն եւ հոն ինքնաշարժ նորոգողի կամ վարորդի գործ մը պիտի ապահովէր: Ան պիտի հանդիպէր եւ բարեկամանար նախազահական խորհրդատուներու, քարտուղարներու եւ օգնականներու, ծերակուտականներու եւ Գեբրգոյն Ատեանի դասաւորներու հետ: Ան պիտի ընտելանար մայրաքաղաքի իշխանութեան կառուցին: Ան իրրեւ կամաւոր պիտի աշխատէր քաղաքական ընտրապայքարներուն: Աւելի ուշ՝ պաշտօնի մը համար թեկնածու պիտի ներկայանար եւ հետզհետէ նախազահութեան հասնէր: Ներքին թէ արտաքին հարցերու գծով՝ իր իրազործումները այն աստիճան ակնառու պիտի ըլլային, որ մերօրեայ արժեւափերով անհաւատալի պիտի թուէին: Իրրեւ յանդուգն գինուորական հրամանատար, հմայք ունեցող նախազահ եւ խորամանկ ու թախանցող միտք՝ մարդոց, ժողովուրդներու եւ պատմական առիթներու՝ ան պիտի գործածէր բոլոր այն կարելիութիւնները, որոնք կ'իյնային իր հասողութեան մէջ, եւ քանի մը այլ կարելիութիւններ, որոնք ոչ ոք կը կարծէր, թէ գոյութիւն կրնային ունենալ, — ինչ որ ճիշդ ու միտի իմաստն է ստեղծաւոր ղեկավարութեան: Իր ծրագիրները յաջողապէս եւ սահուն կերպով կիրարկելու համար՝ ան պիտի չընկնէր այն բոլոր խոչընդոտները, որոնք կը սկսին քաղաքական նախաձեռնութիւններէ, առաջարկներէ եւ խողաղ բանակցութիւններէ, եւ կ'երկարին մինչեւ կաշտոք, սպանալիք, չարչարանք եւ սպանութիւն: Ռազմագիտական կարեւորութիւն ներկայացնող աշխարհագրական վայրերու մէջ տեղի ունեցած սահմանափակ պատերազմներու, յեղաշրջումներու, յեղափոխութիւններու եւ հակա-յեղափոխութիւն-

ներու շարքէ մը ետք, ան պիտի գաղութափարէր ամբողջ աշխարհը, ինչպէս եւ արեւազնային համակարգը: Հաւանաբար նաեւ պատրաստութիւններ պիտի տեսնէր ամենամօտ համաստեղութիւնը Ներխուժելու: Աւելին. ան պետական պիտո՞նէն պիտի հաւասարակչո՞ւնէր:

Այս բուրբը անկարելի⁶ կը թուի. անշուշտ: Յատկապէս ընթերցողներէս անոնց համար, որոնք աւելի Պիլին կը նմանին, քան Վասիլին: Որովհետեւ այս երկրագունտի վասիլներուն համար անկարելին միայն մարտահրաւէրն է, որ կ'արժէ վերցնել: Իրրեւ հակադրութիւն՝ Պիլներու եւ ընդհանրապէս ազգերու բոլոր միւս անդամներուն համար, որոնք կորսնցուցած են իրենց ստեղծագործական յանձնառութիւնը, նոյնիսկ բառային խոչընդոտները (մեր պարագային՝ ներքին դժուար վէճեր եւ հակասութիւններ) կը թուին անընթացելի դժուարութիւններ:

Այս տողերը կարդալէ ետք, բարեկամ մը դիմ ամբաստանեց զինսպառտութիւնը եւ կայտերապաշտութիւնը քաջութիւնը յանցանքով: Մերժեցի մեղադրանքը: Սկսոյ՝ ըսելով, որ առաջին մակարդակի վրայ ասիկա պատմութիւնն է հաւաքական ինքնութեան մը, — մեր ժողովուրդին: Այլ մակարդակի մը վրայ՝ զուցէ մտամարզանք մըն է մարդկային կարելիութիւններու գիտակցութեան՝ ազատութեան մասին: Այսինքն՝ ո՛չ միայն իրրեւ անհատներ եւ ժողովուրդ մեր առանձին ճակատագիրը ընտրելու եւ ձեւաւորելու, այլեւ՝ տիեզերքի ճակատագիրը եւս: Եթէ ընտրելու այս ազատութիւնը իրագործուած է անցեալին — եթէ այս կարելիութեան զոյւթիւնը եւ իրագործումը վկայուած են մարդկային գործունէութեամբ — ուրեմն կարելի է նաեւ կրկնել ապագային:

Կեանքի այն ձեւը, որ հայերս ընդունած ենք հաւաքաբար — կրաւորական ընդունումը այն ճակատագրին, որ ուրիշներու կողմէ պարտադրուած է մեզի — միայն մէկն է այն անսահման կարելիութիւններէն, որոնք մեր արամադրութեան տակ կը դանդախան: Վերապատմելով Պիլի եւ Վասիլի պատմութիւնները, քննարկած եղանք այդ կարելիութիւններէն միայն երկուքը. ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

ԱՐԱ ՊԱՆՈՋԵԱՆ

Լ. Մ Կ Ր Ց Չ Ե Ա Ն

Գ Ր Ա Ք Ն Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Խ Ո Ր Հ Ր Դ Ա Յ Ի Ն

Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Ը



3

Նախորդ հատուածում համառոտաբար ցոյց տրուեց, թէ ինչ ճկնատագրութիւն ունեն խորհրդային գրաքննական հիմնարկութիւնները, իրենց մակերեսային կողմով: Բայց ինչպիսի՞ն է գրաքննութեան ներքին, «խոհանոցային» կողմը: Ինչպէս որ արդէն նշուել է, խորհրդային գրաքննութիւնը իր բոլոր արտաքին ու ներքին կողմերով զաղաներէն զաղանիք է, անմատչելի՝ արտաքին աշխարհին: Ուստի՝ իրականում այնուհե թափանցելը հնարաւոր է միայն պատահաբար կորզուած աուելաների հիման վրայ: Այդպէս էլ անում են հետազոտողները, իրարից անկախ վկայութիւնների տարրերից հաւաստի խճանկար կազմելով:

Այսօր, խորհրդային երկրում, բոլոր սպառիչ արտադրանքների համար գոյութիւն ունի եռաստիճան նախնական գրաքննութիւն, որը կրկնում է նոյն երկի իւրաքանչիւր նոր հրատարակութեան դէպքում: Բացի այդ, գործադրում է

նաեւ ժամանակի տեսակէտից անսահմանափակ յետնեալ գրաքննութիւն, որը վաղ թէ ուշ կարող է հասցնել արդէն գրաքննուած երկերի փոփոխման կամ արգելման:

Նախնական գրաքննութիւնը նախ վերաբերում է ձեռագրին, ապա՝ լատւածատիւնին, վերջում էլ՝ տպարանից դուրս հանուող պատրաստի օրինակներին: Իսկ որեւէ ձեռագիր գրաքննիչին յանձնուելուց առաջ պէտք է որ անցած լինի ճիւղային խմբագրի, երկու գրոնոցիներին, խմբագրական մարմնի ու զլխաւոր խմբագրի ձեռքով: Այդ ամէնից յետոյ, Յ օրինակ յղում է գրաքննիչին, որըն աջուհետեւ, իր անկիճն անելուց յետոյ, մէկ օրինակը վերադարձնում է խմբագրութեանը, մի այլ օրինակ ուղարկում Պետանվտանգութեան կոմիտէի գրախանութեան բաժանմունք, իսկ երրորդն էլ պահում իր մօտ:

Գրաքննիչն իր ստուգած երկում նըշումներ է անում ռազմական, անտեսական, զխտական եւ այլ կարգի կէտերի մասին, որոնք պէտք է զաղտնի մնան

Հասարակութիւնից ու չհրապարակուեն: Իսկ գաշափարախօսական հարցերի կապակցութեամբ, իբրև կանոն, արուստ են ցուցումներ, որոնց համար պատասխանատուութիւնը խմբագիրն է կրում: Այն փոփոխութիւնները, որոնք յանձնարարուում են այդ կամ այն առթիւ, «գաղափարական թւարթկեութեան» կամ «անհարկաւոր ճշգումներ» դէպքում, գրաքննիչը թրջում է խմբագրի ու հեղինակի հայեցողութեան:

Ընդօմին խոտ արդելուած է, որ հեղինակը իր աչքովը տեսնի գրաքննիչի հրահանգներն ու յանձնարարութիւնները, ընդգծումներն ու հարցական նշանները: Կա գործ ունի միայն խմբագրութեան հետ, իբրև միջնորդ օղակի՝ իր եւ գրաքննութեան միջեւ: Իսկ խմբագրութեան որոշման վրայ, ի հարկէ, կարող են ազդել ո՛չ միայն արձակի, բանաստեղծութեան եւ ընտադատութեան դժով նշանակուած խմբագիրները, այլեւ՝ խմբագրական մարմնի անդամները, եթէ դրա կարիքն զգացուի «փափուկ» ղեկներում: Նաեւ՝ կուսակցական կոմիտէի ներկայացուցիչը եւ ուրիշները: Պատասխանատու համարուող մարդկանց թիւը անչափ լատ է, որպէսզի նրանցից ամէն մէկը, իր պաշտօնը կորցնելու վախից, առաւելադոյն աշուրջութիւն ցուցաբերի:

Ի հարկէ, խմբագրութիւնները, իբրև կանոն, ջանում են ընդառաջել գրաքննական «յանձնարարութիւններին»: Այսպէս, օրինակ, այն ժամանակ, երբ Ալեքսանդր Տվարդովսկին մուկովեան «Նովի Միր» ամսագրի գլխաւոր խմբագիր էր, արձակի բաժնի խմբագիրը Գէորգի Վլադիմովն էր, որն արտասահման գաղթելուց յետոյ պատմում է, թէ Տվարդովսկին շատ հպարտ էր զգում իրեն, որ գրաքննութեան «յանձնարարութիւններին» միայն 70-80 տոկոսն է ընդունել...

Գրաքննութեան կողմից երեք անգամ կնիք է դրուում որեւէ երկ թոյլատրելու դէպքում: Ձեռագրին ճանապարհ է արւում ճաղմական կամ պետական գաղտնիքների հրապարակում չլինելու կնիքով: Ծարուածափունը ընդու-

նելի է համարուում «թոյլատրուած է տրպիլ» կնիքով: Իսկ տպուածի փորձնական օրինակը՝ «թոյլատրուած է լոյս ընծայել» եզրակացութեամբ: Հեղինակները շատ յաճախ կատարուած փոփոխութիւններին տեղեկանում են սուղաբարկան ամբողջ արարողութիւնը աւարտուելուց յետոյ:

Գրական Երկերի մեծ մասը, նախախորհրդային Ռուսաստանի աւանդական սովորութեան նման, նախ տպուած է պարբերականներում, — «ամսագրային տարբերակով», ապա միայն գրքով: Յատկանական գրաքննութեան սկզբունքների համաձայն, պարբերականում աւելւած երկը դէրք զառնալուց առաջ եւս մի անգամ ոչէտը է անգնի գրաքննութեան երեսնաման բովից: Նոյնը վերաբերում է սուլեայ երկի իւրաքանչիւր նոր հրատարակութեանը: Որեւէ հրատարակութիւն կարող է նախորդից տարբերուել, դրական կամ բացառական առումով, նայած ըրենադատական արձագանցներին, խորհրդային կամ արտասահմանեան, քաղաքական ընդհանուր կազութեանը, նոր խմբագրի կամ գրաքննիչի կրթական ընդթիւն ու մակարդակին:

Գրաքննութիւնը իւրաքանչիւր հեղինակի ժող յարուցում է առաւել նախնական, ներքին «ինքնադրաքննութիւն»: Ի հարկէ, առանց գրաքննութեան էլ ամէն մի չափահաս հեղինակ մտածելով է գրում, կշռելով իր իւրաքանչիւր բառն ու արտայայտութիւնը: Բայց ազատ պայմաններում դա պարզապէս խղճի, պատասխանատուութեան, ճաշակի ու մակարդակի հարց է, միանգամայն կամարու: Մինչդեռ խորհրդային պայմաններում «ինքնադրաքննութիւնը» նշանակում է, թէ ինչն անպայման ինչպէս պետք է գրել, «որպէսզի անցնի»: Այդ գէպքում մտահոգութիւնը գրական ու քարոյական չէ, այլ՝ «քաղաքացիական», «հացի խնդիր», նաեւ գոյութեան՝ առհասարակ:

Արտաքին գրաքննութիւնը կայանում է առունձին առուրի, նախադասութիւնների, պարբերութիւնների եւ ղլուսների ջնջման կամ փոփոխման, կամ էլ ամբողջ գրքի արգելման մէջ: Յաճախ փոխում

են վերնագրերը: Գրաքննիչը ո՛չ միայն ջնջում կամ փոփոխում, այլև իր կողմից լրացումներ է անում: Գրաքննութեան նեոսեաներով անկարելի է խորհրդադասին ունեւորող երկերի լրիւ ժողովածու հրատարակել: Նոյնիսկ Մաքսիմ Գորկու եւ Վլադիմիր Մայակովսկու պարագայում, թէեւ նրանց երկերի ժողովածուներին կցւում է «լիակատաց» քառը, զոյութիւն շունի իրական իմաստով կատարիայ հրատարակութիւն:

Բայց գրաքննութեան միջոցառումները չեն վերջանում որևէ հրատարակութեան վերաբերող մտով: Իրանք մեծ լսփով վերաբերում են եւ թերթերի, հանդէսների ու գրքերի հետադայ ճակատագրին, նրանց օգտագործմանը՝ թոյլատրուած հրատարակումից յետոյ: Այն հեղինակների երկերը հրատարակելիս, որոնք գաղափարապէս հեռու են խորհրդային իշխանութիւնից, բայց ինչինչ պատճառով նպատակաւորմար է համարւում նրանց որոշ երկեր լոյս բնծայել, փոքր սոցաբանակ է սահմանում, տյն էլ, շատ յաճախ, արտասահման արտահանելու եւ արժեզրամ ձևք բերելու նպատակով:

Թէ ինչ սահմանների է հասնում գրաքննական իշխանութիւնների ճնշատարութիւնը՝ արդէն շրջանառութեան մէջ դնուող տպագիր նիւթերի նկատմամբ, պարզ երեւում է մի պերճախօս փաստաթղթից: Խորհրդային Միութեան Բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան նախարարութեան ճիւլիստէնի (Տեղեկատուի) 1978 թ. նոյեմբերեան համարում հրատարակուած է եօթ սարքեր նախարարական ու յարակից ղեկավարութիւնների միջեւ համաձայնեցուած եւ ի վերջոյ Մշակոյթի նախարարութեան անունով ձեւակերպուած հրամանը: Դա վերաբերում է զրադարաններից ու անդեկատու ֆոնդերից գրամանդակութեամբ հնացած ու հնամաշ հրատարակութիւններն ու նիւթեր պարտադրարար հետադնելու կարգին: 1978 թ. Յուլիս 18 թուակիր եւ 521 թուահամարով հրամանը յանձնարարում է գրադարանները պարբերաբար «զտելու» արար-

դական կարգը, որով եւ իր ուժը կորցրած է համարւում 1960 թ. Փետրուարի 2ի նոյնատեսակ նախորդ հրահանգը: Մշակոյթի նախարարութեան անունով պարտադրուած հրամանն ինքնին, առանձին վերցրած, մի ամբողջ հետազոտութեան նիւթ է, իր ծաւալով ու բովանդակութեան իւրաքանչիւրութեամբ: Բայց այստեղ յիշենք միայն ամէնից պարզ աուակները:

ԽՍՀՄ Մշակոյթի նախարարութեան հրահանգը յանձնարարում է, թէ ո՛ր գրաքննականութիւնը ո՛ր ժամկէտում պէտք է ոչնչացել: Ըստ այդ հրահանգի, բոլոր թերթերը, լոյս տեսնելուց երկու տարի անց՝ պէտք է «մոկուլատուրա» համարւեն ու հանուեն գրադարաններից: Իսկ «Պրաւդան» քաղաքային գրադարաններում կարող է մնալ երեք տարի, համալսարանական գրադարաններում՝ երեքից-հինգ տարի: «Նովի Միր» եւ «Սկտեսպր» ամսագրերը՝ երեքից-հինգ տարի: Համախորհրդային սահմանադրութեան միայն գործող քննադիր կարելի է պահել, բայց ոչ նախորդ որևէ հրատարակութիւն: Դասկան թուերից տասը տարուած հանրայնական գրադարանութիւնը՝ փոխադարձութեան, հոգեբանութեան, արվիզմի վերաբերեայ, պէտք է ոչնչացուի, — ըստ հրահանգի: Յիշեալ հրահանգը բունում է մօտ 15 մեքենայի էլ: Ոչնչացնելու նոյն հրահանգը վերաբերում է նաեւ արտաքին քաղաքականութեան հետ կապ ունեցող անդեկատու գրքերին: Բացառութիւն են կազմում միայն պետական խոշոր գրադարանները, որոնք կարող են պահել զբաղւած հրատարակութիւնների մը որոշ քանակ, որպէսզի յատուկ թոյլատուութիւն անեցող ստուգուած գիտնականներինցողները երբեւէ մուտք գործեն ու զրանք օգտագործեն՝ ուսումնասիրութեան համար:

Այստեղ, ի հարկէ, որոշ յարակից պարզաբանման կարիք կայ: Սովորաբար, ոչ մի հրատարակութիւն, պարբերական լինի կամ գիրք, յախանութեան համար չի նախատեսուած: Տպագիր նիւթերը կարգացուելուց յետոյ նետում են, մա-

չում, փշանում, կորչում: Միտյն հաւաքածոներն են մնում յատուկ հաստատութիւններում, այն էլ՝ աղաս ու տրամադրելի տեղի համեմատ: Կամ էլ՝ գրասէր մարդկանց տներում, այս կամ այն շափով: Այս դէպքում ամէն ինչ ընթանում է տարերայինօրէն, նպատաւոր ու աննպաստ հանգամանքների բերումով, առանց յատուկ հրահանգի ու պարտադրանքի:

Մինչդեռ խորհրդային պայմաններում վերելից յղուած որեւէ հրահանգ աւելի քան ոտտիկանական գորութիւն ունի: Գրադարանում արգելուած գիրքը կամ պարբերականը անհատ մարդիկ եւ չեն կարող ունենայ, գրասիրութեան կարգով: Իսկ երեւում է նաեւ նրանից, որ, ըստ հրամանի, գրադարաններից հեռացուող սպագիր նիթերը փոփանցուած են անպայման իրար յաջորդող ու մէկը միւսից խիստ յատուկ արձանագրութիւնների միջոցով ու, ինչ որ շեշտուած է, «չեն կարող յանձնուել ուրիշ գրադարանների, կազմակերպութիւնների եւ մասնաւոր անձանց»: Այսինքն՝ ոչ ոք իրաւունք չունի փշագուելու դատապարտուած նիթերից իր նախասիրած որեւէ հրատարակութիւն ջուկել, փրկել ու պահել:

Իսկ ուզած դէպքում էլ ամէն մարդ չի կարող կենտրոնական գրադարանին դիմել, քանզի ամէն մէկն այդ հնարատութիւնն ու իրաւունքը չունի: Հետեւապէս, իւրաքանչիւր ոք կտուցը բացած պէտք է սպասի, թէ տուեալ ժամին ինչպիսի՛ հոգեւոր մեղուք է հրամցուած իրեն «համաժողովրդական պետութեան» կողմից: Իսկ ամէն ոք գիտի այդ կարգի «սնունդները» որակն ու գինը: Այնպէս որ, ԽՍՀՄ Մշակույթի նախարարութեան յիշեալ ծե նման հրահանգները այնքան էլ անմեղ ու պարզապէս գերծանրաբեւեռուած գրադարանները թեթեւցնելու մըտահոգութեամբ կազմուած զբարի խորհուրդներ» չեն, այլ՝ մարդկանց յիշողութեան պաշարը ըստ հնարաւորին նըսազարդոյնի հասցնելու, մտածողութեան առանց այն էլ նեղ ճանապարհը փակելու միջոցներ, վերջին հաշուով բնակչութեան մէջ յիմարութեան սերմեր ցանկ-

լու համար նախատեսուած «սերմացաններ»:

Անձանօթ մարդիկ կարող են կարծել, թէ զոնէ կենտրոնական գրադարաններում անխաթար վիճակում պահուած են մէկական օրինակ անցեալ հրատարակութիւններից: Բայց իրականում դա էլ այդպէս չէ: Յայտնի են բազմաթիւ դէպքեր, որոնք վկայում են, որ, սահնք, Մոսկուայի Լենինի անուան գրադարանում հին թերթերից խնամքով կտրուած են որոշ յօդուածներ եւ նրանց փոխարէն ճերմակ թղթեր փակցուած: Ընթերցողը նոյնիսկ չի կարող իմանալ, թէ ի՞նչ է եղել այդ «ճեղքուածքի» մէջ: Բայց, հաշուի առնելով երկրի բարձրը, հեշտ է ենթադրել, որ այնտեղ անպայման որեւէ յիշատակութիւն է եղել ունէ շնորհագրիկուած անձի վերաբերեալ:

Կամ՝ երբ որեւէ գիրք կամ տեղեկատու է տպուած, իսկ յետոյ պարզուած է, որ «անտեղի է» այսինչի կամ այնինչի անուան յիշատակումը, այդ մասը պոկուած կամ փոխարինուած է ուրիշ նիթով: Յրեմն իրերի բերմամբ մոռցուած է վերջի «նիթերի ցանկը» ոչնչացնել, կամ էլ պարզապէս գիծ է քաշուած «լուսանագատը» տողի վրայ, դրանով իսկ ակամափայջ մատնելով հրատարակչական ներքին դիտաւորութիւնները: Արդպիսի մի պարագայ, օրինակ, վերաբերում է նորվեգացի դրող Կնուտ Համսունին (1984 թ.), որի երկհատոր երկերը ԽՍՀՄում տպուել են վերջին անգամ 1970ին:

4.

Մորհրդային գրաքննութեան կիրառած չափանիշները, բնականաբար, չեն մնում նոյն մակարդակի վրայ, այլ անընդհատ փոխուած են կուսակցական զծի ու քաղաքականութեան համաձայն: Այսօրուայ թոյլատրելին վաղն անթոյլատրելի կարող է լինել: Եւ՝ ընդհակառակն՝ առանց, սակայն, կարկինը լայն բացելու: Տիրական ու մնայուն «գիծը» խտու: թիւն է, սահմանափակումը, ինքնասիրահարուած ու այլատեսաց միա-

կողմանիութիւնը, բնակչութեանն ու մարդկութեանը յիմարի տեղ զննելու յանադրգնութիւնը:

Որքան էլ մանրամասն ու վճռական լինեն գրաքննական հրահանգները, գրքանք նաև առածգական են: Ուստի որոշ պատասխանատուութիւն է թողնուած գրքաքննիչների համար, որպէսզի եթէ նրանք որեւէ ղէպքուած հարկ եղած խստութիւնը չցուցարարեն՝ պատասխանատուութեան կանչուեն ու տոյժ կրեն: Գրաքննիչներին մշտապէս ուղղութիւն տալու համար ամէն տարի պատրաստուած է խիստ գաղտնի մի տեղեկատու փաստաթուղթ, ազգական ու տնտեսական ասպարէզների վերաբերեալ, որին կարող են անմիջապէս տեղեկանալ նաև խմբագիրները: Այդ փաստաթուղթը կրում է «Այն նիւթերի ու տեղեկութիւնների ցանկ, որոնց հրատարակումն արգելուած է բաց մամուլի մէջ» վերնագիրը: Այդ կողմից գրաքննիչներն ու խմբագիրները շատ աւելիք, աւելցնելիք կամ պակսեցնելիք չունեն: Մնում է միայն ցանկին նայել ու արգելուածը ջնջել: Սակայն գաղափարախօսական կողմից թէ՛ գրաքննիչների եւ թէ՛ խմբագիրների անձնական վճիռ տալու ու պատասխանատուութեան շարք աւելի բարձր է, քանզի շատ ղէպքերում նրանք պէտք է ինքնուրոյն կողմնորոշուեն:

Գրաքննական շափանիչների փոփոխութիւնը յատկապէս՝ աչքի է ընկնում նշանաւոր անունները ջնջուելիս: Եթէ, սսենք, Ստալինի, Պրուչչոյի, Բրեժնեւի եւ ուրիշների անունները, նրանց ողջութեան օրօք, աստուածացուած էին, ապա մահից յետոյ պէտք է անպայման անհետանային (Լենինը եւ որոշ թուով այլ «հերոսներ»՝ բացառութիւն են): Իս նրանք չանկուած է, որ այն բոլոր հին հրատարակութիւնները, որոնց մէջ նշուած են այդ անունները, պէտք է «տուեն», շրջնացուեն: Եւ անկարելի է չափել այդ փոփոխի սովորութեան պատճառած նիւթական, խմբագրական, բարոյական եւ այլ կարգի տխուր հետեւանքները: Աէ՞ որ անուններ ջնջելով, թէկուզ եւ հրէշների, ամբողջ պատմութիւնն է ջնջուած:

Որեւէ անուն մուտքութեան տալու հրամանը նշանակում է միտքամանակ հրամայել գրադարաններին ու գրախանութիւններին, որ այդ անունը, թէկուզ եւ ընթացիկ մէջըներման կարգով, կրող հրատարակութիւնները անմիջապէս ոչնչացուեն: Պորհրդային երկրից դուրս եւլած մէկը վկայում է, որ այնտեղ իր մէքն է ընկել «Այն գրքերի ցանկը, որոնց վաճառքը արգելուած է ինն գրքերի ստիւտրի մէջ»: Եւ այդ ցանկի մէջ նըլուած են եղել Ստալինի, Մաօ Զզէ Իունի եւ Պրուչչոյի երկերը:

Պորհրդային գրաքննութեան պատմութիւնն, ի հարկէ, ունի իր նուրբ ելուէջները: 1953-68 թուականներին, օրինակ, գրաքննութիւնը որոշ ամօթխածութիւն էր ցուցաբերում՝ որոշ ղէպքերում: Մինչդեռ 1964-ց հաստատուած «Ետեկցիան» (յետաշրջութիւնը) շարունակուած է մինչեւ հիմա, իր ընթացիկ շատ հատկութիւններով:

Գրաքննութեան վերաբերմունքը տարբեր է տարբեր գրողների նկատմամբ: Որքան որ գրողը ճանաչուած ու յարգուած է մանաւանդ Արեւմուտքում, այնքան աւելի ազատ են թողնում նրան: Եղել են ղէպքեր, որ «Հեղինակային իրաւունքների համաձխութեան կարծեկատ: թեան» միջոցով արտասահմանի միջանուշած քնաղբերը տարբերուել են երկրի ներսում լոյս տեսած քնագրերից:

Այլեւայլ փաստական տուեալների հիման վրայ կարելի է որոշել, թէ խորհրդային գրաքննութեան շափանիչները ինչու՞ն են կայանում, ինչ է սպասում հեղինակներից: Ըստ այդ շափանիչների, խորհրդային կեանքը հիմնականում պէտք է ներկայացուի թուական գծերով, ընկերային հակասութիւնները պէտք է անտեսուեն (առանձնաշնորհեալ նմանակատարային անձոնց ու շարքային քաղաքացիների, ուսաների ու այլազգիների, քաղաքի ու զիւղի, քարոզչութեան ու իրականութեան միջեւ): Պէտք է անտեսուեն կրօնական ու զգացական ապրումները: Արդեւուած է քննադատել փոյազաս ու անուանի անձանց, անդարդատուալ նրանց մասնաւոր կենդանիք: Ար-

գեւուած է անդրադառնալ ազգամիջեան իրական յորարկութիւններին, ջննդատակ վիճակահաններին, միջկոյտի, կուսակցութեան որեւէ արարք: Արդելուած է պատկերել արտասահմանն ու արտասահմանցիներին, էթէ միամտամանակ ցոյց չի տրուած Պորճրդային Միութեան գերազանցութիւնը՝ ամէն տեսակէ տից: 1971 թուին «Գլուխոս»ի կողմից հրատարակուած թիւններին ուղղուած մի զաղտնի շրջաբերականով արդելում էր յիշատակել 1937 թուականը, խորհրդային բանտերը, չբնագատող միջնամայրի կրած միասնիքը, եւ այլն:

Պորճրդային գրաքննութեան շախմատներէ ժամանակագրական փոփոխութեան մասին պատկերացում կարող է սալ հետեւեալ հանդամանքը: Յայտնի է, որ խորհրդային երկրից զանդուածային «արտադաղթ» է տեղի ունեցել հիմնականում երեք անգամ՝ 1917-1922 ու 1942-1945 թուականներին եւ 1970ից յի վեր: Այդ ընթացում երկրից հեռացել են եւ մեծ թուով զրոյներ, արդէն վաստակուոր կամ նորահաս:

Արդ, առաջին սերնդի զրոյները տւելի բարեացակամ վերաբերմունքի են արժանացել, քան երկրորդ ու երրորդ սերունդներին պատկանողները: Քոստական թուականներին՝ արտասահման անցած զրոյներէ անուններն ու նոյնիսկ արտասահմանում տղուած երկերը յիշատակուած էին մատենագիտական ցանկերում: Ոմանց երկերը նոյնիսկ հրատարակուած էին, մինչեւ ստայինեան տիրակալութիւնը: Երբեմնի հանրածանօթ զրոյները յիշատակուած եւ խորհրդային մեւով հրատարակուած են նաեւ վերջին ստանամեակներում, մեր օրերին:

Եւ գրա գիմաց՝ լիովին անտեսուած են երկրորդ եւ երրորդ սերնդի զրոյները: Երկրորդի պարագան ինքնին հասկանալի է: Բայց ահա կան եւ ուրիշ զրոյներ, որոնք խորհրդային երկրում արդէն երկար տարիներ գրել ու հրատարակուել են, եղել հանրածանօթ գէմքեր: Բայց բուսական է, որ նրանք արտասահման վազիւելու գիմուած ներկայացնեն՝ անմիջապէս հանուած են բոլոր ցուցակներից:

Նրանց անունը չբանում է գրականութեան պատմութիւնից, առանց մէկ տողով յիշատակուելու, զրբերը հեռացուած են գրութարաններից: Գրաքննութեան նպատակն է ընթերցողներէ յիշողութիւնից տնճտացնել «գոտապարտուած» զրոյների անունն ու վաստակը:

«Արտադաղթած» զրոյներէ դարսդան շատ ուրիշ պարագաներից մէկն է, որը ցոյց է տալիս խորհրդային գրաքննական քաղաքականութեան մի շարք առանձնատուութիւնները: Այսօրիսի առանձնատուութիւններ կարելի է տեսնել նաեւ բուն խորհրդային երկրում աղբուած ու ճշտմիջոյններէ ենթարկուած (հայածուած կամ բնաջնուած) բողմութիւ զրոյների հանդէպ ցուցարկուող վերաբերմունքի մէջ, վերջին երեսամեակում, անցեալը չհաշուած:

«Արտադաղթած», հոսածուած ու գոհուած զրոյների ճակատագրից անկախ, խորհրդային գրաքննութեան մըլասական թիրախներ են հանդիսանում չենց բոն խորհրդային զգաւտուով ապրող» զրոյները: Կարելի է վաստահօլէն սնդել, որ խորհրդային իրաքանիւր զրոյի առնուաքն մի որեւէ երկ անպաման այս կամ այն շախմով ինքաթիրուել է գրաքննութեան կողմից, առանց այդ բոլոր երկերը մէկ առ մէկ ստուգելու: Պորճրդային գրաքննութեան հետազոտութեամբ զբաղուող արտասահմանեան գրականագէտները սովորաբար համեմատուած են նոյն երկի տարբեր հրատարակութիւններ, որուելու համար, թէ ո՛ր դէպքում ինչն ինչի է վերածուել: Այդպիսով ճշգում են գրաքննական միջամտութիւնների շափերը, բնոյթն ու ուղղութիւնը: Ընդումին նկատել են ստնրուած բնագրով եւ թարգմանաբար տարբեր երկրներում հրատարակուած երկերը, իբրեւ բնորոշ օրինակ:

Այսպէս է, որ վերլուծուած են, ասենք, վենիսիսի Կաւերինի «Մի հրատարակալմի վերը» (1925 թ.) վէպը, Մոֆիա Պարնոկի բանաստեղծութիւնները, Լէոնիդ Լէոնովի «Գուղը» (1928 թ.) վէպը, Ալեքսէյ Տոյտոթի «Տառապալմի» օղիմերով» երկը, Կանտանսին Պաուստոմ-

կու երկերը, Ալեքսանդր Փաղէեի «Յրիտմասարդ գլխարդիան»ն, Պետր Վերջիգորայի «Մաքուր խնայի մարդիկ» փաստագրական վէպը, — գրաքննական մակարակով, Գրաքննութեան համար գործելու լայն ասպարէզ բացից մանաւանդ ապաստանեացումը, քանի որ ահագին բան պիտի փոխուէր: Նոյն Վերջիգորայի մօտ Ստալինը, օրինակ, փոխարինուել է «կուսակցութեամբ», «գերագոյն գլխաւոր հրատարակութեամբ», «խորհուրդով», եւ այլնով: Ն. Պողոթինի Ստալինի անձի վրայ չի մնուած թատերախաղերը «չըլուած» են Լենինի կողմը: Ս. Միխայլովի, Վ. Լեբզեւ-Կուլաշի, Ա. Սուրկովի ստանաւորները իր տեսակի թթու են գրուած՝ ստալինապաշտական տողերի համար: Այդ ձեւով նոյնիսկ համախորհրդային իրավունքներն են կորել, թողնելով միայն երաժշտութիւնը, իբրեւ ինչպէս: Յայտնի են գրաքննական միջամտութիւնների անհամար օրինակներ միւս բոլոր խորհրդային գրողներին նկատմամբ:

Խորհրդային գրաքննութիւնը իրեն ազատ է զգում նաեւ նախախորհրդային գեղարուեստական կամ յարակից գրականութեան հանդէպ: Այդ կողմից հետազոտողները վկայակոչում են Պ. Դոստոեւսկու, Ա. Չեխովի, Ա. Պուշկինի երկերը: Տեղին է նշել, որ նախախորհրդային գրողների գործածած «կուսուած» բառի մեծատուր փոխարինում է, իբրեւ կանոն, փոքրատուրով, ամէնուրեք երեսւրով «աստուած» ձեւով:

Գրաքննական միջամտութիւններից դերը չեն մնում եւ օտար լեզուներից թարգմանուող գեղարուեստական եւ այլ կարգի երկերը: Ամէնից առաջ ջոկուում են նոյնիսկ աննշան հեղինակների յատկապէս այն երկերը, որտեղ արեւմտեան աշխարհը դիտուում է հակակադիստիկական, քննադատական, խորհրդային կադապարներին մօտ գոնրուող գիրքերից: Իսկ եթէ որեւէ բազմալեզու շատարակարգ չի համապատասխանում խորհրդային գրաքննիչների պատկերացումներին, միջամտութիւնն անխուսափելի է, թէեւ դա հակասում է «Հե-

ղինակային իրաւունքների համար՝ ութեանական գործակալութեան» հրամցրած օրինակելի պայմանագրերի տարին ու դրույթներին: Հայնրիխ Բեօլի «Խմբակար տիկնոջ հետ» երկից ջնջուել են աւելի քան 500 տողեր, միւս «ճշգրտմանը» չհաշուած: Էրենսա Հեմինգուէյի «Ալմ համար եմ զօղանգում գանգիրը» ծանօթ վէպում գանուել են աւելի քան քսան միջամտութիւններ (ջնջուել են նրա դժուարութիւնները՝ իսպանական կոմունիստները դաժանութիւններից): Գրաքննական միջամտութիւններ են հաստատուել նաեւ Կ. Յուկոյանի, Մ. Վալդերի, Ֆ. Է. Դեգեն-արաւի, Գ. Գրասի, Գ. Վարուաֆի, Հ. Կապակի, Կ. Վոնգուուրի, Ս. Բեկետի, Զ. Ստալբեկի, Գ. Վիդալի, Գ. Գրինի, Սըր Զ. Մոուլթի, Կ. Ամիսի, Ա. Սիլիուոյի, Զ. Եսնի, Ա. Միլլերի, Զ. Հելլերի, Վ. Դապորտի թարգմանուած երկերում (յիշուածները միայն դերմանալիք են ամերիկեան ու անգլիագիր գրողներ են):

5.

Խորհրդային իրականութեան շրջանակում, այնտեղ տիրող գրաքննութիւնը կարող է եւ առաջին հայեալներից տարօրինակ շթուալ ու յատկապէս ծանր սպաւորութիւն շթուել, քանի որ լիովին համապատասխանում է գոյութիւն ունեցող վարչակարգի ոգուն: Գրաքննութիւնը մերժելուց առաջ պէտք է մերժել ամբողջ վարչակարգը, շրջադուել նրա օրինականութիւնը: Բայց քանի որ ոչ ոք ստանձնարար այդքան ուժ չունի, մարդիկ ստիպուած են թարգմանում են թէ՛ վարչակարգի եւ թէ՛ նրա հարազատ գուտակ գրաքննութեան պատճառած լիւանքներին: Կարծես թէ դա վերուտ աահմանւած անդառնալի ճակատագիր է եւ ուրիշ ելք չի կարող լինել, գրանից ազատւելու համար:

Մինչդեռ քաններող դարի եւ առաջաւոր ժողովուրդների ժողովրդավարական նուաճումների գիրքերից գիտելով՝ խորհրդային գրաքննութիւնը մի

ուղղակի ժամանակավորէպ, հրէշային իրողութիւն է: Իրանով պարզապէս ծագրի է ենթարկուած մտածող մարդն ինքը, նրա խիղճն ու բանականութիւնը, նողկուտը կողուծը, մտքղկային ու քաղաքացրիական պատասխանատու թեան զգացումը: Այդ ամէնը զոհարելու է բռնակալութեան ինքնանպատակ գոյութեանը, նրա տեսականացմանն ու յաւակնութիւններին:

Այդ, խորհրդային երկրում էս մարդիկ բնութեան ծնունդ են, օժտուած լինելով բնատուր յատկութիւններով: Այսքի չի ծնել եւ չի կարող ծնել կուսակցութիւնն ու տիրող իշխանութիւնը: Այդ իշխանութիւնը միայն շահագործում է բնութեան պատրաստի գաւազներին ու իր կամքը փորձում պարտադրել նրանց, բայց անկարող է, վերջին հաշուով, բուն կեանքի օրէնքները փոխարինել արհեստական օրէնքներով ու կառավարուող գապանակներով: Այնպէս որ, մարդու եւ իշխանութեան հակամարտութիւնը անխուստի է: Առաւել եւս՝ մտածող մարդկանց ու զրոյների եւ ինքնակոչ իշխանութեան հակամարտութիւնը:

Եթէ ոչ-գրողները անհանդուրժելի են համարում խորհրդային գրաքննութեան գոյութիւնը, ապա է՛լ աւելի անզիջում պէտք է լինեն նրա ճիւղանկրում թղթատարող գրողներն իրենք: Եւ զժուարչէ պատկերացնել, որ իրականում մշտական յարուածութիւն կայ խորհրդային գրաքննութեան համարողի ու ստեղծարար մտաւորականութեան միջեւ: Ժիզդ է, այդ մասին բարձրաձայն րուտքներ չեն լուսւած, ոչինչ չի գրուած: Արտագրուում՝ ամէն ինչ խաղաղ ու առնակուն է: Բայց այդ խաղաղութիւնը միանգամայն խարտակի է, քանի որ չի արտացոյցում կեանքի ներքին իրականութիւնը:

Եւ այդ խաղաղութեան պատճառները հակամարտ են: Իւրաքանչիւր գրող ամէն լինելով կախուած է գրաքննութեան, այսինքն՝ իշխանութեան կամքից, իր անձով, քնտանիքով ու ասպարէզով: Եւ այդ պայմաններում ինքնին անիմաստ է թուած սրեւէ վերին ուժի մարտահրաւիր

կարգաւը: Իսկ կազմակերպուելով հաւաքական ուժ ստեղծելն էլ անկարելի է զործնական առումով: Գրողն ուզում է ըրել, ընթերցողներ ունենալ, հանրային դեր կատարել: Բայց ճանապարհ բացելը միայն իշխանութիւնից է կախուած: Բախուել այդ իշխանութեանը՝ նշանակում է զրկուել ունեցած բառացիորէն ամէն ինչից: Անհատ մարդիկ կարող են Լրբեմն նահանջել առանց բախուելու: Բայց բախուելուց յետոյ այնու նահանջ չկայ, այլ՝ միայն կործանում: Եթէ անհասանելիք «իրենց բախտից» զրկուելու զնով կարող են լուել, գրական ամբողջ հասարակայնութիւնը չի կարող այդպիսի ճանապարհներով: Քանզի, ինչպիսիք էլ որ լինեն պայմանները, զրոյների ու գրականութեան գոյութիւնն անհրաժեշտ է:

Այդուհանդերձ, յետստալինեան ժամանակաշրջանի խմորումները, ինքնահրատարակչական շարժման ծաւալումը Եւ այլ զործոններ հող ստեղծեցին, որպէսզի հրապարակային բողոքներ ձեւակերպուեն նաեւ զրաքննութեան բուն գոյութեանն ու նրա հասցրած վնասներէ զէմ:

Այդ ասպարէզում առաջնութեան գափնին պատկանում է Ալեքսանդր Սոլժենիցինին: Նա՛ է, որ 1967 թ. Մախիսի 15ին, իր բաժնի ելոյթի փոխարէն, մի նամակ յղեց գրողների համամիութենական էրդ համագումարին, նրա նախորհակին: Նամակից բազմացուած 250 օրինակներ ուղարկուեցին համագումարի պատուիրակներին ու թերթերի խմբարդութիւններին: Նա զրում էր, որ երկրի սահմանադրութեան մէջ գրաքննութիւնը բաղակայում է, հետեւապէս դա ապօրինի է Եւ պէտք է վերացուի, քանի որ խանգարում է գրականութեան զարգացմանը: Նամակը լայն արձագանգ գտաւ ամբողջ ազտու աշխարհում: Խորհրդային ճգ զլրողներ մի հաւաքական նամակով ձայնակցելին Սոլժենիցինին: Տասնիհինգ գրողներ գրեցին անհատական նամակներ նոյն խմատով: Եղան եւ ուրիշ՝ այլևայլ մակարդակի արձագանգներ, որոնք ցոյց տուին, թէ իրականում ի՛նչ միջնորոտ է տիրում գրողների մօտ: Ի հարկէ,

Սովետների նամակը անտեսուեց տիրոջ իշխանութիւնների կողմից, մամուլը չօժանդակեց ու չարձագանգեց: Իայց հենց նոյնիսկ Համագումարում՝ Օլէս Կոնչաբի եւ Կոնստանտին Սիմոնովի ելույթներում, եզոփպոսեան եզանակով, նըմանապէս սուր դժգոհութիւն յայտնուեց գրաքննութիւնից: Դա վկայում էր, թէ գրողները համար որքան թանկ էր գրաքննութիւնից ազատուելու գաղափարը եւ որքան անկարելի այդ գաղափարի իրագործումը:

Արձանագրուած են մի շարք, թէեւ սակաւազէլ պարագաներ, երբ գրողները փորձել են իրենց ուժերով եւ գրաքննութիւնը ուղղակի չըջանցելով որեւէ հրատարակութիւն գլուխ բերել: Ի հարկէ, նրանք ի վերջոյ «մերկացուել», դատապարտուել եւ տուժել են, բայց գրանից առաջ զոնէ համարձակութիւն են ունեցել իրենց կամքով շարժուելու:

Այդպիսի հրատարակութիւններից մէկը 1956 թուականի «Լիտերատուրնայա Մասկուս» (Գրական Մասկուս) ալմանան էր (8 հոգուց կազմուած խմբագրական մարմնով): Այնուհ, միւս երկերի շարքում, զետեղուած էին նաեւ Մարի Եշեղլովի, Լիդիա Չուկովսկայի եւ Ալեքսանդր Կրոնի հակագրաքննական յօդուածները: Միւսը՝ 1961ի «Թերքիկ»-նիք Տարուսից» ժողովածուն էր: Իսկ լայն հասարակութեանը անձանօթ է ժընում Մոսկուայի Գրական Ինստիտուտի շրջանակում 1956ին ստեղծուած «Օրիտասարդութեան համադար» (Վիմատիպ), առանց գրաքննիչների մասնակցութեան: Լոյս է տեսել երկու համար: Խրուչչովի հան ժամանակաշրջանի հետ վերջ դասն եւ այդպիսի կիսաօրինական հրատարակութիւնները՝ սպաղրական միջոցներով: 1979ին Նոյնպիսի մէկ սերիչ փորձ եղաւ, ի դէմս «Մետրապոլ» ժողովածուի, որը կազմուել էր Գրողների միութեան թոյլաբաւութեամբ, բայց առանց գրաքննութեան կամ այլ նման հաստատութեան տեղեկութեան: Ինչպէս յայտնի է, այդ փորձը եւս ձախողուեց, իսկ փորձողները տուժեցին՝ իւրաքանչիւրն իր շափով ու հերթին: Ժողովածուն լոյս տեսաւ միայն

արտասահմանում, խորհրդային 23 գրողների մասնակցութեամբ:

Գրաքննութեան հետեւանքները խորհրդային երկրում մշակուող գրականութեան համար, ի հարկէ, գրական չեն: Շատ գրողներ երկար տարիներով չեն կարողանում հրատարակել որեւէ էական բան, յաճախ չեն էլ կարող գրել: Գրուածից շատ բան կորչում է. կամ հեղինակները, ոտտիկանութեան վախից, իրենք են փչացնում իրենց գրածը կամ էլ ոտտիկանութիւնն է բռնագրաւում գրուածը: Գրական որեւէ լուրջ գործ հրատարակուելիս, ընթերցողները չեն կարող փոտահ լինել, թէ դա համապատասխանում է գրողի սկզբնական պատկերացումներին, քանի որ կամայական փոփոխութիւնները միշտ էլ հնարաւոր են:

Բացի այդ, Խորհրդային Միութեան մէջ ապրող որոշ ժողովուրդների լեզուով գրականութիւն է մշակուել ու մշակուում ո՛չ միայն հայրենիքում, այլեւ՝ արտասահմանում: Դա վերաբերում է թէ՛ ուսանողներին, թէ՛ բալթեան ազգերին, թէ՛ սկրանիայիներին եւ թէ՛ հայերի ու ուրիշների: Արդ, գրաքննութեան մեղքով ճնշուած են այդ ազգերի գրականութիւնները, քանի որ արհեստական պատ է զարում ներսի ու դրսի միջեւ, իեղաթիւրում է բուն ազգային գրականութիւնների կնքնութիւնը, իրական կացութիւնն ու որովանդակութիւնը:

Գրականութեան պատմութեանը վերաբերող խորհրդային իւրաքանչիւր հրատարակութիւն լեցուն է մեծ ու փոքր կեղծիքներով: Դա այդպէս է, որովհետեւ հենց պետական սկզբունքով մերժուում է «օրեկտիվիզմ» (առարկայականութեան, անաչառութեան) պահանջը, իբրեւ «բուրժուական նախապաշարմունք»: Մերժուում է նաեւ շարադրանքի դիտականութեան գրոյթը, դա փոխարինելով «կուսակցականութեամբ»:

Ի հարկէ, գրաքննութիւնը չի կարող ամէն ինչ քառացիօրէն իր կամքին ենթարկել, որովհետեւ դա իրականում անկարելի է, ոչ թէ գրաքննութեան համեստութեան, զիջողամտութեան, այլ պարզապէս գործնական անկարողութեան հե-

տեւանքով, Եթէ միայն պարտադիր գրա-
 քննութեան ուզած գրականութիւն մշակ-
 ւելու լինէր, այդ դէպքում պէտք է որ
 փակուէին բոլոր տպարանները, գոյրոց-
 ներն ու զկուտուրական հիմնարկու-
 թիւնները: Բայց այդպիսի բան չկայ, չի
 կարող երբեւէ լինել, ուստի՝ գրականու-
 թիւնը, այսպէս թէ այնպէս, շարունակ-
 ւում է, ճիշդ է՝ անհամար գուներով, կո-
 բուստներով, նուստացումներով, բայց
 եւ այնպէս շարունակւում է, տեղ-տեղ
 նոյնիսկ փայտատակելով ու աշխարհին
 վերելից նայելով:

Ժողովրդավարական երկրներում իւ-
 բաքանչիւր անկախ հրատարակչութիւն
 ու խմբագրութիւն, անասրակոյս, ունի
 իր գիծն ու ըմբռնումը, կարող է ստացած
 որեւէ երկ ընդունել կամ մերժել: Բայց
 զբանց կողքին կան բաղձաթիւ ուրիշ եւ

ձևադրերի սպասող հրատարակչութիւն-
 ներ, որոնք կարելի է ընտրել ըստ յար-
 մարութեան ու դիմել նրանց: Յորհրդա-
 յին երկրում այդպիսի ընտրութեան հը-
 նարաւորութիւն չկայ, քանի որ ումէն
 ինչ միևնոյն գրաքննութեանն է հպա-
 տակւում, որն անողոքօտար խեղդում է
 ինքնուրոյն ու ազատ մտքի սառն մի ծիւ:
 Կամաւ որ ու ողջմիտ ինքնազբաքննու-
 թիւնը յատուկ է հասունութեան տէր իւ-
 բաքանչիւր հեղինակի, որը եւ սովորա-
 բար նպաստում է ենթակազի ինքնասր-
 տայայտմանը: Մինչդեռ պարտադիր ու
 պետական, ընդհանուր անկող գրաքննու-
 թիւնը պարզ յանդադործութիւն է, գրա-
 կանութեան թշնամի, մտքի դերեզմա-
 նախոր, եւ չի կարող ընդունելի համար-
 ւել որեւէ զարգացած ու ինքնիշխան հա-
 սարակութեան համար:

23. 10. 1985 թ.
 Միւնխէն

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

ՄԵՐ ԿՈՆԽՈՋԱԿԱՆ

ԿԱՆԱՁ ԱՐՏԵՐՈՒՄ...

Հնդհանրապետ ամբողջատիրական եւ մասնաւորապէս խորհրդային եւ նոյնօրինակ վարչակարգերու տակ կիրարկուող գրաքննութեան մասին ընթերցողը որոշ գաղափար մը ունէր, բայց մեզմէ ոչ ոք հաւանաբար ծանօթ էր տուեալ հարցին այն ծայրերուն, որոնք առարկայական քննութեամբ մը պարզուած են մեր աշխատակիցին ուսումնասիրութեան մէջ:

Ճանաչումներու ընդարձակ մթերքի մը վրայ խարսխուած գրութիւն է Լետն Մկրտչեանի այս յօդուածը, որ ընդգրկած է երեւոյթը իբրեւ ամբողջութիւն եւ խուսափած է, խուսափած ըլլալ կը թուի օրինակներէն՝ հաւանաբար հաշտի առած անոնց հեղձուցիչ առատութիւնը:

Արդարեւ, Ստալինի պատկազերծումին հետեւած ձիւնհալի օրերուն եւ ձիւնհալէն ետք այդ մարզին մէջ արձանագրուեցան անհամար փաստեր, որոնցմէ կարգ մը նմոշներ հաղորդուած են «Բազին»ի ընթերցողներուն: Անոնց շարքին՝ պզտիկ օրինակ մը եւս, այս անգամ բանաստեղծ Գեղամ Սարեանի գրչով սեւագրուած, 1971ին հրատարակ հանուած իր երկերուն Դ. հատորին մէջ, երգահան Աշոտ Սաթեանի առիթով.

«...Բայց պատահում էր, որ արդէն պատրաստ եւ ջազմափա անգամ կատարուած երգերի խօսքերի մէջ փոփոխութիւններ էին մտցնում զանազան պատճառներ, որոնց գործը չէր բնաւ այդպիսի գործով վրադրուելը:

«Այդպիսի փորձանքի մատուցեց «Արդեօք գիտե՞ս դու» երգը: Այդ այն օրերուն է եղել, երբ «Արարատեան հովտի երգեր» վոկալ սիմֆոնիկ շարքը առաջադրելիս են եղել պետական մրցանակի: Եւ ահա մրցանակի ուղարկողներէս մէկը մտածել է գաղափարապէս աւելի կայուն դարձնել այդ շարքը, որի երկրորդ երգը սկսում էր հետեւեալ չորս տողով.

Արդեօք գիտե՞ս դու, որ չեմ մոռացել,
 Ամէն-ամէն օր կարօտում եմ ես,
 Հոգիս բեւատր թոչուն է դարձել
 Եւ հեռուներում որոնում է քեզ:

«Այդ պզտիկ «խմբագրի» առաջարկով քառատողի վերջին երկու տողը դարձնում են.

Մեր կոխոզական կանաչ դաշտերում
 Եւ հեռուներում որոնում եմ քեզ:

«Ես այդ մասին իմացայ այն ժամանակ միայն, երբ Աշոտ Սաթեանը արձանացել էր պետական մրցանակի եւ երբ այդ առթիւ ուստիոյով հաղորդում էին «Արարատեան հովտի երգեր» շարքը:

«Ես իսկոյն հեռախօսով կապուեցի Սաթեանի հետ:

«— Ո՞վ է աղաւաղել երգը, — հարցրի ես:

«— Արուեստի վարչութեան առաջարկով է արուած: Թէ ո՞վ է արել, չեմ կարող տեսլ, — ասաց Սաթեանը:

«Այդպէս էլ չսասց այդ զաղտնիքը: Տասը տարի տեսց այդ աղաւաղու-
մը, մինչեւ որ նոր ձայնագրութեամբ շտկեցինք այդ սխալը» (249-250):

Ասոնք ցաւեր են հարկաւ ու դիրին չէ մոռնալ անոնց չափելի եւ ան-
չափելի հետեւանքները, բայց հայ մարդուն մտքին մէջ գրաքննութիւն բառին
մղձաւանջները առաւելաբար կապուած է թրքական ու մասնատրապէս համիտ-
եան տասնամեակներուն, որոնց մասին հետաքրքրական փորձառութիւններ
կը պատմէ Հրաչեայ Աճառեան, Գառնիկ Ստեփանեանի գրչով:

Պօսեց իր ուսուցիչներէց Ե. Տէմիրճեպաշեանի մասին, ասաց թէ նա
է իրեն մղել զէպի սանկըրտը, Հեղկական փրկիսոփայութիւնը եւ եղել է իր
առաջին դնաւատողներէց մէկը մամուլում. յօրուած է սպազորել աւարտման
տարում: Յետոյ արդէն խօսեց նրա Հիւանդութեան մասին, ասաց թէ Հո-
ղեկան խախտման նշանները նկատելի էին զեռեւս 1890ական թուականները
սկզբներին: Պօսեց Մելքոն Կիւրճեանի մասին, որը Երուսաղէմում սպազոր-
ւած հայ եկեղեցու պատմութիւնը թեւի տակ, լեզուի փոխարէն փաստօրէն
հայ ժողովրդի պատմութիւն է դասուանդել զազանի, որ եթէ իմանային,
կ'աքորէին:

— Առհասարակ մեր Կենտրոնական վարժարանի մթնոլորտը շատ էր
հայրենասիրական: Առաջ, երբ դպրոցի տնօրէնն էր Մինաս Զերագը, հա-
միդեան խտուութիւնները դեռ ծայրայեղ աստիճանի չէին հասել, իսկ Մոս-
տիչեանի շրջանում լրտեսները վրտում էին շրջապատում: Նոյնիսկ այդ պայ-
մաններում մեր ուսուցիչները գտել էին ձեւեր՝ հայրենասիրական գաղա-
փարներ հաղորդելու մեզ: Ստեղծուել էր եզոպոսեան մի լեզու, որը օգտա-
գործում էին շատերը, իսկ թուրքական գրաքննութիւնը գլխի չէր ընկնում:
Այսպէս, արդելուած տնուներ էին Արտիեանն ու Նալբանդեանը. մինչդեռ
մամուլը համարձակօրէն խտում էր նրանց մասին, միայն թէ Արտիեանին
կոչում էր Քանաքեոցի Ռաչատուր, Նալբանդեանին՝ Պայտարեան Միքայէլ:
Գրաքննիչները դարակում պահուող արդելուած տնուներէր ցուցակում ոչ
Պայտարեան կար, ոչ Քանաքեոցի Ռաչատուր: Տխմար գրաքննիչի ինչ ինչի
բանն էր իմանալ՝ թէ դրանք Հենց Արտիեանն ու Նալբանդեանն էին: Արբա-
համ Այվազեանը իր «Շար հայ կինսագրութեանց» գրքում յատուկ դիւրիններ
յատկացրեց Նալբանդեանին ու Արտիեանին նոյն այդ եղանակով եւ ոչ ոք էլ
չիմացաւ: Բայց ամէնից համարձակ քայլը կատարեց Սմբատ Դաւթեանը:
Դու գիտե՞ս նրան, — հարցրեց:

— Կարգացել եմ. եղել է ուսուցիչ, բռնասէր, Հեղինակել է դասա-
գրքեր:

— Այո, բայց նրա ամենամեծ գործը 1890ական թուականներին, այ-
սինքն համիդեան բռնութիւնների ամենախտազոյն շրջանում Մ. Նալբանդ-
եանի յայտնի «Ազատութիւն» բանաստեղծութիւնը սպազորել ու մեր սեղան-
ներին դնելն էր:

— Ի՞նչ էք ասում:

— Հապա՞, 1880 թուականից սկսած այդ բանաստեղծութիւնը խտու-
արդելուած էր: Բայց ազատարարձ երիտասարդութիւնը ուզում էր ինչ գնով
լինի ձեռք բերել այն եւ տրտազրել, անդիւր անել, գաղտնի երգել: Եւ ան-
Դաւթեանը գտնում է այն տարածելու շատ իւրայատուկ ձեւ: Իր հրատա-

բակտ «Փռուց» ընթերցարանում զետեղում է այդ բանաստեղծութիւնը՝ ամէնուր ձգտաւորութիւնն բառը փոխելով ձախատութիւն»։ ով կարող էր արդեւ աշխատանքի զովքը։

Քարճրեալն Աստուած այն օրից
Երբ հանեցաւ շունչ փչել
Իմ հազամիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել։
Եւ անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարգեցի
Եւ իմ անգոր թեւերով
Աշխատութիւն գրկեցի։

Սեւոյ՛յ։

— Սեւոյ մենք այդ դասագիրքը պահելու եւ օգտագործելու իրաւունք ունէինք։ Այժմ կարիք չկար արտագրել «Ազատութիւնը»։ Վերջնում ամէնուր Աշխատութիւն բառը դարձնում էինք ազատութիւն եւ մեր տրամադրութեան տակ ունենում էինք Նայրանդեանի հայրենասիրական բանաստեղծութիւնը՝ տպագրուած։

— Հրաշալի գիւտ, — ասացի, չկարողանալով զսպել զարմանքս։
էլի նման շատ բաներ պատմեց։ Դրանք ինձ համար չափազանց հետաքրքրական էին, քանի որ պատգամ էի արեւմտահայ գրականութեամբ, հասարակական մտքի պատմութեամբ։

Այդ օրը հա պատմեց մի քանի մանրագէտ արիւմտահայ գրողների կեանքից։ Մէկն էմ յիշում. վերաբերում էր Ձիֆթէ Սարաֆին, որը եղել էր նրա զարգացմանը Կենտրոնական վարժարանում։ Առաջին անգամ այդ օրը սովորեցի, թէ Ձիֆթէ Սարաֆի բուն ազգանունը եղել է Արիստղոմեան։ Պատմեց, թէ ինչպէս Ձիֆթէ Սարաֆը յափշտակուել է հարեմի թուրք գեղեցկուհիներից մէկի կողմից, տարուել հարեմ, կոնացի շրջով պահուել, ապա մի կերպ ազատուել մահուան սպառնալիքի տակ՝ որ զաղտնի պահի արկածը, Երիտասարդ պրոզը չի կարողացել այդ պայմանը պահել, վախից հոգեկան որոշ խախտում է ստացել։

Այդ առիթով նա շատ մանրամասն պատմեց, թէ ջրիտոնեայ տղամարդկանց որւոր ինչպէս էին կատարում հարեմի կանայք, պայմանական ինչպիսի երկիմաստ բառերով էին հասկացնում միմեանց կանայք ու տղամարդիկ իրենց մտադրութիւնը։

Յաջորդ օրը Հանրային գրադարանում պտայ թէ՛ Այվազեանի գիրքը եւ թէ՛ Ս. Դաւթեանի «Փռուց»ը։ Միանգամայն ճիշդ էին նրա յիշողութիւնները։ Իսկոյն լուսանկարել տուի երկուսն էլ։ Դրանք ես օգտագործեցի հենց Աճատեանի կենդանութեանը լոյս տեսած իմ ընդարձակ յօդուածում գրապայքարի մասին, իսկ հետագայում արդէն՝ լուսանկարներով՝ «Նայրանդեանի «Ազատութիւն» բանաստեղծութեան հարիւրամեայ կեանքը» խորագրով յօդուածում։

Առաջինը երբ կարդաց, ուրախացաւ, ասաց.

— Քող պատմութիւնը չմոռանայ գաւառացի այդ ազնիւ ուսուցչին՝ Դաւթեանին։

ԱՂԱԿՈՒՄԵՐԱՅԻՆ ԼՍԻՆԵՐ

ՆԱԽԱԲԵԿԵԱԼ ՆԱՍԱՍԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ



28 Փետրուար 1965ին, զորավարական խորարկէջ մը կ'ընկղմէր Գարիպիական ծովուն մէջ: Անձնակազմէն նաւաստի մը՝ Լուի Ալեքանանդր Վելասքո, տառը որ շարունակ լատի մը վրայ ծփալէ հագ, տամանիկ պայծանձերու տակ կը յաջողէր գոյատևել և ափ հասնիլ՝ արժանաւարով հերոսի ընդունելութեան: Վելասքո կ'առաջադէր իր պատմութիւնը ղեկավար Պոկոթայի մէջ լոյս տեսնող Է՛լ Իսփիէրաստըք օրաթերթին: Թերթին կողմէ այս գործը կը յանձնուէր երիտասարդ լրագրողի մը, որ լուրջ 120 ժամ խօսիչ և հարցադրիչ հաջ նաւաստին, 14 յաջորդական թերթանկերով լոյս կ'ընծայէր Հնարականիկայ ճառատիքի պատմութիւնը:

Պատմութիւնը մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէր Գործարարի մէջ: Օրաթերթին ապագանակը կը կրկնապատկուէր:

Մական, նաւաստիին պատմութիւնէն բխող որոշ մանրամասնութիւններ անտարբէր կոչութիւններ կը ստեղծէին իշխանութեան համար: Օրինակ, խորունկէջի կամրջակը ինձողուած էր անտիկական լուսազէ մեքենաներով և սպառողական այլ ապրանքներով, որոնք սը-օրինական և-

զանազան Գործարար կը տարուէին...: Նաւաստին անմիջապէս ծովային ուժերէն զուլտը կը զրուէր, օրաթերթը կը փակուէր և երիտասարդ թղթակիրը կ'աջտարուէր հայրենիքէն:

Այս բոլորը հարաւ ամերիկեան բարձրուն մէջ սոփազանց կրնան նկատուիլ: Արտատողը այն էր սակայն, որ երիտասարդ թղթակիրը կուզէր կարծիա Մարտի կը կոչուէր, որ տարիներ հաջ մեծ համարի և Նորգլիան զրահան՝, ցանակին պէտք արժանանար:

Տուեալ ճիշդագրական ստաբիլութեան մէջ մ'ընկ իսկուէս կը յաջողէր երիտասարդ նաւաստի մտ թին մէջ մտնել և, անոյ զոյտաւարութի պայքարը պատկերագրել: Երբ Հնարականիկայ ճառատիքի պատմութիւնը հատուրով սպաննելով լոյս կը տեսնուի 1950ին, Մարտից շու կը յայտնուէր, որ գործը կը սպառուէր ո՛չ թէ ներկայացուցած արժէքին համար, այլ՝ հեղինակի անունին...:

Այս օրերուն հտուպարտի վրայ է Հնարականիկայ ճառատիքի...: անդիւրէն թարգմանութիւնը, 12: էջ հարուող հատուրի մը մէջ, և այլևս Մարտիցի զրահան ժառանգութեան մէջ անբաժանելի մասը կը կազմէ:

«ՀԱՐՍԻ ՓՈՒՆԸ»

Հայաստանի պատմութեան պետական թանգարանի ազգային տարազներու հաւաքածոնքը անողջացած են նոր նմուշներով, որոնց մէջ իր յատուկ տեղը ունի ՀՀարսի փունջը: ՀՀարսի փունջը հարկական զարգարուեստի հետզայն զոհարներէն է, ազգաբնական և պատմական հազուագիւտ արժէքներէն, որ զործնուած է նախաքրիստոնէական շրջանին սկիզբի:

ՀՀարսի փունջը հին հաւաստիքներու ժամանակաշրջանի խորհրդանշաններէն է: Բառաբանական տունաներու համաձայն զայն պատրաստած են ժայռից, հարանցու աղբիւններու համար: Պատկերութեան Երանապատմութիւնէն հաջ զայն նորահարսին դուրսը դրած է հարանաքոյցը: Աղջային զարգարուեստի այս նմուշը միշտ աղբի զարկած է ինքնուրուի գեղեցկութեան և զարդարուեստի այլապատմութեան: Բացի իլիքրուստիական համաշափ մեկերու կիրարկումէն, անոր յարկուածքին մէջ օդապարտուած են թանկագին քարեր, ոսկիքի, արծաթաթիւ, ուլունքներ, մետաքսէ փունջերով ձեւաւորուած են ծայրերը: Դարկու ընթացքին հետաւարով իր նախնական իմաստէն, իրրեւ նախապատմական սոփարութեան յիշատակ՝ անիկա փոխանցուած է սերունդէ սերունդ և հասած մեղի:

ԱՐԲԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԺԱՊԱԻԷՆԸ ԿԸ ԳՆԱՀԱՏՈՒԻ ԳՆԱՏԱՏՈՒ ՄԷՋ...

Հոկտեմբեր ամսուան ընթացքին, Մոնթեալի մէջ տեղի ունեցած է երիտասարդ շարժապատկերի միջազգային 14րդ փառատանը, որուն ընթացքին ցուցադրուած է Արբի Յովհաննիսեանի «Իմ ինչպէս մտաւ անդամագործ դազնոցը կը սրվորի կիսանքիս մէջ» ժապատկերը:

Այս առթիւ, տեղւոյն «Լը Տըվուար» թերթի Հոկտեմբեր 25ի թիւին մէջ, գրառատային յազուած մը ստորագրած է Ֆրանսիոյ Լորանտո, որ ի միջի այլոց ըսած է.

«Քառասունին մեծ անկախութեանցով ըստուած ժապատկերը չեմ, որ ցարդ ինձի գոնացում պատճառեցին: Այսպէս, երբէք չէի իմացած հայազգի Արբի Յովհաննիսեանի անունը, որուն «Քննչական մտք» անդամագործ դազնոցը կը սփռուի կիսանքիս մէջ» ժապատկերը խոսկիլ եւ կը մայիլ, առանձնապէս անդամագործութիւն մըն է: Ինչպէ՞ս կարելի է մկարագրել կորստած արժայութեան մը պէտք հայրենիքի մը շարք գրախոսութեանը եւ երաժշտութեանը կատարած այն խաղաղ, հայրենապաշտ արարած այն շարժումները, կատարածն աւ տարագրութիւնը եւ հասկանալի եւ շրջանէն գտնուած այն խաղաղութիւնը (...): Այսպիսի արուեստի մը մկատմանը կարելի է գրառուել ըլլալ կամ ոչ, թայց, ամէն պարագայի, ֆրանսայի մէջ պատրաստուած այդ ժապատկերը իր արդար տեղը ունի երիտասարդ շարժապատկերի փառատանին մէջ»:

1942ին Նոր Ֆուլա (Բրան) քնած Արբի Յովհաննիսեան թաւական կարեւոր վաստակ մը ունի թատերական թէ շարժապատկերային կառուածներու մէջ: Յարչ նկարահանած է «Փարվանա» (թաղմանկար), «Լեբէս», որ ամուսնուկցալ թաղէս» (գիտատանկար), «Արիւրը» եւ «Թէ ինչպէս մորը...» (գեղարուեստական ժապատկերներ):

...ԵՒ ՀԱՅ ԲԵՄԱԳԻՉՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԻՒՆԲԸ

Հոս-Անճեղը սարդ Հայ երիտասարդ րեժիսորներու աւարտելու վրայ են երեք նոր ժապատկերներ, զորս կը նախատեսեն ժխանաբար ներկայացնել 1986ի Մայիսին:

Արա Մածունեանի «Վարդապոյն փիղը», Սիլվիա Արթիսեանի «Սպասելով Մարիին» եւ Նիկոլ Գնչեանի «Պիլիի գիշերը» արդիւնք են րեժիսորներու անհատական եւ հասարական ջանքերուն: Միջին տեսողութեամբ երեք ժապատկերները արտադրուած են UCLA-ի շարժապատկերի եւ

պատկերասփիւռի դպրոցին մէջ, որ այս մարտին մէջ ուխտարհի ամէնէն հռչակաւոր հաստատութիւններէն մէկն է:

«Այս բացառիկ գործակցութիւնը սկիզբն է հուսալից զանազան աշխատանքներու, յայտնած է երիտասարդ րեժիսորներէն մէկը»:

«Այս գործակցութիւնը արդիւնաւէտ եղաւ, որով եւ րեժիսորները»:

ԱԼԻՍԻԱ ԹԵՐԶԵԱՆԻ ՎԵՐԶԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Արժանթինեան Երաժշտական Խորհուրդը, որ մէկ մասնակցութեամբ է Ինտերնալ Նյաժաական Միջազգային Մուսուլի (Կնդրոնտանդին Փարիզ) և Միջամերիկեան Երաժշտութեան Խորհուրդին, վերջինս գումարուած իր ընդհանուր ժողովի տեսարանը րեժիսոր է վարչական Խորհուրդի նոր անդամները՝ 1985-1989 շրջանին համար: Երգահան-Լըմաթապիտուհի Ալիսիա Թերզեան, իրեն ինչպէս յայտնեց Միջազգային Արժանապատեան Կոնգրեսին-ու շինարարութեան, միաժամանակեանք րեժիսոր է Արժանթինեան Երաժշտական Խորհուրդի նախագահ:

ՅԱԿՈՒ ՕՐՄԱՆՃԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

Վերջերս, Պալմարիոյ Հանրապետութեան պետական Խորհուրդը բարձրագոյն շահնամով պարգևատրուած է պուլիտարեան ժառանգական Յակոբ Օրմանճեանը, իր ճնշողուն համակցին աւելնով, Հայ գրականութեանը պուլիտար գրասէր հասարակութեան նախաձեռնելու իր մեծ վարձարկին համար:

Տասնամեակէ մը ի վեր Յ. Օրմանճեան կը զբաղէ Հայ գրականութեան ժառանգ րեժիսոր գործերու Թարգմանութեամբ: Ան Թարգմանած է դասական եւ ժամանակակից գրողներէ բաղմաթիւ գործեր:

ՊԵՂՈՒՄՆԵՐԸ Կ'ԱՐԳԻՒՆԱՌՈՐՈՒՆ

Այսպիսի յոս, Եամիրամի գերիզմանտներէ Թաղմաններէ մէկուն մէջ, պեղումներու ընթացքին, վերջերս գտնուած են սարգիսնէ (յարգի ժուր մը) եւ կրկնական յախճապակի՞ գաղտնատուած ժաննակներ:

Մեն հետաքրքրութեան արժեքուցած են ըլլա-

նի կամ ցույն տեսող հմայիլները, որոնք կր խորհրդանշեն պաղաքեբուծիւնը եւ իր ազատութիւնը զարգանալու ժամանակներուն ուշադրութիւնը գրաւած սեւ խեցեղէն մը:

Շամիրամի գերեզմանառդին ունի 200 հեկտար արածութիւն, ուր պեղումներ կը կատարէ հետազոտութեան եւ ազգագրութեան ազգային հիմնարկի արշաւախումբը, զնկաւարութեամբ պատմական գիտութիւններու թեկնածու Յակոբ Սիմոնեանի:

Պեղումներու արշաւախումբի ղեկավար տղթ. Ստեփան Եսայանի վկայութեամբ՝ այս դատածներէն իւրաքանչիւրը անգին արժէք կը ներկայացընէ գիտութեան:

ՈՒՔՐԱՆԻՈՅ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՈՂ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՒ ՄԱՍԻՆ

...ՆԱԵՆ՝ ԳԻՒԵԿՈՆԻՒ ՄԷՋ

Աշտարակի մտերը գտնուող Դիգեկոնց բլուրը, որ Ք. Ա. Ն. դարուն եղած է ուրարտական բնակավայր, հնայեաններու խոր հետազոտութեան արժանացած պատմական հարուստ շրջան մըն է: Յատուկ կարեւորութիւն կը ներկայացընեն մա՛նաւանդ հիւսիսային սարալանջին կառուցած պալատական հինգ համալիրները, որոնցմէ միայն մէկը ցարդ ամբողջութեամբ պահպան է, իսկ երկրորդը՝ մասամբ: Պեղումները ապացուցած են, որ այս կառոյցները գոյատեւած են 90-100 արի եւ կործանուած՝ շրջան ներխուժած նուաճողներու կողմէ: Պահպանուած են այրուած դերաններ, հրդեհներու հետքեր, փլած սանիքներ:

Հետախուզողներուն յատուկ ուշադրութիւնը գրաւած է 500 քառ. մեթր արածութեամբ արւաւորիչ սրահ մը:

Գտնուած են պաշտամունքային արձաններով զարդարուած շինութիւններ, որոնք ցոյց կու տան, որ պաշտամունքային կեանքը ընթացած է բնական կերպով՝ իր յատուկ ծէսերով եւ արարողութիւններով: Գտնուած են նաեւ հետազոտութեան ասարկանքներ, յիմնապահիչ սկահակներ ու սրուակներ, ինքնիշխան սպորկ սափորներ, գուաթներ եւ սպիտակ պատրաստուած իրեր:

Ուզունիոյ պետական պատկերասփիւրջ, նոյնիման 1985ի վերջին օրերուն, պատկերասփուած է յայտադրեանու շարք մը՝ մեծ ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկիի մասին, պատրաստուած՝ ծովանկարիչի ծննդավայր Քէդուսիս քաղաքի պատկերասրահին կողմէ: Առաջին հազարդամիկ մէջ խօսուած է Այվազովսկիի կեանքին ու ստեղծագործութեանց, իրիմէ երկրամասին եւ, մա՛նաւանդ՝ Քէդուսիս քաղաքին անոր կատարած ծառայութեանց մասին: Յետակադէս հանգամանքին նշուած են անոր սկզբնական շրջանի ստեղծագործութիւնները, երբ Փէթերսպոլի գեղարուեստից ակադեմիան ուսարտելով, Այվազովսկիին շնորհուած է ոսկէ մեդալ, որ միաժամանակ իրաւունք կու տար իրեն ակադեմիայի հաշուան ղէպի արտասահման ստեղծագործական ուղեւորութիւն կատարելու:

1840ի Սեպտեմբերին, 23ամեայ նկարիչ արդէն Հոսթ կը գտնուէր: Այդ շրջանին ան պատրաստած էր ընտանի ծովանցը, լուսնակ զինքնորով հռչակուար կատար: Անպիտոցի նշանաւոր գեղանկարիչ Ուիլիամ Բըւելըր, տեսնելով այդ նկարը, հիացական հետեւեալ տողերը գրած է. «Ներսէ՛ ինձի, մեծ նկարիչ, որ ես սխալեցայ հրկարը իրելու իրականութիւնը ընդունելով: Բայց քաղցրօք զիս հմայեց եւ ես գմայեցայ: Քու տաղանդը մեծ է ու հզօր, արտվեստե ամբ մեր ընդամ ազիրըր համարք է»:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՈՅՍ ՏԻՍԱԻ

ԴՐՕՇԱԿ

ՕՐԳԱՆ Հ. Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1905, 1906, 1907

ՏԱՐԻՆԵՐՈՒ ՎԵՐԿՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

- Անձնանուններու, տեղանուններու եւ հաւաքական անուններու ցանկերով,
- Վերլուծական բովանդակութեամբ

692 մեծադիր էջ, լատորակ թուղթ, գեղակապմ

Համազգայինի Վահէ Արքեան տպարան, Պէրոպ 1986:

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 20 Լ. Ո.

Տարեկան բաժնեգին 200 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 20 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتمين كارنيك قزائجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTSIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԻՐԳԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban
Tel. 296898

آذار ۱۹۸۶

digitised by A.R.A.R.@